ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1896 Թ.

Բ. ԳՐՔԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԼԻՆՀԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ

ՎԷՊ ՊԵՍՏԱԼՕՑՑՈՒ

ԹԱՐԳՄԱՆՉԻՑ

Հայ ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման նը-պաստող անհրաժեշտ միջոցներից մէկն է նաև բարոյական եւ մարդասիրական գաղափարներ պարունակող գրքերի ընթերցանութիւնը։

Այս տեսակ գրքերից է հանճարեղ Պեստալոցցու «Լինհարդ եւ Գերտրուդ» աշխարհահռչակ դասական գրուածքը, որի ճակատին մեծ մանկավարժը դրոշմել է «մի գիրք ժողովրդի համար» —„ein Buch für das Volk“։

Այս վէպը լոյս տեսաւ 1781 թ., պատճառ եղաւ Պեստալոցցու հռչակին և կարճ միջոցում թարգմանուեցաւ ու հրատարակուեցաւ բոլոր Եւրոպական լեզուներով։

Գիւղական կեանքից վերցրած այս վէպի մէջ գլխաւոր հերոսն է Գերտրուդը՝ բարեսիրտ և թուլաբարոյ Լինհարդ որմնադրի կինը։ Ընտանեկան դաստիարակութեան և մայրական պարտաւորութեանց իդէալը Պեստալոցցին մարմնացրել է Գերտրուդի անձնաւորութեամբ։

Սոյն երկի մէջ Պեստալոցցին ներկայացնում է նաև մի ամբողջ ծրագիր գիւղական ժողովրդի տնտեսական դրութեան բարւոքման։ Գերտրուդի տնարարութիւնն է առաջարկում նա բոլորին՝ իբրև օրինակելի և այդպիսի դաստիարակութիւն է ցանկանում իր ժողովրդի համար. նոյն իսկ գիւղական դպրոց հիմնարկելիս Գերտրուդի խորհուրդն են հարցնում։ Գերտրուդի ընտանեկան դաստիարակութիւնն այդ գրուածքի մէջ նկարագրուած հանգամանքների նպաստաւոր կողմն է. դրա դէմ կանգնած է իր զզուելի կողմերով՝ վերին աստիճանի ապականուած՝ գիւղական համայնքը։

Պեստալոցցին գիւղի բարեացակամ տէր և իշխան Արնէրի ձեռքով ծրագիրներ է մշակում այդ ապականութեան

առաջն առնելու։ Մանրամասն նկարագրում է նոյնպէս գիւղացիների յարաբերութիւնը դէպ իրենց տանուտէրն ու կալուածատէրը։ Գինետուն պահող և խարդախ նպատակների ծառայող տանուտէրի տիպը շատ նման է մեր գիւղերի սովորական «քեռխուա»-ների, «գոլովին»-ների, «սուդեա»-ների, «գղիր»-ների և «միկիտան Սաքո»-ների պէս անձնաւորութեանց. իսկ երիտասարդ և համակրելի կալուածատիրոջ վարմունքը կարող է բարի օրինակ լինել մեր գաւառական «աղա»-ների համար։

«Լինհարդ և Գերտրուդի հրատարակութիւնը, ասում է ինքը Պեստալոցցին, ընդհանուր և մեծ հետաքրքրութիւն առաջացրեց թէ իմ հայրենիքում—Զուիցերիայում—և թէ Գերմանիայում. շուտով բոլոր թերթերն ու ժամանակագրութիւններն սկսեցին գովաբանել այդ երկը. բայց ինձ համար անսպասելին այն էր, որ Բերն քաղաքի տնտեսական ընկերութիւնն այդ գրքի լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ՝ շնորհակալութեան թուղթ գրեց ինձ և պարգևեց ընկերութեան ոսկեայ մեծ շքադրամը...» (Պեստալոցցի. «Կարապի Երգ»—Schwanengesang—էջ 275)։

«Լինհարդ և Գերտրուդ»-ի առաջին հրատարակութեան յառաջաբանում հեղինակն այդ գրքի նպատակը հետևեալ կերպով է որոշում. «ինչ որ ես այստեղ պատմում եմ, տեսել ու լսել եմ գործնական առօրեայ կեանքում. իմ անձնական կարծիքները չեմ արտայայտում, այլ այն, ինչ որ ղգում, դատում, հաւատում, խօսում ու ձեռնարկում է ժողովուրդը։ Եթէ իմ դիտողութիւնները ճիշտ են, այս գիրքն ընդունելութիւն կը գտնի ժողովրդի մէջ ապրողների ու գործողների կողմից. իսկ եթէ ամբողջն իմ երևակայութեան ծնունդ է միայն, այդ դէպքում այս գրուածքն էլ կիրակնօրեայ քարոզների նման՝ արդէն երկուշաբթի մոռացուած կլինի»։

Երկրորդ հրատարակութեան յառաջաբանում Պեստալոցցին ասում է. «իմ նպատակն էր՝ նպաստել, որ ժողովրդի դաստիարակութիւնը տեղի ունենայ համեմատ նրա իսկական դրութեան և բնական հանգամանքների. այդ իմ առաջին խօսքն էր, որ ուղղեցի գիւղական լքեալ ու աղքատ ժողովրդի սրտին. այդ իմ առաջին կոչն էր՝ ուղղուած նը-

րանց, որոնց սրտին մօտ է լքեալ ու թշուառ ժողովուրդը. այդ իմ առաջին խօսքն էր՝ ուղղուած մայրերին...»։

«Ես տեսնում էի ժողովրդի թշուառութիւնը», ասում է Պեստալոցցին մի այլ տեղ.—«թէ ի՞նչպէս է Գերտրուդն իր զաւակներին ուսուցանում». էջ. 5.—«իմ ցանկութիւնը և նպատակն էր միայն ժողովրդի փրկութիւնը. այն ժողովրդի, որին սիրում եմ և թշուառ եմ գտնում, որովհետև ապրել եմ նրա հետ և կրել նրա ցաւերն ու վշտերը»։

Այս անպաճոյճ տողերը բնորոշում են «Լինհարդ և Գերտրուդ»-ի ոգին։

Պեստալոցցու երկար ու տաղնապալի կեանքը—նա ծնուեց 1746 թ. Ցիւրիխում և վախճանուեցաւ 1827 թ. Բրուգում.—լի է սիրով. նա սիրում էր ժողովրդին և անդադար ձգտում էր թշուառներին օգնութեան հասնել. դէպի աղքատ ու լքեալ ժողովուրդը տածած սէրը կիրք էր դարձել Պեստալոցցու սրտում։

«Պեստալոցցու «Լինհարդ և Գերտրուդը», ասում է գերմանական անուանի հայրենասէր և փիլիսոփայ Փիխտէն, մեծ ազդեցութիւն ունեցաւ ժամանակակիցների վրայ. այդ հրոյ կայծը բորբոքեց հազարաւոր մարդկանց սիրտը բարոյական և մարդասիրական զգացմունքներով»։

Գերմանական ժողովրդի կողմից իդեալացրած մի այլ անձնաւորութիւն՝ որդեսէր, հայրենասէր և բարոյականութեան տիպար ներկայացնող արքայազն Եղիսաբէթ թագուհին —Königin Luise— հետևեալն է գրում. «Այժմ ես կարդում եմ Պեստալոցցու «Լինհարդ և Գերտրուդը». ես ինձ շատ լաւ եմ զգում այդ զուիցերական գիւղի մէջ. եթէ ազատ լինէի, իսկոյն կառք կնստէի, Պեստալոցցու մօտ կերթայի և արտասուալի աչքերով նրա ձեռքը սեղմելով՝ շնորհակալութիւն կյայտնէի. յանուն մարդկութեան շնորհակալ եմ նրանից»։

Հայ մայրե՛ր, կարդացէ՛ք «Լինհարդ և Գերտրուդը», հետևեցէ՛ք Գերտրուդի օրինակին։

Գերտրուդի զգացմունքներով ոգևորուեցէ՛ք և նոյնը ներշնչեցէ՛ք ձեր սիրասուն զաւակներին. սի՜րտ է պէտք հայ ժողովրդին, սի՜րտ։ Մուրացածոյ և փայլող խաբուսիկ արտաքինը չէ՛ ոգևորում ժողովրդին. չոր ու ցամաք

և նոյն իսկ խելքք դատողութիւնը բաւական չէ. զգացմունքն է հարկաւոր։

Հայ ժողովրդի փրկութեան խարիսխն ընտանի՛քն է. հայ ընտանիքի խարիսխը դո՛ւք էք, հայ մայրե՛ր. ուրախացէ՛ք և վշտացէ՛ք Գերտրուդի ուրախութիւններով ու վշտերով և ձեր փայփայած քնքոյշ զաւակներին սնուցէ՛ք Գերտրուդի բարոյական ստինքով.

Խելքով, սրտով եւ զգացմունքով տոգորուած նոր սերունդ է հարկաւոր հայ ժողովրդին։

Հայ մայրե՛ր, Գերտրուդի սրտով ու մտքով կրթեցէք այդ նոր հայ սերունդը։



ԼԻՆՀԱՐԴ ԵՒ ԳԵՐՏՐՈՒԴ

ՎԷՊ ՊԵՍՏԱԼՕՅՑՈՒ

(Թարգմ. ըն. Հս. Յարութիւնեանց)

1.

ՄԻ ՄԱՐԴ, ՈՐ ԲԱՐԵՍԻՐՏ Է, ԲԱՑՑ ԵՒ ԱՑՆՊԷՍ ԱՆԲԱՂԴԱՑՆՈՒՄ Է ԻՐ ԿՆՈՋՆ ԵՒ ՈՐԴՈՑԸ։

Բօննալ գիւղում բնակւում էր Լինհարդ անունով մի որմնադիր։ Նրա կինը կոչւում էր Գերտրուդ։ Լինհարդն ունէր եօթը զաւակ և լաւ աշխատանք. Նրա թերութիւնն այն էր, որ պանդոկում շատ անմիտ էր վարւում և յաճախ թոյլ տալիս, որ իրեն մոլորեցնեն։ Իսկ մեր գիւղում կան այնպիսի խորամանկներ, որ պատուաւոր և պարզամիտ անձանց վրայ հսկելով՝ իւրաքանչիւր յաջող դիպուածում նրանց գրպանից փող են դուրս գչում և դրանով ապրում։ Սրանք ճանաչում էին բարի Լինհարդին և խմելու միջոցին յաճախ մոլորեցնելով նրան՝ հետը թուղթ էին խաղում և յափշտակում նրա քրտնքի վաստակը։ Սակայն Լինհարդն ամեն անգամ, առաւօտները, զղջում էր իր արածի վրայ և խղճահարւում՝ տեսնելով որ Գերտրուդն և իր զաւակները հացի պակասութիւն են կրում. նա դողում, լաց էր լինում, աչերը գետնին սևեռում և արցունքը թագցնում։

Գերտրուդը գիւղի ամենալաւ կինն էր, սակայն իր մատաղ զաւակների հետ միասին՝ իրենց խրճիթից զրկուելու և անջատուած, մերժուած, ամենածանր թշուառութեան մէջ ընկղմելու վտանգի մէջ էր, որովհետև Լինհարդը չէր կարողանում գինուց ձեռք վերցնել։

Գերտրուդը տեսնում էր մօտակայ վտանգն և սրտով զգացուած էր. թէ իրենց մարգագետնից թարմ խոտ բերելիս, թէ տախտակամածի վրայից չոր խոտ վերցնելիս, թէ կաթը մաքուր ամաններում ածելիս, միշտ երկիւղ էր ազդում նրա վրայ այն միտքը, որ իրենց մարգագետինը, խոտի դեզն ու խրճիթի կէսը շուտով իրենցից կխլեն. և երբ զա-

ւակները շրջապատում էին նրան և գիրկն ընկնում, առաւել ևս տխրում էր և արտասուքներ էին գլորւում նրա այտերից։

Մինչ այժմ նա կարողանում էր իր գաղտնի լացը մանուկներից ծածկել, բայց վերջին Զատկի չորեքշաբթի օրը, որովհետև իր ամուսինն երկար ժամանակ տուն չեկաւ, նրա վիշտն այնչափ սաստկացաւ, որ երեխաները նկատեցին նրա արտասուքը։ Ա՜խ, մա՛յրիկ, աղաղակեցին նրանք միաբերան, դու լալիս ե՞ս և ընկան նրա գիրկը։ Նրանց մարմնի իւրաքանչիւր շարժողութիւնն արտայայտում էր հոգս և երկիւղ։ Երկչոտ լացով, խորին, տխուր զարմանքով և անմռունչ արցունքով շրջապատեցին նրանք իրենց մօրը. նոյն իսկ մօր ձեռքի ծծկերն արտայայտեց ցաւի մի այնպիսի զգայմունք, որ ցայժմ անյայտ էր նրան։ Ծծկեր երեխայի հոգսի և երկիւղի առաջին արտայայտութիւնը, նրա անշարժ աչքը, որ առաջին անգամն էր այդպէս սուր կերպով և առանց ծիծաղի նայում, այնպէս վրդովեցին մօր սիրտը, որ նրա լացը դարձաւ այժմ աղաղակ. բոլոր մանուկներն ու ծծկերը լալիս էին մօր հետ միասին և հէնց այս սարսափելի լաց ու կոծի միջոցին Լինհարդը բացեց տան դուռը։

Գերտրուդն երեսի վրայ ընկած էր իր անկողնում. նա չլսեց դրան բացուիլը և չտեսաւ ներս մտնողին։ Մանուկները նոյնպէս չնկատեցին. նրանք նայում էին միայն իրենց ողբացող մօրն և կախ էին ընկել նրա ձեռքերի, պարանոցի ու զգեստների վրայից։ Այսպէս գտաւ նրանց Լինհարդը։

Աստուած տեսնում է թշուառների արցունքը և վերջ դնում նրանց ցաւին։

Գերտրուդն իր արցունքի մէջ գտաւ Աստուծոյ ողորմութիւնը։ Աստուծոյ գթութիւնը լերեց Լինհարդին ակաւնատես լինելու այս տեսարանին, որ խոլը թափանցեց նրա հոգին ու ցնցեց ամբողջ մարմինը։ Մահուան գոյն ստացաւ նրա դէմքը և ընկճուած հազիւ կարողացաւ ասել. Տէ՛ր իմ՝ Աստուած, այս ի՞նչ է։—Այժմ միայն տեսաւ նրան մայրը, այժմ միայն նկատեցին նրան մանուկները և դագարեցին լալուց։ Մայրի՛կ, հայրիկն այստեղ է, գոչեցին երեխաները միաբերան և նոյն իսկ ծծկերն այլ ևս չէր լալիս։ Ինչպէս որ հանդարտւում է անտառի առուակը կամ աւերող բոցը,

այնպէս էլ կորչում է սարսափը և դառնում հանդարտ, մտածելու հոգս։

Գերտրուդը սիրում էր Լինհարդին և նրա ներկայութիւնը, նոյն իսկ ամենամեծ դժբաղդութեան մէջ, սփոփանք էր նրա համար. Լինհարդն էլ ազատուեց իր առաջին սարսափից։

Գե՛րտրուդ, ի՞նչն է այս աղէտի առիթը, որի մէջ գըտնում եմ քեզ, ասաց նա։

Ո՜հ, սիրելիդ իմ, պատասխանեց Գերտրուդը, տխուր հոգսերը սքողում են սիրտս և երբ դու տանը չես, խորին տխրութիւնն առաւել ևս պատում է ինձ։

Գե՛րտրուդ, պատասխանեց Լինհարդը, ես գիտե՞մ թէ ինչու ես լալիս...։

Գերտրուդը հեռացրեց մանուկներին. Լինհարդը ծածկեց իր դէմքը նրա գրկի մէջ և այլ ևս չէր կարողանում խօսել։ Գերտրուդը նոյնպէս լռեց մի վայրկեան և ցաւակցութեամբ թեքուեցաւ իր ամուսնու վրայ, որ դեռ ևս լալիս էր նրա գրկում։ Այդ միջոցին Գերտրուդը ժողովեց իր բոլոր ուժերը և արիացաւ՝ հասկացնելու նրան, որ ապագայում այլ ևս իր զաւակներին այս դժբաղդութեան և թշուառութեան մէջ չձգէ։—Գերտրուդն երկիւղած էր և հաւատում էր Աստծուն. խօսելուց առաջ նա աղօթեց իր ամուսնու և զաւակների համար և նրա սիրտն ակներև ուրախացաւ. ապա ասաց. Լի՛նհարդ, յոյսդ դիր Աստուծոյ ողորմութեան վրայ և քաջացի՛ր պարտքդ կատարելու։

Ո՜հ, Գերտրո՛ւդ, Գերտրո՛ւդ, ասում էր Լինհարդը և լալիս, նրա արցունքը հոսում էր գետի նման։

Ո՜վ սիրելիդ իմ, արիացի՛ր, ասում էր Գերտրուդը, հաւատա՛ երկնային Աստծուն և այդպէս ամեն ինչ կրկին լաւ կլինի։ Շատ ցաւում եմ, որ քեզ լաց պատճառեցի. սերով կցանկայի ամեն տառապանք ծածկել քեզնից, դու գիտես, որ քեզ հետ լինելով՝ ցամաք հաց ու ջրով էլ գոհ եմ. իսկ իմ կէս գիշերուայ խաղաղ ժամերի աշխատանքը բաւական է զաւակներիս և քեզ համար։ Սակայն, սիրելիս, եթէ հոգսերս քեզնից ծածկէի, զաւակներիս մայրը և քո հաւատարիմ ամուսինը չէի լինի։ Թանկագին Լինհարդ, դեռ ևս մեր զաւակների սիրտը լի է շնորհակալութեամբ և սի-

րով դէպի մեզ, սակայն եթէ մենք իսկական ծնողներ չմնանք, այն ժամանակ նրանց սէրն ու բարի սիրտը, որի վրայ եմ դրել իմ ամբողջ յոյսը, պէտք է անպատճառ անհետանան։ Եւ մտածի՛ր, սիրելիս, մտածիր թէ ի՞նչ կլինէր այն ժամանակ քո դրութիւնը, երբ քո Նիկլասը, որ հէնց այժմից սիրով ազատութեան և սեպհական օջաղի մասին է խօսում, առանց խրճիթի մնալով՝ ծառա՞յ դառնար։ Լինհա՛րդ, եթէ նա և մեր միւս բոլոր սիրելիները, մեր սխալմունքի պատճառով աղքատանային, իրենց սրտում շնորհակալ չլինէին մեզնից, այլ լային իրենց ծնողների վրայ, կարո՞ղ էիր ապրել, Լինհարդ, և տեսնել թէ ի՞նչպէս քո Նիկլասը, Եօնասը, Լիզելին և Աննելին—ո՜հ Աստուած, օտարների սեղանից հաց են մուրում—ես կմեռնէի, եթէ այդ տեսնէի։ —Այսպէս խօսեց Գերտրուդը և արտասուքը հոսեց նրա այտերի վրայից։

Ո՛չ պակաս լալիս էր և Լինհարդը։ Ի՞նչ պիտի անեմ ես, դժբա՜ղդս։ Ի՞նչ կարող եմ անել։ Ես առաւել թշուառ եմ, քան թէ դու կարծում ես։ Ո՜հ, Գերտրո՛ւդ, Գերտրո՛ւդ։—Նա լռեց դարձեալ, կցեց ձեռքերը և լալիս էր ահաբեկ։

—Մի՛ վհատուիր, սիրելիս, խօսի՛ր, որ խորհրդակցենք և օգնենք մեզ։

2.

ՄԻ ԿԻՆ, ՈՐ ՎՃԻՌՆԵՐ Է ԴՆՈՒՄ, ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ԳՏՆՈՒՄ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՏ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴ։

Գերտրո՛ւդ, Գերտրո՛ւդ, սիրտս ցաւում է, որ թշուառութիւնս պատմեմ քեզ և հոգսերդ աւելացնեմ, սակայն պէտք է անեմ այդ։

Տանուտէր Հումելին դեռ ևս պարտ եմ երեսուն գուլդէն, իսկ նա, ինչպէս գիտես, ո՛չ թէ մարդ, այլ մի շուն է իր պարտապանների վերաբերմամբ։ Ա՜խ, երանի թէ կեանքումս տեսած չլինէի նրան։ Եթէ նրա պանդոկը չեմ գընում, սպառնում է ինձ օրէնքի անունով, իսկ եթէ գնում եմ, քրտինքիս վաստակն ընկնում է նրա ճանկը։ Այո՛, Գերտրուդ, այդ է մեր թշուառութեան աղբիւրը։

Սիրելիս, պատասխանեց Գերտրուդը, չե՞ս կարող կա-
լուածատէր Արների մօտ գնալ։ Դու գիտես, թէ ինչպէ՞ս
բոլոր այրիներն և որբերը գովում են նրան. կարծեմ
որ նա քեզ մի խորհուրդ կտայ և կպաշտպանէ այդ մար-
դու դէմ։

Գերտրուդ, պատասխանեց Լինհարդը, չեմ կարող,
ի՞նչ պէտք է ասեմ տանուտէրի դէմ, որ հաղար ու մի բա-
ներ է խօսում, համարձակ և խորամանկ է և հարիւրաւ-
որ ընկերներ ու միջոցներ ունի մի աղքատ մարդու այն-
պէս անուանարկելու իշխանութեան առաջ, որ այլ ևս
նրան չլսեն։

Գերտրուդ։ Սիրելիս, ցայժմ ես ոչ մի իշխանաւորի
հետ չեմ խօսել, բայց եթէ կարիքն և թշուառութիւնն ինձ նրա
մօտ տանէին, գիտեմ, ես կարող կլինէի ճշմարտութիւնն
ուղղակի մարդու երեսին ասել։ Թանկագին բարեկամս մի՛ վա-
խենար, մտածիր իմ ու զաւակներիդ մասին և գնա՛։

Գերտրուդ, ասաց Լինհարդը, չեմ կարող, չեմ հա-
մարձակւում, ես անմեղ չեմ։ Տանուտէրը սառնասրտութեամբ
ամբողջ գիւղը վկայ կբերէ, որ ես մի անպիտան տխմար
եմ։ Գերտրուդ, ես անմեղ չեմ. ի՞նչ կարող եմ ասել։ Ոչ
ոք չի ասի, թէ ամեն բանում նա՛ ինձ մոլորեցրեց։ Գեր-
տրուդ, եթէ կարողանա՞յի, եթէ համարձակո՞ւէի, ի՞նչպէս
սիրով կցանկանայի։ Բայց եթէ անեմ և չյաջողի, գիտե՞ս
թէ ինչպէ՞ս վրէժխնդիր կլինի նա։

Գերտրուդ։ Բայց եթէ լռես էլ, նա անպատճառ քեզ
կկործանէ։ Լինհարդ, մտածի՛ր զաւակներիդ մասին և գնա՛։
Մեր սրտի այս անհանգստութեանը պէտք է վերջ դրուի, —
գնա, ապա թէ ոչ ես կերթամ։

Լինհարդ։ Գերտրուդ, չեմ համարձակւում, եթէ
կարող ես, ա՜խ Աստուած, Գերտրուդ, եթէ կարող ես,
գնա՛ շուտով Արների մօտ և ասա՛ նրան ամեն բան։

Այո՛, կերթամ, ասաց նա։

Այդ գիշերն ոչ մի ժամ չքնեց Գերտրուդը. սա-
կայն գիշերն աղօթքով անցկացնելով՝ նա առաւել զօ-
րացաւ և համարձակութիւն ստացաւ Արների, գիւղի տի-
րոջ մօտ գնալու։

Եւ առաւօտեան վաղ նա գրկեց վարդի նման փթթող

ծծկերին, և գնաց կալուածատիրոջ՝ գիւղից երկու ժամ հեռու գտնուող դղեակը։

Արները նստած էր դղեակի դրան առաջ, լուռենու տակ, երբ Գերտրուդը մօտեցաւ նրան։ Նա տեսաւ Գերտրուդին, գրկի ծծկերին և նկատեց նրա դէմքի վրայ թախծութիւն, տառապանք ու ցամաքած արտասուներ։

Ի՞նչ ես կամենում, աղջիկս, ո՞վ ես դու, ասաց նա այնպէս սիրալի կերպով, որ Գերտրուդը սիրտ առաւ խօսելու։

Ես Գերտրուդն եմ, ասաց նա, Բօննալի որմնադիր Լինհարդի կինը։

Դու արիաջան կին ես, ասաց Արները, քո մանուկները զանազանւում են գիւղի բոլոր մանուկներից. նրանք առաւել բարեկիրթ ու քաղաքավարի են, քան միւս բոլոր երեխաները, և երևում է, որ աւելի լաւ են կերակրւում՝ թէև լսում եմ, որ դուք շատ աղքատ էք։—Ի՞նչ ես կամենում, աղջիկս։

Տէր, իմ ամուսինը վաղուց երեսուն գուլդէն է պարտական տանուտէր Հումելին, որ մի անգութ մարդ է։ Նա մոլորեցնում է Լինհարդին՝ սովորեցնելով թղթախաղի ու ամեն տեսակ վատնութեան. և որովհետև ամուսինս նրանից վախենում է, չի կարող նրա պանդոկը չգնալ, թէև համարեա իւրաքանչիւր օր իր վաստակն ու իր զաւակների բերանի հացն այնտեղ է թողնում։ Տէր, մենք եօթը մանկահաս զաւակներ ունինք և առանց օգնութեան ու խորհրդի անկարելի է, որ մուրացկաններ չդառնանք։ Ես գիտեմ, որ դուք այրիներին և որբերին կարեկցում էք, այդ պատճառով համարձակուեցայ ձեզ մօտ գալ և մեր անբաղդութիւնը ձեզ ասել։ Ես հետս բերել եմ զաւակներիս համար խնայած բոլոր փողը ձեզ մօտ թողնելու և խնդրում եմ, որ դուք այնպիսի մի կարգադրութիւն անէք, որ տանուտէրը, մինչև իր պարտքը վճարենք, իմ ամուսնուն չը-հարստահարէ և չչարչարէ։

Արները վաղուց կասկածում էր Հումելի վրայ։ Նա հասկացաւ իսկոյն այս գանգատի ճշմարտութիւնը և խնդրի խելացիութիւնը։ Վերցրեց իր առաջը դրած մի բաժակ թէյն և ասաց. Գերտրուդ, դու անօթի ես, խմիր այս թէյն և սիրուն մանկանդ էլ տուր այս կաթից։

Գերտրուդը կարմրեց։ Այս հայրական գորովն այնպէս շարժեց նրա սիրտը, որ արտասուքը չկարողացաւ պահել։

Արները պատմել տուեց նրան տանուտէրի և նրա ընկերակիցների արարքները և շատ տարիների կարիքն ու հոգացողութիւնը և լսում էր ուշադրութեամբ։ Ապա հարցրեց. Գերտրուդ, ի՞նչպէս կարողացար այդչափ կարիքի ժամանակ զաւակներիդ համար խնայած դրամը պահել։

Գերտրուդը պատասխանեց. շատ դժուար էր, տէ՛ր, սակայն ես համարում էի, թէ այդ փողն իմս չէ և իբրև թէ մի մեռնող վերջին շնչի հետ տուել էր ինձ, իր զաւակների համար պահելու։ Այդպէս, համարեա՛ թէ ճիշտ այդպէս էի նկատում ես։ Ամենախիստ կարիքի ժամանակ, երբ ստիպուած էի լինում այդ փողից զաւակներիս համար հաց գնել, էլ հանգստութիւն չունէի, մինչև որ գիշերուայ աշխատանքիս վաստակով պակասը չլրացնէի։

Ամեն ժամանակ կարելի՞ էր լինում այդ, Գերտրո՛ւդ, հարցրեց Արները։

Տէ՛ր, երբ մարդ մի որևէ բանի հաստատ կերպով է ձեռնարկում, այդ աւելի յաջողւում է նրան, քան թէ մարդ կարծում է և ամենամեծ թշուառութեան ժամանակ, երբ մարդ կարիքի և հացի համար ազնուաբար է աշխատում, Աստուած օգնում է, աւելի, քան թէ դուք ձեր փառքով կարող էք հաւատալ և ըմբռնել։

Արները գթաշարժուած էր այս կնոջ անմեղութեամբ և առաքինութեամբ, սակայն շարունակեց. Գերտրո՛ւդ, ո՞ւր է խնայած փողդ։

Գերտրուդն Արների սեղանի վրայ դրեց եօթը հատ մաքուր և փոքրիկ կապոցներ, որոնցից իւրաքանչիւրի վրայ դրուած էին տոմսակներ. տոմսակների վրայ գրուած էր թէ ո՞ր կապոցն ումն է պատկանում և թէ կարիքի ժամանակ Գերտրուդն իւրաքանչիւրից ո՞րքան էր վերցրել և կրկին տեղը դրել։ Արներն ուշադրութեամբ կարդում էր այդ տոմսակները։ Գերտրուդը տեսաւ այդ և կարմրելով ասաց. այս թղթերը պէտք է վերցրած լինէի, տէ՛ր։

Արները ժպտաց և շարունակում էր կարդալ, սակայն Գերտրուդը կանգնած էր ամօթով. նկատելի էր նրա սրտի

յուզումը, որովհետև նա համեստ ու խոնարհ էր և ամենափոքր ցուցամոլութիւնից վշտացող։

Արները տեսաւ նրա անհանգստութիւնը և զգաց այն անմեղութեան վսեմութիւնը, որ ամօթով է մնում, երբ նրա առաքինութիւնն և իմաստութիւնը նկատւում է։ Նա վճռեց աւելի շնորհ անել այդ կնոջը, քան խնդրել էր և յոյս ունէր, որովհետև ճանաչեց նրա արժանաւորութիւնը և գիտէր, որ հազար կանանցից ոչ մէկը չի կարող նրան նմանուիլ։ Արներն իր կողմից իւրաքանչիւր կապոցի վրայ աւելացրեց մի բան և ասաց. երեխաներիդ համար խնայած փողը յետ տա՛ր դարձեալ, Գերտրո՛ւդ, ես իմ գրպանից երեսուն գուլդէն մի կողմն եմ դնում տանուտէրի համար, մինչև որ ձեր պարտքը վճարէ՛ք։ — Գնա՛ տուն այժմ, վաղն առանց այդ էլ պէտք է գիւղը գամ, այնտեղ կ'հոգամ, որ դու ապահով լինիս Հումելից։

Գերտրուդն ուրախութիւնից չէր կարողանում խօսել. նա հազիւ կարողացաւ կակազելով ասել. «Աստուած վարձատրէ՛ ձեզ, տէ՛ր»։ Ապա տուն վերադարձաւ մխիթարուած սրտով՝ ծծկեր երեխան ձեռքին։ Նա շտապում էր, աղօթում և շնորհակալ լինում Աստուծուց երկար ճանապարհի վրայ՝ շնորհակալութեան և յուսոյ արտասուները հոսում էին նրա աչքերից, մինչև որ իր խրճիթը հասաւ։

Լինհարդը տեսաւ նրա գալը և հէնց աչքերիցը նկատեց նրա սրտի սփոփանքը։ Արդէն եկա՞ր, ասաց՝ դիմելով նրան, բանդ յաջո՞ղ գնաց Արների մօտ։ —

Ո՞րտեղից իմացար, ասաց Գերտրուդը. — այդ նկատում եմ հէնց դէմքիդ վրայ, բարի հրե՞շտակս, դու չե՛ս կարող կեղծել։

Ճիշտ որ չեմ կարող, ասաց Գերտրուդը և եթէ կարողանայի էլ, չէի ցանկանայ այս բարի համբաւը քեզնից մի վայրկեան ևս ծածկել, Լի՛նհարդ։ Ապա պատմեց նրան Արների բարութիւնը, թէ ի՞նչպէս նա իր խօսքերին հաւատ ընծայեց և օգնութիւն խոստացաւ։ Յետոյ տուեց մանուկներին Արների ընծաներն և համբուրեց իւրաքանչիւրին այնպիսի ջերմ սիրով, որ վաղուց արդէն տեղի չէր ունեցել և ասաց. աղօթեցէ՛ք ամեն օր Արների երջանկութեան համար, ինչպէս որ աղօթում էք իմ և ձեր հօր երջանկու-

թեան համար։ Արները հոգում է ինչպէս ձեր, այնպէս էլ իր երկրի բոլոր մարդոց լաւութեան համար և երբ դուք քաջ, խելացի և աշխատասէր կլինէք, այն ժամանակ նա կսիրէ ձեզ այնպէս, ինչպէս որ ես և ձեր հայրը սիրում ենք ձեզ։ Այդ օրից սկսած որմնադրի որդիքն առաւօտ և երեկոյ աղօթքի ժամանակ իրենց հօր և մօր անունների հետ յիշում էին նաև Արների անունը։

Գերտրուդն ու Լինհարդն որոշեցին նոր կարգադրութիւններ անել իրենց տան կարգապահութեան և զաւակների կրթութեան համար և այդ օրն երջանիկ և հանդիսաւոր օր էր նրանց համար։

Լինհարդն արիացաւ կրկին և երեկոյեան Գերտրուդը պատրաստեց նրա սիրած կերակուրը. նրանք երկուսն էլ ուրախ էին Արների օգնութեան և իրենց երկնային Հօր բարութեան առթիւ։

Արները ևս կարօտով սպասում էր առաւօտեան գալուն, որպէս զի մի գործ կատարէ,—ինչպիսին նա հազարն էր կատարում—իր գոյութեանը մի արժէք տալու համար։

3.

ԱՆՍԻՐՏ ՄԱՐԴԸ։

Այդ երեկոյ, երբ տանուտէրն Արների մօտ եկաւ, նրա հրամանները լսելու, նա ասաց. Ես վաղը Բօննալ կգամ։ Կամենում եմ եկեղեցու շինութիւնը կարգի դնել։ Տանուտէրը պատասխանեց. տէր, Ձերդ Մեծութեան պալատական որմնադիրը ժամանակ ունի՞ այժմ։ Ո՛չ, պատասխանեց Արները, բայց քո գիւղում կայ մի որմնադիր՝ Լինհարդ անունով, որին ես սիրով կշնորհեմ այդ վաստակը։ Ինչո՞ւ Նրան երբէք մի որև է գործի համար չես առաջարկել ինձ։

Տանուտէրը գլուխ տուեց խոնարհաբար և ասաց. ես չէի համարձակուի մի աղքատ որմնադիր առաջարկել Ձերդ Մեծութեան շինութիւնների համար։

Արներ։ Արդեօք նա աղնի՞ւ մարդ է, տանուտէր, կարո՞ղ եմ նրան հաւատ ընծայել։

Տանուտէր։ Այո՛, Ձերդ ողորմածութիւնը կարող է նը-

րան հաւատ ընծայել. նա չափից դուրս յստակամիտ մարդ է։

Արներ։ Ասում են, որ նա մի առաքինի կին ունի, արդեօք այդ կինը շաղակրատ չէ՞, հարցրեց Արները ծանր կերպով։

Ո՛չ, ասաց տանուտէրը, նա ճշմարիտ որ աշխատասէր և խաղաղ կին է։

Լաւ, ասաց Արները, վաղը ժամի ինանին եկեղեցու գաւթում եղիր, այնտեղ կտեսնեմ քեզ։

Տանուտէրն այս խօսակցութեան վրայ ուրախացած՝ վերադարձաւ գիւղը, որովհետև ինքն իրեն մտածում էր. ահա՛ մի նոր կթան կով ինձ համար և արդէն ծրագրում էր որոգայթներ լարել, որով այդ շինութեան ժամանակ որմնադրի աշխատած փողերը դուրս պիտի գալէր նրանից. նա շտապով վազեց տուն և այնտեղից դէպ որմնադրի փոքրիկ խրճիթը։

Արդէն մութը կոխել էր, երբ նա ուժգնութեամբ դուռը բաղխեց։

Լինհարդն ու Գերտրուդը նստած էին սեղանի շուրջը. կերակրի մնացորդը դրուած էր դեռ ևս նրանց առաջը։ Լինհարդը ճանաչեց նախանձոտ տանուտէրի ձայնը, վախեցաւ և մի անկիւն ձգեց կերակուրը։

Թէև Գերտրուդը սիրտ էր տալիս նրան, որ չվախենայ և վստահ լինի Արների վրայ, բայց այնուամենայնիւ դուռը բանալիս՝ նա մեռելի գոյն ստացաւ։

Տանուտէրն ինչպես մի անյագ շուն, իսկոյն իմացաւ թագկացրած կերակրի հոտը, բայց հաճոյական կերպարանք առաւ և ասաց ժպտալով. այդպէս հեշտ է առանց պանդոկի ապրել, այնպէս չէ՞ Լինհարդ։

Նա աչքերը խոնարհեցրեց և լռեց. սակայն Գերտրուդն առաւել համարձակ էր և ասաց. Ի՞նչ է հրամայում պարոն տանուտէրը. զարմանալի է, որ նա այցելում է այսպիսի մի աղքատ տուն։

Հումելը ծածկեց իր բարկութիւնը, ժպտաց և ասաց. ճշմարիտ է, այսպիսի լաւ կերակուր չէի սպասում այստեղ, եթէ ոչ յաճախ կայցելէի։

Այդ խօսքը զայրացրեց Գերտրուդին։ Տանուտէ՛ր, պապասխանեց նա, դու հոտոտում ես մեր ընթրիքն և չարակ-

նում, դու պէտք է ամաչէիր՝ դառնացնել մի աղքատ մարդու սիրած ընթրիքը, որին գուցէ տարին երեք անգամ հազիւ է արժանանում։

Ես չար դիտաւորութեամբ չասացի, պատասխանեց տանուտէրը ծիծաղելով։ Սակայն մի վայրկեանից յետոյ շարունակեց մի փոքր աւելի լրջօրէն. ի՞նչ ամբարտաւան ես, Գերտրուդ, այդ չէ սաղում աղքատ մարդկանց։ Բայց այժմ չեմ կամենում այդ բանի մասին խօսել։ Ես միշտ ամուսնուդ բարին եմ ցանկացել և կարողացածիս չափ ծառայել եմ նրան. կամենա՞ս օրինակներ բերեմ։

Գերտրուդ։ Տանուտէ՛ր, ամուսինս ամեն օր քո պանդոկում թղթախաղի և արբեցութեան է մատնւում, իսկ ես տանը զաւակներիս հետ ամեն տեսակ թշուառութիւնների ենթարկւում. այս է ահա՛ քո արած ծառայութիւնը։

Հումել։ Անարդար ես վարւում ինձ հետ, Գերտրուդ։ Ճշմարիտ է, ամուսինդ մի փոքր ցոփ է, այդ ինքս էլ ասել եմ նրան, սակայն իմ պանդոկում ես պարտաւոր եմ ցանկացողին ուտելիք և խմելիք տալ. այդ անում է և իւրաքանչիւր մարդ։

Գերտրուդ։ Այո՛, բայց ամեն մարդ չէ ապառնում մի անբաղդ, աղքատ մարդուն օրէնքի անունով, եթէ նա իւրաքանչիւր տարի իր պարտքը չէ կրկնապատկում։

Տանուտէրն էլ չկարողացաւ իրեն զսպել։ Նա դարձաւ կատաղաբար դէպի Լինհարդը. Լինհա՛րդ, դու իմ մասին այդպիսի բանե՞ր ես խօսում։ — Ականջո՞վս պէտք է լսեմ, թէ ինչպէս դուք, մուրացկաններ, ալևորիս պատուազուրկ և անուանազուրկ էք կամենում անել։ Մի՞թէ ես միշտ դատաւորների առաջ չեմ տեսել քո հաշիւները։ Լաւ որ բոլոր տոմսակներդ իմ ձեռքին են։ Զլինի՞ թէ կամենում ես պարտքդ մերժել, Լինհարդ։

Խօսքը դրա մասին չէ բոլորովին, ասաց Լինհարդը, Գերտրուդը ցանկանում է միայն, որ ես նորից պարտք չանեմ։

Տանուտէրը կրկին ուշքի եկաւ, մեղմացրեց իր ձայնն և ասաց. այդ վատ բան չէ, բայց և այնպէս դո՛ւ ես մարդը, նա չպէտք է վախեցնէ քեզ։

Գերտրուդ։ Ո՛չ, տանուտէր, ես կամենում եմ նրան քո հաշուեմատեանի սիրուն թերթիկներից ազատել։

Հումել։ Թող պարտքը վճարէ և ազատուած կլինի։

Գերտրուդ։ Այդ կարող է անել, երբ նորից պարտք չանէ։

Հումել։ Հպարտ ես, Գերտրուդ, տեսնենք։ Դու կամենում ես աւելի սիրով տանն ամուսնուդ հետ միայնակ մնալ, քան թոյլ տալ նրան՝ մի բաժակ գինի խմել ինձ մօտ։

Գերտրուդ։ Դու անարգ մարդ ես, տանուտէր, սակայն քո խօսքերն ինձ ցաւ չեն պատճառում։

Հումելն էլ չէր կարող այս խօսքերին երկար դիմանալ։ Նա զգաց, որ մի բան պատահած պէտք է լինի, որ այս կնոջն այդպիսի համարձակութիւն է տուել։ Այդ պատճառով չկարողացաւ իր կատաղութիւնը մեղմացնել և հրաժեշտ տուեց։

Ուրիշ հրամայելու բան ունի՞ս, հարցրեց Գերտրուդը։

Ոչի՛նչ, եթէ այդպէս է, պատասխանեց Հումելը։

Ի՞նչպէս, կրկնեց Գերտրուդը ժպտալով և նայեց ուղղակի նրա երեսին։ Այս աւելի շփոթեց տանուտէրին և նա չգիտէր թէ ինչ ընթացք բռնէ։

Ինչելով սանդուխքի վրայից՝ նա մրրթմրրթում էր ինքն իրեն, թէ արդեօք ի՞նչ պէտք է պատահած լինի։

Լինհարդը բաւական չէր այս դէպքից, բայց տանուտէրն ևս առաւել։

4.

ՆԱ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԻ ՄՕՏ Է ԵՒ ՀԷՆՑ ԱՑԴՏԵՂ ԿԱՐԵԼԻ Է ԽԱԲԵԲԱՆՆԵՐԻՆ ՃԱՆԱՉԵԼ

Համարեա՛ կէս գիշեր էր, բայց հէնց որ տանուտէրը տուն հասաւ, մարդ ուղարկեց Լինհարդի երկու հարևանների մօտ, որ իսկոյն իր մօտ գան։

Նրանք արդէն անկողնի մէջ էին, բայց և այնպէս չուշացան գալու։

Հումելը հարցրեց այն ամեն բանի մասին, ինչ որ արել էին Լինհարդն ու Գերտրուդը մի քանի օրուայ ընթացքում, բայց որովհետև նրանք չկարողացան իսկոյն գործը պարզել, նա դրանց վրայ էլ կատաղեց։

Շնե՛ր, ինչ որ մարդ ցանկանում է ձեզնից, չէք կարողանում երբէք գլուխ բերել։ Ինչո՞ւ պէտք է ես միշտ ձեր ժիմարը լինեմ։ Երբ դուք բեռներով փայտ էք գողանում,

Ես պէտք է չգիտցող ձևանամ, երբ դուք կալուածատիրոջ արօտատեղիներում արածեցնում էք և բոլոր շրջապատները վերցնում, պէտք է լռեմ։ Դո՛ւ Բուլլեր, քո որբերի հաշուի աւելի քան երրորդ մասը սխալ էր և— ես լռեցի։ Կարծում ես թէ քո մի կտոր մգլոտ չոր խոտով բաւականացայ։ Դեռ չէ՛ հնացել այդ գործը։—Եւ դո՛ւ Քրուել, հանդիպ կէսը պատկանում է եղբօրդ զաւակներին։ Ծե՛ր գող. ի՞նչ շահ ունիմ քեզնից, որ քեզ դահճի ձեռքը չեմ մատնում, որին դու իսկապէս պատկանում ես։

Այս խօսքերն երկիւղ պատճառեցին հարևաններին։ Ի՞նչ կարող ենք անել, պարոն տանուտէր։

Շնե՛ր, ո՛չինչ չէք կարող անել, ո՛չինչ չգիտէք։ Ես կատաղութիւնից գժւում եմ։ Ես պէտք է իմանամ թէ այս շաբաթ որմնադրի կինն ի՞նչ է արել, ի՞նչ է նրա գոռոզութեան առիթը։

Այս միջոցին Քրուելը մի բան մտաբերեց։ Կա՛ց, տանուտէր, կարծեմ կարող եմ ծառայել քեզ, նոր միտս եկաւ. Գերտրուդն այսօր մինչև ճաշ տանը չէր և երեկոյեան նրա Լիզելին աղբիւրի վրայ փառաբանում էր դղեակի տիրոջը, անպատճառ նա դղեակումն եղած կլինի։ Առաջի գիշերն ողբ էր լսում նրանց սենեակից, սակայն ոչ ոք չ'գիտէր թէ՝ ինչ՞։ Այսօր նրանք ամենքն առանձնապէս ուրախ են։

Տանուտէրը համոզուեց արդէն, որ Գերտրուդը դղեակումն է եղել։ Բարկութիւնն և անհանգստութիւնն այժմ առաւել ուժով կատաղեցնում էին նրան։ Նա սարսափելի անէծքներ էր թափում, հայհոյում էր զզուելի խօսքերով Արներին, որ ամեն մուրացկանի լսում է և երդւում էր Լինհարդին և Գերտրուդին վրէժխնդիր լինել։ Բայց դուք պէտք է լռէք, հարևաններս, ես կամենում եմ այդ անպիտանների հետ քաղցրութեամբ վարուել մինչև որ ժամանակը գայ։ Աշխատեցէք իմանալ թէ ինչ են անում նրանք և համբաւ բերէք ինձ. կարևոր եղած ժամանակն ես էլ ձեզ կ'օգնեմ։

Ցետոյ Բուլլերին մի կողմը տարաւ և ասաց. դու ոչինչ չգիտե՞ս գողացուած ծաղկամանների մասին, անցեալ օրը քեզ տեսել են բարձուած էշով սահմանն անցնելիս, ի՞նչ ունէիր հետդ։

Բուլլերը վախեցաւ,... ես... ես... ունէի... լաւ, ասաց տանուտէրը,—ինձ հաւատարիմ եղիր, ես քո կողմը կլինեմ երբ կարիքը պահանջէ։

Եւ հարեւանները գնացին տուն։

Առաւօտը մօտ էր և Հումելը շուռ ու մուռ էր գալիս իր անկողնի մէջ մի ժամ շարունակ, մտածում էր վրէժխնդիր լինելու մասին, քնած միջոցին կրճատացնում էր ատամները, զարկում էր ոտքերով, մինչև որ պայծառ օրը նրան անկողնից դուրս հանեց։ Նա վճռեց մի անգամ ևս Լինհարդին տեսնել, իրեն զսպել և ասել, որ առաջարկել է Արներին՝ եկեղեցւոյ շինութիւնը նրան յանձնել։ Նա ժողովեց իր բոլոր ուժերը՝ շողոքորթելու համար և գնաց Լինհարդի մօտ։

Գերտրուդն և Լինհարդը վաղուց արդէն այդ գիշերուայ պէս հանգիստ քուն չէին ունեցել։ Նրանք առաւօտեան աղօթեցին այդ օրուայ յաջողութեան համար և մեծ յոյս ունէին Արների օգնութեան վրայ։ Այս յոյսը պատճառում էր նրանց հոգեկան հանգստութիւն և մի անսովոր ուրախալի զուարթութիւն։

Այսպէս գտաւ նրանց Հումելը և նրա բարկութիւնն առաւել ևս վառուեց, սակայն զսպեց իրեն, քաղցրութեամբ բարի լոյս ասաց նրանց և աւելացրեց. Լինհարդ, երէկ մենք լաւ չվարուեցինք միմեանց հետ, այդպէս չպէտք է լինի։ Ես լաւ բան ունիմ ասելու քեզ։ Հէնց այժմ գալիս եմ մեր ողորմած Պարոնի մօտից, նա խօսեց եկեղեցու շինութիւնից և հարցրեց նոյնպէս քո մասին։ Ես ասացի, որ դու կարող ես շինութիւնը գլուխ բերել և կարծում եմ, որ քեզ կյանձնէ։ Տեսնո՞ւմ ես, այսպէս կարելի է միմեանց ծառայել, չպէտք է շուտով բարկանալ։

Լինհարդ։ Շինութիւնը պէտք է դղեակի որմնադրին տրուած լինի, չէ՞ որ դու արդէն վաղուց ասացիր այդ համայնքի մէջ։

Հումել։ Կարծում էի, բայց այդպէս չէ. դղեակի որմնադիրը միայն նախահաշիւն է ներկայացրել, և դու գիտես, թէ ինչպիսի հաշիւ կազմած կլինի։ Եթէ այդ նախահաշուով ստանաս շինութիւնը, մեծ վաստակ կունենաս։

Լիներ՛ր, տեսնո՞ւմ ես այժմ, որ քո լաւն եմ ցանկանում։—

Որմնադիրը շինութեան յուսով բաղդաւոր զգաց իրեն և սրտանց շնորհակալ եղաւ նրանից։ Սակայն Գերտրուդը տեսնում էր, թէ թագցրած բարկութիւնից ի՞նչպէս գունատ էր տանուտէրի դէմքը և թէ ինչպէս նրա ծիծաղի տակ ծածկուած էր կատաղութիւն և այդ պատճառով ուրախ չէր։ Այդ ժամանակ տանուտէրը դուրս գնաց և քայլելիս ասաց. մի ժամից յետոյ Արները կգայ. Լինհարդի Լիզան, որ կանգնած էր իր հօր կողքին, տանուտէրին ասաց. այդ մենք երեկուանից գիտենք։

Հումելը թէև վախեցաւ այդ խօսքից, սակայն այնպէս ձևացրեց, իբրև թէ չէ լսում, իսկ Գերտրուդը լաւ իմանալով, որ տանուտէրը շինութիւնից վաստակելու փողի համար է լռտեսում, շատ անհանգիստ էր։

5.

ՏԱՆՈՒՏԷՐԸ ԳՏՆՈՒՄ Է ԻՐ ՎԱՐՊԵՏԻՆ

Արներն եկաւ եկեղեցու բակը. գիւղից նոյնպէս շատ ժողովուրդ եկաւ այնտեղ, որպէս զի տեսնէ իր բարի տիրոջը։

Անգո՞ղ էք, թէ տօն է այսօր և ամենքդ ժամանակ ունիք այստեղ թափառելու, ասաց տանուտէրը մի քանիսին, որոնք նրա մօտն էին կանգնած, որովհետև միշտ զգուշանում էր, որ իրեն տրուած հրամաններն ոչոք չիմանայ։ Սակայն Արները նկատեց այդ և ասաց բարձրաձայն. տանուտէ՛ր, ես ցանկանում եմ, որ իմ որդիքս այստեղ մնան և լսեն, թէ ինչպէս պէտք է կարգադրեմ շինութեան գործը, ինչո՞ւ ես դրանց արտաքսում։

Հումելը մինչև գետին խոնարհեց և կանչեց հարեւաններին բարձրաձայն. կրկին յետ դարձէք, Նորին ողորմածութիւնը թոյլ է տալիս։

Արներ։ Տեսա՞ր եկեղեցու շինութեան գնահատութիւնը։

Տանուտէր։ Այո՛, ողորմած տէր։

Արներ։ Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ է Լինհարդն այդ շինութիւնն անել միևնոյն գնով և լաւ ու գիմացկուն կերպով։

Ա՛յո, ողորմած տէր, պատասխանեց տանուտէրը բարձրաձայն և աւելացրեց հազիւ լսելի կերպով. որովհետև նա

գիւղումն է բնակւում, կարծեմ որ կարող էր մի փոքր առաւել արժան յանձն առնել։

Սակայն Արները պատասխանեց բարձր ձայնով. որքան որ պալատի որմնադրին պէտք է տայի, նոյնքան էլ տալիս եմ դրան։ Կանչել տուր նրան և հոգա, որ այն ամենինչ որ պալատի որմնադրին պէտք է տրուէր, յանձնուի դրան։

Լրաբերի գալուց միայն մի քանի րոպէ առաջ Լինհարդը գնացել էր գիւղի վերին թաղը և այդ պատճառով Գերտրուդը վճռեց լրաբերի հետ անձամբ գնալ եկեղեցու բակը և Արներին իր հոգսերը յայտնել։

Սակայն երբ տանուտէրը փոխանակ Լինհարդի, Գերտրուդին տեսաւ լրաբերի հետ, մահուան գոյն ստացաւ։

Արները նկատեց այդ և հարցրեց. Ինչդ է ցաւում, պարոն տանուտէր։

Ո՛չ մի տեղս, ողորմած տէր, ո՛չ մի տեղս, գիշերս լաւ չեմ քնել։

Ճիշտ է, նկատելի է այդ, ասաց Արներն և նայեց ուղղակի նրա աչքերին, յետոյ դարձաւ դէպի Գերտրուդը, բարևեց բարեկամաբար և ասաց. Ամուսինդ այստեղ չէ՞։ Սակայն այդ միևնոյն է, միայն նրան ասա, որ ինձ մօտ գայ։ Կամենում եմ նրան յանձնել այս եկեղեցու շինութիւնը։

Գերտրուդը կանգնած էր մի վայրկեան անխօս և չէր համարձակւում այդչափ բաղմութեան առաջ խօսել։

Արներ։ Ի՞նչու չես խօսում, Գերտրուդ։ Ես կամենում եմ շինութիւնը քո ամուսնուն յանձնել նոյն պայմաններով, ինչպէս որ պալատի որմնադիրը կշինէր։ Այս պէտք է քեզ ուրախութիւն պատճառէր, Գերտրուդ։

Գերտրուդը կրկին ուշքի եկաւ և ասաց. տէ՛ր, եկեղեցին շատ մօտ է պանդոկից։—

Բոլոր ժողովուրդն սկսեց ծիծաղել և որովհետև շատերը կամենում էին իրենց ծիծաղը տանուտէրից ծածկել, դարձան նրանից ուղղակի դէպի Արները։ Սակայն տանուտէրը, լաւ տեսնելով, որ Արներն ամեն բան նկատեց, վերկացաւ բարկացած, կանգնեց Գերտրուդի դիմաց և ասաց. Ի՞նչ ունիս իմ պանդոկի դէմ։

Սակայն Արները շուտով ընդհատեց տանուտէրին և ասաց. մի՞թէ այս խօսակցութիւնը քեզ է վերաբերում, տանուտէր, որ ընդմիջում ես։ Յետոյ դարձաւ կրկին դէպի Գերտրուդն և ասաց. ի՞նչ է այդ, ի՞նչ կայ, որ եկեղեցին շատ մօտ է պանդոկից։

Գերտրուդ։ տէր, իմ ամուսնուն՝ գինի խմելու ժամանակ կարելի է դիւրութեամբ մոլորեցնել և եթէ նա ամեն օր պանդոկից այսպէս մօտ աշխատէ, ա՜խ Աստուած, Աստուած իմ, վախենում եմ, որ չի կարող այս փորձանքին դիմանալ։

Արներ։ Մի՞թէ չի կարող պանդոկից հեռու մնալ, եթէ այդ վտանգաւոր է նրա համար։

Գերտրուդ։ Տէր, աշխատելու ժամանակ մարդ ծարաւում է յաճախ և երբ արբեցողների խումբը նրան կգրաւէ ամեն տեսակ միջոցներով՝ թէ հաճոյականութեամբ և թէ ծաղրով, թէ գինի գնելով և թէ գրաղ գալով, ա՜խ Աստուած, ի՞նչպէս կարող է դիմանալ։ Իսկ եթէ կրկին մի փոքր պարտք ունենայ, դարձեալ կկապուի։ Տէ՛ր, եթէ գիտենա՜յիք թէ ինչպէս մի գիշերուայ ընթացքում այսպիսի տներում կարող է աղքատ մարդն այնպիսի թակարդի մէջ ընկնել, որի միջից ազատուելը համարեա թէ անկարելի է։

Արներ։ Ես գիտեմ այդ, Գե՛րտրուդ և զայրացած եմ քո երէկուայ պատմածի վրայ։ Այստեղ, քո աչքի առաջ և ամբողջ ժողովրդի ներկայութեամբ ուզում եմ քեզ ցոյց տալ, թէ ես չեմ կամենում, որ աղքատ մարդիկ ճնշուին։

Արներն իսկոյն դարձաւ դէպի տանուտէրն և ասաց՝ խիստ ձայնով և թափանցող հայեացքով. տանուտէր, ճշմարի՞տ է, որ խեղճ մարդիկ քո տանը ճնշւում, զրկւում և խաբւում են։

Ուշքը կորցրած և դիակի նման գունատ տանուտէրը պատասխանեց. կեանքումս, ողորմած տէր, այսպիսի բան երբէք չէ պատահել ինձ. այն օրից, երբ ես կամ և տանուտէր եմ, ասաց նա, սրբեց ճակատի քրտինքը, հաղաց և սկսեց դարձեալ—սարսափելի է—։

Արներ։ Դու անհանգիստ ես, տանուտէր։ Հարցը շատ պարզ է։ Ճշմարի՞տ է, որ խեղճ մարդոց ճնշում, մոլորեցնում ես և պանդոկիդ մէջ այնպիսի որոգայթի մէջ ձգում, որ դժբաղդացնում է նրանց ընտանիքը։

Տանուտէր։ Չէ, իհարկէ չէ, ողորմած տէր։ Այդ է մուրացկաններին ծառայելու վարձատրութիւնը։ Ես պէտք է այդ մասին առաջուց մտածէի։ Ամէն անգամ մարդ այսպիսի շնորհակալութիւն է ընդունում վճարելու փոխանակ։

Արներ։ Վճարելու վերաբերմամբ հոգս մի՛ քաշի, հարցը նրանում է միայն՝ արդեօք այս կինը ստո՞ւմ է։

Տանուտէր, Այո՛, իհարկէ, ողորմած տէր, հազար կերպ կապացուցեմ։

Արներ։ Մէկ ապացոյցը բաւական է, տանուտէր։ Սակայն զգուշացիր. երէկ ասում էիր, որ Գերտրուդը քաջ, խաղաղ, աշխատասէր կին է և շաղակրատ չէ։

Ես չգիտեմ, ես..... ես..... մտաբերում եմ..... դուք ինձ.... ես նրան..... ես նրան.... այդպէս կարծեցի, ասաց շնչասպառ տանուտէրը։

Արներ։ Դու այնպէս անհանգիստ ես այժմ, տանուտէր, որ քեզ հետ կարելի չէ խօսել. ամենից լաւն է, ես կտեղեկանամ այդ մասին ներկայ եղող հարևաններից։ Եւ իսկոյն դարձաւ դէպի այն երկու ծեր մարդիկը, որոնք հանգիստ, ուշադիր և ծանրաբարոյ կանգնած էին այնտեղ և ասաց նրանց. Ճշմարիտ է, սիրելիներ, որ ձեր պանդոկում մարդոց ճնշում և գայթակղեցնում են։ Այդ մարդիկը նստում էին միմեանց երեսին և չէին համարձակւում խօսել, սակայն Արները քաջալերեց նրանց սիրալի կերպով. մի՛ վախենաք, միայն ճշմարիտն ասացէ՛ք։

Այդ ճշմարիտ է, տէր. բայց ի՞նչպէս գանգատուենք տանուտէրի դէմ, ասաց վերջապէս ամենից ծերը, սակայն այնպէս կամաց, որ միայն Արները կարող էր հասկանալ։ Բաւական է, ծերուկ, ասաց Արները և դարձաւ կրկին դէպի տանուտէրը. իսկապէս այժմ նրա համար չեմ եկել, որ այդ գանգատը քննեմ, սակայն հաստատ իմացիր, որ աղքատ հպատակներիս կամենում եմ բոլոր ճնշումներից ազատ տեսնել և վաղուց արդէն մտածում էի, որ ոչ մի տանուտէր չպէտք է պանդոկապետ լինի։ Բայց այս գործը յետաձգում եմ մինչև երկուշաբթի։ Գերտրո՛ւդ, ասա՛ ամուսնուդ, որ ինձ մօտ գայ, իսկ դու հանգիստ եղիր նրա վերաբերմամբ ու մի՛ վախենայ պանդոկի վտանգներից։ Դրանից յետոյ Արները պարապեց մի քանի գործերով և երբ վերջացրեց, գնաց մօտակայ անտառը և

արդէն բաւական ուշ էր, երբ տուն վերադարձաւ։ Տանուտէրը նոյնպէս Արներին ընկերակցելով՝ գիշերը միայն տուն դարձաւ։

Երբ Հումելը մօտեցաւ իր տանը, սենեակում լոյս չտեսաւ և ոչ մի մարդու ձայն չլսեց այնտեղից, չար բան նախազգաց, որովհետև սովորաբար նրա տունը միշտ լի էր և բոլոր լուսամուտները լուսաւորուած՝ սեղանների վրայ դրուած ճրագներով. իսկ կոնծողների աղաղակները թնդում էին գիշերուան խաղաղութեան մէջ, այնպէս որ փողոցի ներքին ծայրից կարելի էր լսել, թէև փողոցն երկար էր և տանուտէրի տունը նրա վերին ծայրին էր գտնուում։ Այս անսովոր խաղաղութիւնից տանուտէրը շատ վախեցաւ։ Նա կատաղութեամբ բացեց դուռը և ասաց. այս ի՞նչ է նշանակում, որ այստեղ մարդ չկայ։ Նրա կինը ողբում էր մի անկիւնում։ Ա՛յ մարդ, դու կրկին այստե՞ղ ես, Աստուած իմ, ի՞նչ դժբաղդութիւն է պատահել։ Թշնամիներդ ուրախանում են գիւղում և ոչ ոք չէ համարձակւում գոնէ մի բաժակ գինի խմել մեզ մօտ։ Ամենքն ասում են, որ քեզ անտառից տարել են Արնբուրգ։

Ինչպէս բռնուած վարազը կապած ժամանակ մըրթմըրթում է, ժանիքները բացանում, ոլորում աչերն ու կատաղութիւն արտայայտում, այնպէս էլ այժմ Հումելը կատաղեց, սկսեց ոտքով տրոփել, աղաղակել և մտածում էր Արներին վրէժխնդիր լինել։ Յետոյ սկսեց ինքն իրեն խօսել. — այսպէս ուրեմն երկիրը զրկւում է իր իրաւունքներից։ Նա կամենում է պանդոկապետ լինելու իրաւունքն ինձնից յափշտակել և իրեն սեպհականել։ Անյիշատակ ժամանակներից տանուտէրները միշտ պանդոկապետ են եղել, ամեն գործ մեր ձեռքովն էր անցնում։ Իսկ սա այժմ ինքն է ամեն տեղ վազում, հարցնում ամեն մի չնչին բանի մասին, այդ պատճառով էլ այժմ տեղից վերկացողը դիմադրում է դատաւորին և ասում, որ ինքն էլ կարող է Արների հետ խօսել։

Այսպիսով դատարանը գրկւում է իր նշանակութիւնից և մենք լռում ենք, ինչպէս միւս անպիտանները, մինչդեռ նա մեզնով անպատւում և ոչնչացնում է երկրի հին իրաւունքները։ —

Այսպէս յեղաշրջում էր ծեր խաբեբան ավնիւ տիրոջ

բարի և իմաստուն գործերը, մրրթմրրթում և վրէժխնդրութեան մասին էր մտածում, մինչև որ քնեց։

6.

ԲՈՒՆ ՌԱՄԿԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հումելն առաւօտը վաղ վերկացաւ և սկսեց պատուհանի տակ երգել և սուլել, որպէս զի տեսնողները կարծեն, թէ երէկուայ դէպքի մասին չէ հոգում։ Բայց նրա հարեւան Ֆրիցը կանչեց փողոցի միւս կողմից.—այսպէս կանուխ արդէն հիւրե՞ր ունիս, որ այդպէս ուրախ ես և ծիծաղեց ինքն երեն։

Նրանք կգան շուտով, Ֆրից, ասաց տանուտէրը, օղիի բաժակը պատուհանից դուրս մեկնեց և գոչեց. Ֆրից, ուզո՞ւմ ես մի մի կոնծենք։ Դեռ ևս շատ կանուխ է, պատասխանեց Ֆրիցը, ուզում եմ սպասել մինչև աւելի շատ մարդիկ գան։—Դու միշտ նոյն խորամանկն ես, ասաց տանուտէրը, բայց հաւատա՛, որ երէկուայ կատակն այնքան էլ վատ հետևանք չի ունենայ։ Ո՛չ մի թռչնակ թռած բարձրութեան վրայ չէ մնում, այլ կրկին ցած է իջնում։

Չգիտեմ, պատասխանեց Ֆրիցը, իմ ասած թռչունը դեռ ես չի իջել։ Սակայն գուցէ մենք խօսում ենք տարբեր թռչունների մասին։ Նախաճաշի են կանչում, տանուտէ՛ր, ուզո՞ւմ ես ինձ հետ նախաճաշել, ասաց Ֆրիցը և փակեց պատուհանը։

—Կարճ կտրեց, փընթփընթաց տանուտէրն ինքն իրեն, և այնպէս շարժեց գլուխը, որ մազերն ու այտերը դողացին։ Կարծեմ որ սատանայի աշխատանք պիտի ունենամ, մինչև որ երէկուայ եղելութիւնը մոռացութեան տրուի, ասում էր նա ինքն իրեն, բաժակը լցնում, խմում և նորից խօսում. արիացի՛ր, երբ գայ ժամանակը, կգայ և խորհուրդը։ Այսօր շաբաթ է, մեր յիմարները մազերը խուզել են տալիս. կերթամ սափրիչի մօտ և այնտեղ մի բաժակ գինով ամենքը՝ մէկը միւսի ետևից կհնազանդուին ինձ։ Գիւղացիք ինձ քահանայից տասն անգամ աւելի են հաւատում. տանուտէրը խօսեց ինքն իրեն ու դարձաւ կնոջը. խոզի փուչիկը լցրու ծխախոտով, սակայն ո՛չ իմ գործածածից, այլ այն հոտածից, դա լաւ է անպիտանների համար։ Իսկ երբ սափրիչի աշա-

կերտը գինի տանելու գայ, տուր նրան երեք անգամ ծծմբախառն գինուց և իւրաքանչիւր չափի մէջ լցրու մի բաժակ օղի։ Յետոյ Հումելը դուրս գնաց, բայց փողոցի վրայ, իրենց տան մօտ, նորից մտածեց, յետ դարձաւ և ասաց կնոջը. կարող է պատահել, որ անպիտաններն ինձ էլ խմեցնեն, պէտք է զգուշանամ, ուղարկիր դեղին ներկած ջրից, երբ ես «La Cote» պահանջեմ և ինքդ անձամբ բեր։ Յետոյ դարձեալ դուրս գնաց, բայց սափրիչին հասնելուց առաջ, ուսումնարանի մօտի լուռենու տակ, պատահեց Նիքէլ Շպիցին և Եօգլի Ռուբէլին։

Ո՞ւր ես գնում շաբաթ օրուայ հագուստով, պարո՛ն տանուտէր, հարցրեց Նիքէլ Շպիցը։

—Պէտք է երեսս սափրել տամ։

Նիքէլ։ Զարմանալի բան է, որ արդէն շաբաթ առաւօտը ժամանակ ունիս դրա համար։

Տանուտէր։ Ճշմարիտ է, տարուայ ընթացքում միշտ այդպէս չէ լինում։

Նիքէլ։ Ոչ, երկար ժամանակ է, որ դու միշտ կիւրակի առաւօտ, քարոզի ժամանակն էիր գալիս վարսավիրայի մօտ։

Տանուտէր։ Այո՛, մի երկու անգամ։

Նիքէլ։ Այո՛, մի երկու և վերջին անգամ, որովհետև այն օրից, երբ տէրտէրը քո շունն եկեղեցուց դուրս հանել տուեց, այլ ևս եկեղեցի չես գնում։

Տանուտէր։ Խելար ես, Նիքէլ, որ այդպիսի բաներ ես խօսում։ Շան հալածելն ես վաղուց մոռացել եմ։

Նիքէլ։ Ես եթէ տէրտէր լինէի, դրանով չէի բաւականանալ։

Տանուտէր։ Խելո՛ք կաց, Նիքէլ և հետս արի, գուցէ սափրիչի մօտ մէկը գինի բերել տայ։

Նիքէլ։ Շատ շնորհակալ կլինես ա՜յ սափրիչից, եթէ նա իր տանը գինի խմեցնել տայ ուրիշներին *)։

Տանուտէր։ Ասածիդ կէսի չափ անգամ ագահ չեմ. այժմ էլ կամենում են իմ պանդոկապետութեան իրաւունքը բոլորովին խլել։ Սակայն Նիքէլ, դեռ այդ օրին չենք հասել։ Նա, որի մասին ես ակնարկում եմ, դեռ ամենաքիչը վեց շաբաթ

---

*) Տանուտէրն իբրև պանդոկապետ իրաւունք չէր տալիս, որ մի այլ տան մէջ, բացի իր պանդոկից, մի որևէ դէպքի առիթով գինի տրուի ուրիշներին։

և երեք օր պէտք է աշխատէ, մինչև որ այդ իրաւունքը ստանայ։

Նիքէլ։ Հաւատում եմ. բայց և այնպէս քեզ համար լաւ չէ, որ երիտասարդ պարոնն իր պապի հաւատը խախտեց քո վերաբերութեամբ։

Տանուտէր։ Այո՛, նա իր պապի հաւատը չունի բոլորովին։

Նիքէլ։ Ես վստահ եմ մինչև անգամ, որ նա նոյն ինքն տասերկու պատուիրաններից ոչ մէկի վերաբերութեամբ իր պապի հաւատակիցը չէ։

Տանուտէր։ Կարող է պատահել, սակայն հանգուցեալն ինձ համար մի այլ մարդ էր։

Նիքէլ։ Հարկաւ։ Նրա դաւանութեան առաջին պատուիրանն էր. հաւատում եմ քեզ, իմ տանուտէրին։

Տանուտէր։ Զուարճալի է. երկրորդ պատուիրանն ինչ էր։

Նիքէլ։ Զգիտեմ ճիշտը, կարծեմ այսպէս էր. բացի քեզանից, իմ տանուտէրից, ես ոչ ոքի խօսքը չեմ հաւատում։

Տանուտէր։ Դու պէտք է տէրտէր դառնայիր, Նիքէլ, դու ոչ միայն կբացատրէիր քրիստոնէական վարդապետութիւնը, այլ մի ուրիշն էլ կյօրինէիր։

Նիքէլ։ Այդ ինձ թոյլ չէին տալ, սակայն եթէ անէի, այնպէս պարզ կգրէի, որ մանուկներն առանց տէրտէրի հասկանային, այն ժամանակ վերջինս էլ բանի պէտք չէր լինի։

Տանուտէր։ Շարունակենք մեր խօսքը, Նիքէլ, քրիստոնէական վարդապետութիւնն էլ նոյն է ինձ համար, ինչ որ մի այլ բան—ապագայից երբէք աւելի շատ չի կարելի սպասել։

Նիքէլ։ Այդ մի առած է, որ երբեմն ճշմարիտ է, երբեմն ոչ. քեզ համար, ինչպէս երևում է, ուղիղ է նոր կալուածատիրոջ վերաբերմամբ։

Տանուտէր։ Դեռ ուրիշներին էլ կյարմարուի, եթէ համբերութիւն ունենաք. ես այնչափ էլ երկիւղ չեմ կրում այս նոր պարոնից։

Նիքէլ։ Ճշմարիտ է, սակայն և այնպէս քո ժամանակն անցել է։

Տանուտէր։ Նիքէլ, ես հո մի անցեալ ունեցել եմ, թող այժմ ուրիշներն որոնեն։

Նիքէլ։ Ճշմարիտ է, մի ժամանակ դեր էիր խաղում, բայց այդպէս կլիներ իհարկէ, քանի որ գրագիրը և փոխանորդը քո պարտապաններն էին։

Տանուտէր։ Այդպէս էին ասում, բայց ճշմարիտ չէր։

Նիքէլ։ Ի՞նչպէս թէ ճշմարիտ չէր, չէ՞ որ մի երկուսի հետ վէճ ունեցար, երբ նրանք փողդ չէին կամենում վերադարձնել։

Տանուտէր։ Խել�ր, կարծես թէ ամեն բան գիտես։

Նիքէլ։ Աւելի շատ բան գիտեմ։ Ես այն էլ գիտեմ, թէ դու Ռուդիի հօր հետ ի՞նչպէս անխիղճ դատ վարեցիր. ես տեսայ քեզ շան որջի մօտ, դարմանի մէջ, Ռուդիի պատուհանի առաջ փորիդ վրայ ընկած, երբ նրա փաստաբանը մօտն էր։ Մինչև առաւօտեան ժամի երկուսը փորիդ վրայ ընկած լսում էիր՝ ինչ որ սենեակում խօսում էին։ Այնօրը ես էի գիշերապահ և ամբողջ շաբաթը քեզնից ձրի գինի էի ստանում, որ լռեմ։

Տանուտէր։ Դու հերետիկոս ես, ասածիդ ոչ մի խօսքը ճշմարիտ չէ, բանդ բուրդ կլինէր, եթէ ապացուցանելու ստիպուած լինէիր։

Նիքէլ։ Ապացուցանելու մասին չէ այժմ խօսքը, բայց որ այդ ճշմարիտ է, ինքդ էլ լաւ գիտես։

Տանուտէր։ Լաւ է, որ յետ ես առնում խօսքդ։

Նիքէլ։ Սատանա՞ն փչեց գլխիդ՝ մութ գիշերուայ մէջ դարմանի տակից ականջ դնելու միտքը։ Դու լսեցիր բոլոր խօսքերը և դրանով կարողացար գրագրի մօտ քո իսկական ցուցմունքները յեղաշրջել։

Տանուտէր։ Ի՞նչեր ես խօսում։

Նիքէլ։ Ինչեր եմ խօսո՞ւմ. եթէ գրագիրը քո իսկական ցուցմունքները չփոփոխէր դատաւորին ներկայացնելուց առաջ, Ռուդին այժմ էլ կունենար իր մարգագետինը և Վիւստն ու Կայբախերը ստիպուած չէին լինի երդուելու։

Տանուտէր։ Այ՛, դու ճիշտ այնպէս ես հասկանում գործը, ինչպէս անուս վարժապետն եբրայեցերէն։

Նիքէլ։ Եթէ ես այդ չհասկանայի էլ, քեզնից կսովորէի։ Ինքդ քանի՞, քանի անգամ իմ ներկայութեամբ ծիծաղել ես քո հնազանդ ծառայ գրագրի վրայ։

Տանուտէր։ Այո՛, ճիշտ է. սակայն քո ասածները չէր անում նա։ Ճշմարիտ է, նա շատ խորամանկ սատանայ էր, Աստուած ողորմի հոգուն, սուրբ Միքայէ-

լին 10 տարի կլինի, ինչ որ նա գետնի տակն է։

Նիքէլ։ Ինչոր դժոխքն է իջել, ուզում ես ասել։

Տանուտէր։ Այդ լաւ չէ. մեռածների մասին չար չպէտք է խօսել։

Նիքէլ։ Եթէ այդ չասէիր, ես կպատմէի թէ ի՞նչպէս վարուեց նա Նիոպպի որդոց հետ։

Տանուտէր։ Ինչպէս երևում է, մահուան անկողնում նա քեզ է խոստովանել, որ ամեն բան լաւ գիտես։

Նիքէլ, Այո՛, գիտեմ։

Տանուտէր։ Ամենից լաւն այն էր, որ ես գործը տարայ։ Եթէ դու գիտենայիր, որ այդ գործը տանուլ եմ տուել, այն ժամանակ միայն կցաւէիր։

Նիքէլ։ Ո՛չ, ես լաւ գիտեմ, որ գործը տարար. բայց այն էլ գիտեմ, թէ ի՞նչպէս։

Տանուտէր։ Գուցէ, գուցէ և ոչ։

Նիքէլ։ Աստուած փրկէ գրչից բոլոր աղքատ մարդկանց։

Տանուտէր։ Իրաւունք ունիս, միայն պատուաւոր և հարբստութիւն ունեցող մարդիկ պէտք է իրաւունք ունենային դատարանի առաջ գրելու։ Այդ շատ լաւ կլինէր, Նիքէլ, սակայն ի՞նչ արած, պէտք է եղածով բաւականանալ։

Նիքէլ։ Տանուտէ՛ր, քո իմաստուն խօսքը յիշեցնում է ինձ մի առակ, որ մէկ անգամ լսել եմ մի էլզասցի ուխտաւորից։ Սա պատմեց՝ սեղանի շուրջը ժողովուած բոլոր մարդկանց առաջ, որ մի միջնակեաց ամբողջ աշխարհը նըկարագրել է մի առակագրքի մէջ և ինքը համարեա՝ այդ ամբողջ գիրքը բերան գիտէ։ Մենք խնդրեցինք, որ այդ առակներից մէկը պատմէ, և նա պատմեց ուղիղ այն առակը, որ այժմ ինձ յիշեցրիր։

Տանուտէր։ Եւ ո՞րն է այդ, շատախո՛ս։

Նիքէլ։ Հետևեալն է՝—բարեբաղդաբար դեռ գիտեմ—«Ոչխարը գանգատւում և լալիս էր, որ գայլը, աղուէսը, շունն և սպանդարարը նրան սաստիկ չարչարում են։ Մի աղուէս, որ հէնց փարախի առաջն էր կանգնած, լսեց այդ գանգատը և ասաց ոչխարին. միշտ պէտք է գոհ լինել այն իմաստուն կարգերից, որ աշխարհումս գոյութիւն ունի։ Եթէ այլ կերպ լինէր, աւելի վատ կլինէր»։

«Դրա հետ համաձայն եմ, պատասխանեց ոչխարը, երբ

փարախի դուռը փակ է, իսկ եթէ բաց լինէր, ասածդ ճըշ-մարտութիւն չէր լինի ինձ համար»։

Դրանից նա հանեց հետևեալ բարոյականը. «Հարկաւ լաւ է, որ գայլերը, աղուէսներն և գիշատիչ կենդանիները գոյութիւն ունին. սակայն նոյնպէս լաւ է, որ փարախներն օրինաւոր փակուին, և բարի ու թոյլ կենդանիներն գիշատիչների դէմ լաւ հովիւներ և պահապան շներ ունենան»։

«Աստուած պահպանէ իմ խրճիթը, աւելացրեց ուխտաւորը, ամեն տեղ գիշատիչ կենդանիները շատ են, իսկ բարի հովիւները սակաւ։ Սո՜ւրբ Աստուած, դո՛ւ գիտես, թէ ինչու է այսպէս, մենք պէտք է լռենք»։ Նրա ընկերները կրկնեցին. «Այո՛, պէտք է լռենք....» և ապա աղօթեցին. ո՜վ սուրբ Աստուածածին, աղաչիր մեզ համար այժմ և մեր մեռնելու ժամանակ. ամէն»։

Մենք բոլորս զգացուեցանք, երբ ուխտաւորներն այսպէս աղօթում էին. թէև այլ դէպքում յայտնի է, որ «սուրբ Աստուածածին, աղաչիր մեզ համար» խօսքերը բողոքականներիս վրայ շատ էլ չէ աղդում, սակայն այդ րոպէին մենք ներքուստ յուզուած էինք։

Տանուտէր։ Հաւատում եմ։

Նիքէլ։ Զարմանում եմ, որ հաւատում ես։

Տանուտէր։ Ինչո՞ւ չէ. ոչխարային գթասրտութիւնը պէտք է հարկաւ նոյնպէս ոչխարի գլուխ և ոչխարի սիրտ ունեցողներին խիստ յուզէր. սակայն այդ սրտագին ոչխարային կարծիքով գայլերը, աղուէսներն և բոլոր այդպիսի կենդանիները քաղցից կսատակէին։

Նիքէլ։ Եւ այդ վնաս էլ չէր լինի։

Տանուտէր։ Ճի՞շտ գիտես այդ։

Նիքէլ։ Ոչ—յիմար բան ասացի—նրանք չպէտք է սովից սատակեն. հոտած դիակներ և վայրենի կենդանիներ կգտնեն և այդ է նրանց բաժինը և ոչ թէ ընտանի կենդանին, որ մարդկանց հոգացողութեամբ և ծախսերով է խնամուում ու պահպանուում։

Տանուտէր։ Ուրեմն դու էլ չես թողնում նրանց բոլորովին սովից սատակելու։ Այդ արդէն շա՞տ է ընտանի կենդանիների բարեկամի համար. սակայն ես մրսում եմ, ե՛կ սենեակ։

Նիքէլ։ Չեմ կարող, ես պէտք է գնամ։

Տանուտէր։ Է՞, Տէր ընդ ձեզ, դրացինե՛ր, ցտեսութիւն։ Նա ներս մտաւ։ Ռուբէլն ու Նիքէլը մնացին մի վայրկեան կանգնած, յետոյ Ռուբէլն ասաց Նիքէլին. դու նրան թթու բաներ ուտացրիր։

Նիքէլ։ Կցանկանայի պղպեղած էլ լիներ, որ մինչև առաւօտ նրա լեզուն այրէր։

Ռուբէլ։ Ութ օր առաջ այդպէս չէիր խօսի նրա հետ։

Նիքէլ։ Ութ օր առաջ նա էլ այդպէս չէր պատասխանի։

Ռուբէլ։ Այդ էլ ճշմարիտ է։ Իմ շունն էլ, երբ առաջին անգամ դնչկալ կրեց, այդպէս խաղաղ էր։

Նիքէլ։ Երբ ամանը լիքն է լինում, թափւում է ափերից. այդ միշտ և ամենքի համար ճշմարիտ է եղել և տանուտէրի համար էլ ճշմարիտ կլինի։

Ռուբէլ։ Աստուած ազատէ պաշտօններից։ Ես չէի կամենալ տանուտէր լինել, նոյն իսկ եթէ նրա երկու ադարակներն էլ ինձ տային։

Նիքէլ։ Իսկ եթէ միայն կէսն առաջարկէին և տանուտէրի պաշտօնն էլ հետը միասին, ի՞նչ կանէիր։

Ռուբէլ։ Խելա՞ր։

Նիքէլ։ Խելացի, ասա՛, ի՞նչ կանէիր. տեսնում ես, դու իսկոյն կհամաձայնէի՛ր, երկգոյն վերարկուի մէջ կփաթաթուէիր և տանուտէր կլինէիր։

Ռուբէլ։ Այդպէ՞ս ես կարծում։

Նիքէլ։ Այո՛, այդպէս եմ կարծում։

Ռուբէլ։ Մենք ժամանակ ենք կորցնում վայրահաչութեամբ, մնաս բարև, Նիքէլ։

Նիքէլ։ Մնա՛ս բարև, Ռուբէլ։

7.

ՆԱ ՏԱՆՈՒՏԷՐԻՆ ՑԱՏՈՒԿ ՄԻ ԳՈՐԾ Է ՍԿՍՈՒՄ

Երբ տանուտէրը սափրիչի սենեակը մտաւ, նստելուց առաջ բարևեց սափրիչին, նրա կնոջն և գիւղացիներին՝ առանց հազալու։ Ուրիշ ժամանակ նա միշտ առաջ հազում էր և նստելուց ու թքելուց յետոյ էր բարև ձեզ ասում։

Գիւղացիները պատասխանեցին ծիծաղելով և գլխարկներն առաւել արագ ծածկեցին քան այլ անգամ, երբ տա-

նուտերը նրանց բարևում էր։ Նա սկսեց շուտով իր խօսակցութիւնը — միշտ լաւ եկամուտ ունիս, վարպետ սափրիչ և այնչափ գործ ունիս, որ զարմանում եմ թէ ինչպէս ես այս բոլորը մենակ երկու ձեռքով անում։ Սափրիչն ընդհանրապէս խաղաղ մարդ էր և այսպիսի խօսքերին չէր ախորժում պատասխանել. սակայն տանուտէրը մի քանի ամիս շարունակ ամեն կիրակի առաւօտ, քարոզի միջոցին, այսպիսի խայթող խօսքերով բարկացրել էր նրան և ինչ էլ լինէր, այս անգամ ցանկանում էր պատասխանել ու ասաց. պարոն տանուտէր, դուք չպէտք է զարմանաք, որ մարդ կարող է երկու ձեռքով շատ աշխատել, բայց քիչ վաստակել, ձեզ աւելի այն պէտք է զարմացնէ, որ մարդ կարող է երկու ձեռքով ոչինչ չշինել, սակայն շատ փող վաստակել։

Տանուտէր։ Ճշմարիտ է, սափրիչ. այդ էլ պէտք է փորձէիր, շնորհքն էլ այդ է. պէտք է ձեռքերը մի որոշ դիրքով և եղանակով միմեանց վրայ դնել, ինչպէս հարկն է և այդպիսով կտուրից ոսկի կանձրևէ։

Սափրիչն առաւել համարձակութիւն ստացաւ և ասաց. ոչ, այդպէս չէ, տանուտէր, այլ պէտք է փաթաթուել երկգոյն վերարկուի մէջ և ասել հետևեալ երեք խօսքերը. *այս այսպէս է, երդւում եմ. այս այսպէս է* և յաջող դէպքում պէտք է բարձրացնել 3 մատը դէպի վեր և երկուսը դէպի ցած և քսակները կլցուին փողով։

Տանուտէրը կատաղեց և պատասխանեց. դու կարող էիր կախարդել, սափրիչ։ Սակայն ուրիշ տեսակ չի կարելի, քո գործի տէր մարդիկ անհրաժեշտ է, որ կախարդանք և սատանայական արուեստ հասկանան։

Այս արդէն բաւական էր բարի սափրիչին. նա շատ զղջաց, որ տանուտէրի հետ բանակռիւ սկսեց և լռեց՝ թոյլ տալով ուրիշներին խօսելու ու խիստ հանդարտ կերպով սպանեց իր առաջ նստած մարդու երեսը։

Բայց տանուտէրը շարունակելով ասաց. սափրիչը կատարեալ պարոն է, նա կարող է մեզպէսներին չպատասխանել։ Չէ՞ որ նեղ վարտիկ ու քաղաքացու կոշիկներ ունի և կիրակի օրերը ձեռնոց է հագնում. նա քնքոյշ ձեռքեր և քաղաքացի գրագրի սրունգներ ունի։

Գիւղացիները սիրում էին սափրիչին. այդ էլ լսել էին

արդէն և չծիծաղեցին տանուտէրի կատակի վրայ։ Միայն երիտասարդ Գալլին, որ սափրուում էր, չկարողացաւ քաղաքային գրագրի սրունգների վրայ իր ծիծաղը բռնել,—որովհետև հէնց նոր էր եկել գիւանատանից, ուր նոյնպէս հասել էր սրունգների կատակը—սակայն սափրիչը կըտրեց նրա վերին շրթունքը։ Այս դէպքը տհաճութիւն պատճառեց գիւղացիներին, այնպէս որ բոլորն էլ գլուխները շարժեցին և պառաւ Ուլին բերանից հանեց ծխամորջն ու ասաց. տանուտէ՛ր, լաւ չէ, որ սափրիչին այդպիսի անհանգստութիւն ես պատճառում։ Միւսները տեսնելով, որ ծեր Ուլին չքաշուեց և բարձր ձայնով ասաց այդ, իրենք էլ մռմռացին բարձրաձայն և ասացին. Գալլի շրթունքից աւելի է հոսում, մենք չենք կարող այս դրութեամբ սափրել տալ մեզ։

Ցաւում եմ, ասաց տանուտէրը. թող տուժեմ ուրեմն. ա՜յ տղա՛, գնա՛ երեք շիշ գինի բեր. գինին վերքերը բժշկելու յատկութիւն ունի։

Հէնց որ տանուտէրն սկսեց գինուց խօսել, գիւղացոց մռմռալն անյայտացաւ։ Միքանիսը թէև չէին հաւատում, որ Հումելն առանց կատակի է ասում այդ, բայց անկիւնում նստած Լէնքը բացատրեց հանելուկը և ասաց. տանուտէրի գինին երէկ գերեզմանատանն իր արժէքը կորցրեց։

Տանուտէրը վերցրեց իր ծխախոտով լի քսակը և դրեց սեղանի վրայ. առաջին անգամ մի ծխամորջի ծխախոտ պահանջեց Քրիստէն, փողոցային երգիչը. Հումելը տուեց. շուտով եկան միւսներն էլ և սենեակը լցուեց այդ հոտած ծխախոտի ծխով։ Բայց տանուտէրը ծխում էր լաւ տեսակից։ Այդ միջոցին սափրիչն ու դրացիները դեռ լուռ էին և աղմուկ չէին հանում։ Վարպետ Ուրիասին այդ լաւ չթուաց. նա բարձր ու ցածր էր անում սենեակում և ցուցամատը քթի վրայ պտտեցնում, ինչպէս անում էր միշտ, երբ մի բան նրա սրտովը չէր լինում. «շատ ցուրտ է այստեղ, այսպէս ես ոչինչ չեմ կարող անել», ասաց նա ինքն իրեն, յետոյ դուրս գնաց, աղախնին մի քանի կոպէկ տուեց, որ աւելի լաւ տաքացնէ և շուտով սենեակը տաքացաւ։

8.

ՄԻՆՉԵՒ ԱՆԻՒԸ ՉԻՒՂԵՆ՝ ՍԱՑԼԸ ՉԻ ՇԱՐԺՈՒԻ

Այդ միջոցին բերին ծծմբախառը գինին.—բաժակներ բեր, վարպետ սափրիչ, ասաց տանուտէրը. սափրիչի կինն ու մանուկները շուտով բերին բաւականաչափ բաժակներ։ Գիւղացիներն ամենքն էլ մօտեցան գինու գաւերին և տանուտէրը լցրեց բաժակները։ Թէ ծեր Ուլին և թէ միւս բոլոր գիւղացիները գոհ էին և երիտասարդ Գալլի վէրքի մասին չէին էլ խօսում։ Եթէ յիմարը հանգիստ նըստէր, ասում էին նրանք, սափրիչը չէր կտրի նրա շրթունքը։ Հետզհետէ բոլորի ռէխները բացուեցին և շուտով բարձրացաւ արբեցողների աղաղակը։ Ամենքը դարձեալ գովում էին տանուտէրին և որմնադիր Լինհարդը մէկ սեղանի վրայ կոչւում էր անպիտան, իսկ միւսի վրայ՝ մուրացկան։ Մէկը պատմում էր թէ ի՞նչպէս նա ամեն օր լաւ կոնծում էր, իսկ այժմ սուրբ է ձեւանում. միւսը պատմում էր, որ ինքը հասկանում է թէ ինչո՞ւ գեղեցիկ Գերտրուդն է գնացել ամրոց՝ երիտասարդ պարոնի մօտ, և ոչ ինքը, որմնադիրը. մի երրորդը՝ թէ ինչպէս ինքը գիշերն երազում տեսաւ, որ տանուտէրը շուտով պիտի տրորէ որմնադրի քիթը։ Ինչպէս որ մի քանի զզուելի թռչուններ կտուցը խրում են հոտած ջրի մէջ և փթթոզ աղբից կերակրւում, այնպէս էլ Հումելն ամոքում էր իր չար սիրտը գիւղացիների խօսակցութիւններով։ Բայց ինքը շատ լուրջ և մտածելով էր մասնակցում այդ արբեցողների և դատարկախօսների աղմուկին։ Դրացի Ռի՛խտէր, ասաց նա և առաջարկեց նրան մի բաժակ, դուք և մի ուրիշ երդուեալ ներկայ էիք վերջին հաշուին։ Դուք գիտէք, որ այն ժամանակ որմնադիրն 30 գուլդէն պարտ մնաց ինձ. ահա՛ կէս տարի է և նա դեռ մի գրոշ անգամ չէ վճարել։ Ես այդ փողը նրանից չեմ էլ պահանջել և ոչ մի վատ խօսք ասել նրան, բայց կարող է պատահել, որ ես կորցնեմ իմ փողի մինչև իսկ վերջին կոպէկը։

Այդ հասկանալի է, կրկնեցին գիւղացիները, դու այլ ևս ոչ մի գրոշ չես տեսնի քո փողից և բաժակները լցրին։ Սակայն տանուտէրը հանեց գրպանի օրացոյցի միջից որմ-

նադրի ձեռագիրը, դրեց սեղանի վրայ և ասաց. ահա՛, կարող էք տեսնել՝ թէ արդեօք ասածս ճշմարիտ է։

Գիւղացիները տնտղեցին ձեռագիրը, կարծես թէ կարդալ իմանային և ասացին. որմնադիրը խաբեբայ է։ Եւ փողոցային երգիչ Քրիստէն, որ վաւ կոնծում էր, թևքերով սրբեց իր ռեխը, կանգնեց, բարձրացրեց բաժակը և գոռաց. կեցցէ՛ տանուտէրը, թող սատկեն բոլոր շողոքորթները. յետոյ բաժակը դատարկեց, նորից տուեց լցնողին, նորից դատարկեց և երգեց.

Ուրիշներին փոս փորողը,
Այլոց որոգայթ լարողը,
Թէ և լինի չար սատանայ,
Եւ բարձր դիրքի արժանանայ,
Դարձեալ կընկնի, ինչպէս կասեն,
Վերջ ի վերջոյ աղբի միջին։

9.

ԵՐԿՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Այդպէս մի՛ աղաղակի, Քրիստէն, ասաց տանուտէրը, անօգուտ է։ Շատ կցաւէի, եթէ որմնադրին մի դժբաղդութիւն պատահէր։ Ես սիրով ներում եմ նրան, որովհետև աղքատութիւնից ստիպուած ստեց. բայց վատն այն է, որ օրէնքներն այլ ևս ապահով չեն մեր երկրում։

Գիւղացիներն անշարժ լսում էին, երբ նա երկրի օրէնքների մասին էր խօսում. մի քանիսը մինչև անգամ բաժակները մի կողմը դրին։

Ես տարիքով մարդ եմ, դրացիներ և ինձ համար այդ մեծ նշանակութիւն չունի. որդի չունեմ և իմ բանս էլ վերջացած է, բայց դուք զաւակներ ունէք, ձեզ համար ձեր իրաւունքները մեծ նշանակութիւն պէտք է ունենան։

— Այո՛, մեր իրաւունքները, գոչեցին գիւղացիները։ Դուք մեր տանուտէրն էք, մի մաղի չափ մի՛ զիջանէք մեր իրաւունքներից։

Տանուտէր։ Այո՛, դրացիներ, պանդոկապետի իրաւունքները համայնքին են պատկանում և այդ թանկագին իրաւունքը պէտք է պաշտպանենք մենք։

Գիւղացիներից միքանիսը շարժեցին գլուխները և միմեանց

ականջում փսփսացին. նա երբէք համայնքին ոչինչ չէ հարցրել իսկ այժմ ցանկանում է համայնքն էլ այն աղբի մէջ թաղել, որով ինքը շաղախուած է։ Բայց մեծամասնութիւնն ևս առաւել աղաղակում էր, երդւում, անիծում և պահանջում, որ երկու օրից յետոյ համայնքի ժողով լինի։ Հասկացողները լռում էին և կամաց իրենց մէջ ասում. այդ այն ժամանակ կտեսնենք, երբ գինին ձեր գլխներից կդուրս գայ։

Տանուտէրը զգուշութեամբ միշտ իր եռացրած ջրից էր խմում և շարունակում էր տաքացած գիւղացիներին՝ իրենց երկրի իրաւունքների մասին հոգսեր պատճառել։

Դուք բոլորդ գիտէք, ասաց նա, թէ մեր նախահայր Ռիւպլին 200 տարի առաջ ի՞նչպիսի կռիւներ ունէր այժմեան կալուածատիրոջ նախահօր հետ։ Ծեր Ռիւպլի *) — պապս շատ անգամ պատմել է ինձ այդ — ամենասիրելի առածն էր. «երբ աղաները գիւղի մուրացկաններին լաւ խօսքեր ասին, այն ժամանակ վայն եկել է գիւղացիներին»։ Նրանք այդ անում են, որ գիւղացիների մէջ երկպառակութիւն ձգեն և իրենք միայն իշխեն։ Դրացիներ, մենք պէտք է միշտ խաղի մէջ յիմարի դերը կատարենք։

Գիւղացիներ։ Դրանից ճիշտ բան չկայ. մենք պէտք է միշտ յիմարը լինինք խաղի մէջ։

Տանուտէր։ Այո՛, երբ ձեր դատաւորներն այլ ևս նշանակութիւն չունին, դուք օգնութիւնից զուրկ զինուորների վիճակումն էք։ Նոր կալուածատէրը խորամանկ է սատանայի պէս։ Այդ ոչ ոք չէ տեսնում և հարկաւ առանց պատճառի նա ոչ ոքին մի բարի խօսք չէ ասում։ Եթէ դուք միայն իմ գիտեցածի կէսն իմանայիք, այն ժամանակ ես կարիք չէի ունենալ խօսելու, բայց դուք էլ յիմարներ չէք, մի բան կնկատէք և կզգուշանաք։

Ղին, Որի հետ տանուտէրն առաջուց պայմանաւորուել էր և այժմ նշանացի արել, պատասխանեց. կարծում ես,

---

*) Ռիւպլին Բոննալի պատուարժան նախահայրերից մէկն էր և Արնհայմի ծեր ժառանգի դէմ հաւատարմութեամբ պաշտպանել էր իր համայնքը և իր ունեցած չունեցածը կորցրել, որ գիւղն աղային չծառայէ։ Սակայն այս առածը, որ Հումելը նրա բերանն է դնում, ոչ ոք չգիտէ ճշտութեամբ՝ որ նա իր ամբողջ կեանքում մի անգամ ասած լիներ։

տանուտէր, մենք չե՞նք նկատում որ Արները կամենում է պանդոկապետի իրաւունքը գրաւել։

Տանուտէր։ Նկատո՞ւմ էք։

Գիւղացիներ։ Այո՛, Աստուած վկայ, բայց չենք կարող թոյլ տալ։ Մեր զաւակները պէտք է այժմեանի պէս աղատ պանդոկ ունենան։

Էրի։ Ամրոցում Արները կարող է մի չափ գինին մի դուկատով ծախել մեզ վրայ և մենք խաբեբաներ կլինէինք մեր զաւակների առաջ։

Տանուտէր։ Այդ էլ չափազանցութիւն է, Էրի, մի չափ գինին չի կարող մի դուկատի հասցնել։

Էրի։ Այո՛, այո՛, դարբինն և կառք շինողն այնպէս են թանկացնում, որ սարսափելի է. նոյն իսկ փայտը տասն անգամ աւելի թանկ է քան յիսուն տարի առաջ։ Ի՞նչ կարող ես ասել, տանուտէր, քանի որ ամեն բանի վրայ հարկ պէտք է լինի, հարկաւ պէտք է թանկանայ. ի՞նչ ես կարծում՝ ո՞ր չափ կարժենայ մի չափ գինին, եթէ միայն ամրոցում կարելի լինէր գնել. այժմ էլ հո թանկ է։

Տանուտէր։ Այդպէս է, այժմ ամեն բանում առաւել ստիպմունք և արգելք կայ, ուստի և ամեն բան թանկանում է։

Այո՛, այո՛, և մենք այս ամենը պէտք է տանե՞նք.... ասում էին գիւղացիները, աղաղակում, խմում և սպառնում։ Խօսակցութիւնը վերջապէս դարձաւ մի այնպիսի կատաղի, վայրենի աղաղակ, որ այլ ևս նկարագրել չեմ կարող։

10.

ՍԱՓՐԻՉԻ ՇՈՒՆՆ ԱՆԺԱՄԱՆԱԿ ԽՄՈՒՄ Է ՋՈՒՐԸ ԵՒ ՓՁԱՏՆՈՒՄ ՊԱՐՈՆ ՏԱՆՈՒՏԷՐԻ ՑԱՋՈՂ ԽԱՂԸ

Մեծամասնութիւնն արդէն հարբած էր և փողոցային երգիչ Քրիստէն, որ տանուտէրի մօտ էր նստած, ամենից թունդ էր հարբած։ Նա աղաղակեց. Ճանապարհ տուէք ինձ։ Տանուտէրը և գիւղացիները վերկացան և նրան տեղ տուին, բայց նա օրօրուեց սեղանի վրայ և դիպչելով տանուտէրի ջրի ամանին՝ թափեց։ Վախեցած տանուտէրը շտապով մաքրեց սեղանի վրայ թափած ջուրը, որ ոչ ոք չնկատէ թափուածի ինչ լինելը և իր խաբեբայութիւնը տեսնէ. սակայն սափրիչի սեղանի տակը թագկացած շունը ծարաւ լինելով՝

թափուած ջուրը լակեց գետնից. այդ բանը տարաբաղդաբար տեսաւ այն գիւղացին, որ աչքը ձգել էր սեղանի տակ թափուած ընտիր գինու վրայ. նա ձայն տուեց. ա՜յ քեզ հրաշք և երևոյթ, տանուտէր, ժամանակիս շները գինի՞ են խմում։

Ցիմար, վաղուց է խմում են, պատասխանեց տանուտէրը, ձեռքով ու գլխով նշան արաւ և ոտքով խփեց սեղանի տակից, որ լռէ։ Շանը նոյնպէս մի հարուած տուեց, որ մի այլ տեղ որոնէ իր համար, բայց նա այդ հրամանը չհասկացաւ, որովհետև Սափրիչին էր պատկանում։ Շունը կլանչեց և սկսեց նորից լակել գետնին թափուած ջուրը։ Տանուտէրը սփոթնեց, որովհետև գիւղացիներից շատերն սկսեցին սեղանի տակը նայել։ Շուտով ամեն կողմից սկսեցին քչփչալ և շան վրայ մատնացոյց անել։ Սափրիչի կինը մինչև անգամ գետնից վերցրեց կոտրուած ամանի կտորները, մոտեցրեց քթին և երբ տեսաւ որ ջրի հոտ է փչում, ուժգին շարժեց գլուխը և բարձր ձայնով ասաց. լաւ բան չէ։

Հետզհետէ գիւղացիներն սկսեցին քչփչալ ամեն կողմից. այդտեղ մի բան կայ և սափրիչը քթի տակը փնթփնթաց. տանուտէր, քո լաւ գինին եռացրած ջուր է եղել։ Ճշմարիտ է, գոչեցին գիւղացիները։ Այս ի՞նչ սատանայութիւն է, տանուտէր, ինչո՞ւ ես ջուր խմում։

Շփոթուած տանուտէրը պատասխանեց. առողջ չեմ, պէտք է զգուշանամ. բայց գիւղացիները հաւատ չէին ընծայում այդ պատասխանին և հետզհետէ աջ ու ձախ սկսեցին ամենքը դժգոհութիւն յայտնել. բացի դրանից միքանիսն սկսեցին գանգատուել, որ խմած գինին նրանց գլուխը պտտեցնում է և այդպէս չպէտք լինէր այդչափ քիչ գինուց։ Ներկայ եղող գիւղացիներից երկուսը վերկացան, վճարեցին սափրիչին, մնաս բարև ասացին ու գնացին։

Միանգամ՞ց, պարոններ, ինչո՞ւ այդպէս յանկարծ հեռանում էք ընկերութիւնից, գոչեց տանուտէրը։

Ուրիշ գործ ունենք, պատասխանեցին այդ մարդիկն ու դուրս գնացին։ Սափրիչն էլ դուրս գնաց նրանց ետևից և ասաց. ես աւելի սերով կցանկանայի, որ տանուտէրը դուրս եկած լինէր. ո՛չ մի բանում անկեղծ չէ նա. նոյնպէս և գինու ու ջրի վերաբերութեամբ։

Մենք էլ չենք հաւատում, եթէ ոչ այնտեղ նստած կը մնայինք, պատասխանեցին այդ մարդիկը։

Սափրիչ։ Այս հարբեցողների աղմուկն էլ տանել չեմ կարող։

Այդ մարդիկը։ Թէև առիթ չես տուել, սակայն կարող ես փորձանքի մէջ ընկնել։ Եթէ ես քո տեղը լինէի, աւելացրեց այդ երկուսից աւագը, ինքս կվերջացնէի բանը։ Ես չեմ համարձակւում, պատասխանեց Սափրիչը։

—Այլ ևս հին ժամանակը չէ և դու տակաւին տանդ մէջ տէր ես, ասացին այդ մարդիկը։

—Ես կամենում եմ հետևել ձեր ասածին, ասաց Սափրիչը և կրկին դարձաւ իր սենեակը։

—Այդ մարդոց ի՞նչն էր ցաւում, որ այդպէս յանկարծակի վերկացան և գնացին, հարցրեց տանուտէրը։

Սափրիչ։ Ես էլ նրանց պէս եմ. այսպիսի մի աղմուկ անպատշաճ բան է և իմ տունը բոլորովին դրա տեղը չէ։

Տանուտէր։ Այդ էլ նոր կարծիք է։

Սափրիչ։ Այո՛, պարոն տանուտէր, ճշմարիտ, ես խաղաղ տեղ եմ սիրում։

Այս բանակռիւը հաճոյ չթուեցաւ միւս պատուելի հիւրերին։ Մենք հանգիստ կմնանք, ասաց մէկը. մենք արդար կվարուենք, ասաց մի ուրիշը. միշտ լաւ բարեկամ լինելը լաւ է, ասաց երրորդը. տանուտէր, դարձեալ մի աման գինի բերել տուր, ասաց Քրիստէն։

Այո՛, դրացինե՛ր, ես էլ սենեակ ունիմ, մենք կարող ենք պարոն սափրիչին հանգիստ թողնել, ասաց տանուտէրը։

—Այդ ինձ համար էլ լաւ կլինի, պատասխանեց սափրիչը։

Սակայն ինչպէս համայնքի, նոյնպէս և պանդոկապետի իրաւունքը մոռացուեց, ասաց ծարաւ աւագ Էբիմ։

Թող ինձ հետևէ, ով անկեղծ է, գոչեց սպառնալով տանուտէրը, հայհոյեց, նայեց վայրենի կերպով իր շուրջը, ոչ ոքի մնաս բարև չասաց և դուռն այնպէս շռընկացրեց, որ սենեակը դողդողաց։

Ի՞նչ անամօթութիւն, ասացին գիւղացիներից շատերը։ Դատապարտելի վարմունք է, ասաց երիտասարդ Մայերը. ես այլ ևս չեմ գնայ տանուտէրի տուն։ Ես էլ չէ, պատասխանեց Լեոյին։ Ո՛չ էլ ես. յիշում եմ երեկուայ

առաւօտը, ասաց Ռէնոլդը, ես ամենից ժոտիկ էի կանգնած Արներին և լաւ տեսայ, թէ ի՞նչ էր նշանակում այդ։

Գիւղացիները միմեանց էին նայում և չգիտէին թէ ինչ անեն. սակայն մեծամասնութիւնը կրկին նստեց ու ճեաց։ Միայն Էբին, Քրիստէն և մի քանի այլ մուրացկաններ սեղանի վրայից առան տանուտէրի դատարկ շշերը և թեւերի տակ բռնելով՝ հետևեցին նրան։

Տանուտէրն իր պատուհաններից նայելով դէպի սափրիչի տունը տանող փողոցը և տեսնելով որ ոչ ոք չէ գալիս այնտեղից, ինքն իր վրայ բարկացաւ և ասաց. ի՞նչ յիմարն եմ, շուտով ճաշ կլինի և դեռ ոչինչ չեմ շինել. անպիտանները կոնծեցին ու այժմ էլ վրաս ծիծաղում են. ես նրանց հետ ծծկեր մանկան պէս թոթովեցի և ինձ ստորացրի։ Այո՛, եթէ ես այդ շների բարին կամենայի, եթէ այն՝ ինչ որ օգտակար է համայնքի համար, ինձ համար էլ սիրելի ու լաւ լինէր. կամ եթէ արտաքուստ աւելի լաւ կարողանայի այնպէս ցոյց տալ, որ իբրև թէ նրանց բարին եմ ցանկանում, այն ժամանակ բանս կյաջողուէր։ Գիւղական համայնքն իսկոյն սկսում է պարել մի խելօքի ծափով, եթէ հաւատում է նրա բարեմտութեանը։ Սակայն անցած-գնացածը չի կարելի յետ բերել։ Ծեր կալուածատիրոջ ժամանակ համայնքն ինձ համար մի այծի նշանակութիւն էլ չունէր։ Տանուտէր լինելու օրից իմ զուարճութիւնն ու ուրախութիւնն է եղել միշտ յիմարացնել նրանց, հայհոյել և ձեռքիս մէջ ամփոփել. այժմ էլ մտադիր եմ նոյնը շարունակելու, բայց դրա համար պէտք է, որ ինձնից մի փոքր հեռու պահեմ նրանց։ Ամեն մարդու ձեռք սեղմելը, զիջողութիւնը, խորհուրդ տալը, ամենքին «աներորդի» կոչելն էլ չեն օգնում, երբ արդէն ճանաչում են քեզ։ Ես պէտք է այսուհետև լուռ և առանձին գործեմ, միայն այն մարդոց բանի դնեմ, որոնց ճանաչում եմ և համայնքը թողնեմ հանգիստ։ Հովիւը չէ խորհրդակցում ոչխարների հետ, իսկ ես այսօր այնչափ յիմարացայ, որ կամենում էի այդպէս անել։

Այդ միջոցին եկան դատարկ շշեր բերողները։

Մենա՞կ էք, հարցրեց տանուտէրը, այն շները չկամեցա՞ն գալ։

Ո՛չ. ո՛չ մէկը, պատասխանեց Էբին։

Տանուտէր։ (ծաղրելով) շա՜տ մեծ նշանակութիւն ունի այդ։

Քրիստէն։ (նոյնպէս ծաղրելով) Այո՛, շա՜տ մեծ, ես էլ այդպէս եմ կարծում։

Տանուտէր։ Այնուամենայնիւ ես կցանկանայի իմանալ, թէ նրանք ի՞նչ են խօսում ու խորհրդակցում այժմ միմեանց հետ։ Քրիստէն, գնա՛ և այլ շշեր որոնի՛ր այնտեղ։

Քրիստէն։ Բոլորը բերի։

Տանուտէր։ Ցի՛մար, այդ միևնոյն է, գնա՛ և որոնիր. իսկ եթէ ոչինչ չգտար, մաղերդ խուզել տուր կամ երակիդդ արիւն թողնել տուր, սպասի՛ր ու լսիր այն ամենը, ինչ որ կխօսեն նրանք։ Եթէ շատ տեղեկութիւններ կբերես՝ մինչև առաւօտ քեզ հետ կկոնծեմ։ Իսկ դո՛ւ, Լեօլի, պէտք է գնաս որմնադրի աւագ աշակերտ Յովսէփի մօտ, բայց տե՛ս, որ ոչ ոք չնկատէ քեզ։ Ասա՛ նրան, որ ճաշի ժամանակ ինձ մօտ գայ։

Մի բաժակ գինի տուր, ծարաւ եմ, ասաց Լեօլին, յետոյ որսի շան պէս կվազեմ ու մի ակնթարթում կրկին այստեղ կլինեմ։

Լա՛ւ, ասաց տանուտէրը և մի մի բաժակ գինի տուեց նրանց։ Երբ նրանք գնացին, տանուտէրի ամուսինը միւս երկուսի առաջն էլ գինի դրեց։

11.

ԼԱՒ ՄՏԱԾՈՒԱԾ ԽԱՐԵՐԱՑԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Տանուտէրը մտաւ իր սենեակը և ինքն իրեն խորհրդակցում էր, թէ ի՞նչպէս պէտք է բանը սարքէ, երբ Յովսէփը գայ։

Նա կեղծաւոր է և սատանայի պէս խորամանկ, նրա վրայ կարող եմ յուսալ. նրա կոնծած գինու շատ թալէրները գրուած են իր վարպետի հաշուի մէջ։ Նա կվախենայ և ինձ չի հաւատայ — արդէն ճաշի զանգերը խփում են — ես նրան կառաջարկեմ մինչև տասը թալէր. եթէ նա ցանկացածիս պէս անէ, այն ժամանակ երեք շաբաթուայ ընթացքում ամբողջ նոր աւելացրած շինութիւնը կկործանուի։ Տասը թալէր տալով չեմ զղջայ, ասաց տանուտէրը։ Երբ նա այս-

պէս ինքն իրեն խօսում էր, Լեօլին ու Յովսէփն եկան, բայց առանձին-առանձին, որ կասկածի չենթարկուեն։

—Բարև, Յովսէփ, վարպետդ չգիտէ՞ արդեօք, որ այստեղ ես։

Յովսէփ։ Նա դեռ դղեակումն է, սակայն ճաշին կը-գայ։ Եթէ ես ժամի մէկին կրկին գործի վրայ լինիմ, իմ բացակայութիւնը չի նկատուի։

Տանուտէր։ Լա՛ւ, ես քեզ հետ խօսելիք ունիմ, միայն պէտք է մենակ լինենք, ասաց տանուտէրը և առաջնորդեց նրան ետևի սենեակը, ծածկեց դուռը և փականքը գոցեց։ Սեղանի վրայ դրուած էին երշիկներ, խոզի միս, գինի և հաց։ Տանուտէրն երկու աթոռ դրեց սեղանի մօտ և ասաց Յովսէփին. այսօր ճաշից զրկուում ես այնտեղ, նստի՛ և կե՛ր ինձ հետ միասին։

Այդ կարելի է, պատասխանեց Յովսէփը, նստեց և շարունակեց. պարոն տանուտէր այժմ կարող էք ասել՝ թէ ինչ էք կամենում, ես պատրաստ եմ ծառայելու ձեզ։

Տանուտէր։ Կենա՛ցդ, Յովսէփ, խմի՛ր և յետոյ այս երշիկների համը տես. դրանք լաւը պէտք է լինին։ Ինչո՞ւ չես ձեռդ մեկնում, վարպետիդ մօտ աղատ ժամանակ հօ չա՞տ ունիս։

Յովսէփ։ Այդ ճիշտ է, բայց այսուհետև աւելի լաւ կլինի, երբ նա դղեակից գործ կստանայ։

Տանուտէր։ Ցիմարա՛ ես, Յովսէփ, այդ դեռ շա՞տ երկար կտևէ. թէև ես սիրով կցանկանայի, բայց նա յարմար չէ մի այդպիսի գործի համար։ Նա դեռ ո՛չ մի նշանաւոր շինութիւն չէ արել, բայց այս անգամ քեզ վրայ է յոյս դրել։

Յովսէփ։ Կարող է լինել. այդպիսի մի բան կայ, կարծեմ։

Տանուտէր։ Այդ շատ լա՛ւ գիտեմ ես և այդ պատճառով էլ կամենում եմ խօսել հետդ։ Դու կարող ես ինձ մեծ ծառայութիւն անել։

Յովսէփ։ Ծառայ եմ, պարոն տանուտէր։ Ձեր թանկագին կենացը։

Գործը քեզ է վերաբերում, որմնադի՛ր, ասաց տանուտէրը, երշիկներ դրեց նրա առաջը և շարունակեց. ես ցանկանում եմ, որ եկեղեցու շրջապատի հիմքը Շվինդիբրուխ հանքի քարերով դրուի։

Յովսէփ։ Թո՛ւ, սատանան տանի, պարոն տանուտէր,

այդ անկարելի է, երևի չէք հասկանում. այդ քարը հիմքի համար բոլորովին անպէտք է։

Տանուտէր։ Չէ, քարն այնքան էլ անպիտան չէ, քանի՞ շէնքերի վրայ են բանեցրել դրանից. Աստուած վկայ, լպշն է, իսկ ինձ համար մե՞ծ բաւականութիւն կլինի, եթէ այդ քարահանքը նորից բացուի։

Յովսէփ։ Անկարելի է։

Տանուտէր։ Այդ ծառայութեան համար կվարձատրուես։

Յովսէփ։ Պատն եթէ այդ քարից շինուի, վեց տարուայ ընթացքում կկախտուի։

Տանուտէր։ Է՞հ, ոչինչ չեմ ուզում լսել այդ մասին, դատարկ բաներ են։

Յովսէփ։ Վկայ է Աստուած, որ ասածս ճշմարիտ է։ Պատի հիմքի մօտ աղբանոցներ կան. իսկ այդ քարն եղևնու փայտի պէս կփթի։։

Տանուտէր։ Վերջապէս ի՞նչ քո գործն է թէ պատը տաս տարուց յետոյ կկործանուի, թէ աւելի ուշ. վախենում ես թէ դղեակի տէրը չկարողանայ կրկին նորը շինել տալ։ Եթէ ասածս կատարես մեծ վարձատրութիւն կստանաս։

Յովսէփ։ Շատ լաւ, բայց եթէ կալուածատէրն ինքը նկատէ, որ այդ քարը բանի պէտք չէ՞։

Տանուտէր։ Նա չի կարող հասկանալ. դրա մասին խօսք չի կարող լինել։

Յովսէփ։ Մի քանի բաներում նա աւելի շատ գիտէ, քան թէ կարելի էր կարծել։ Սակայն դու ինձնից աւելի լաւ ես ճանաչում նրան։

Տանուտէր։ Այո՛, այդ նրա խելքի բանը չէ։

Յովսէփ։ Եթէ այդպէս է, համաձայն եմ. քարն արտաքուստ գեղեցիկ է և ուրիշ գործի համար շատ լաւը։

Տանուտէր։ Ձեռքդ խփի՛ր, եթէ Լինհարդն այդ հանքի քարից գործածէ, հինգ թալէր վարձատրութիւն կստանաս։

Յովսէփ։ Շա՞տ է, միայն թէ ձեռքիս լինէր։

Տանուտէր։ Աստուած է վկայ, կատակ չեմ անում. եթէ Լինհարդն այդ քարից շինէ պատը, հինգ թալէր կը ստանաս ինձնից։

Յովսէփ։ Եթէ այդպէս է, խօսք ես տալիս պարոն

տանուտէր։ Ի՞նչ իմ գործն է՝ պաշտպանել դղեակի տիրոջ շահերը։

Տանուտէր։ Մի խօսք էլ ունիմ ասելու, Յովսէփ. դեղատանը ծառայող մի պարոն ինձ մի քսակ փոշի է տուել, որ իբրև թէ պատի սրուածքն երկաթի պէս ամուր կպահի, եթէ կրի հետ խառնուի. բայց ես այնքան էլ չեմ հաւատում այդ նեղ-վարտիկ պարոններին, այդ պատճառով էլ կուզենայի առաջ ուրիշի շէնքի վրայ փորձել դրա զօրութիւնը։

Յովսէփ։ Այդ կարող եմ անել. մի գիւղացու շէնքի անկիւնի վրայ կփորձեմ։

Տանուտէր։ Այդպիսի փոքրիկ փորձն օգուտ չունի. թէ յաջող և թէ անյաջող դէպքում մարդ կսխալուի և այդպիսով չի կարելի բոլորովին ապահով լինել՝ թէ մեծ շինութեան վրայ ինչպիսի ազդեցութիւն կունենայ. մի՞թէ չի կարելի այդ փորձն էլ եկեղեցու աշտարակի շինութեան վրայ անել։

Յովսէփ։ Արդեօք կրի մէջ շա՞տ պետք է խառնել այդ նիւթից։

Տանուտէր։ Կարծեմ ամեն մի տակառի մէջ կարելի է մի երկու ֆունտ խառնել։

Յովսէփ։ Եթէ այդպէս է, շատ հեշտ է։

Տանուտէր։ Ուրեմն կանե՞ս։

Յովսէփ։ Այո՛, ի հարկէ։

Տանուտէր։ Իսկ եթէ չյաջողուի, կլռե՞ս։

Յովսէփ։ Չեմ կարծում, որ չյաջողուի. բայց հակառակ դէպքում հարկաւ պէտք է լռել։

Տանուտէր։ Այդ նիւթն ամեն անգամ այստեղից կը տանես և մի բաժակ գինի էլ կկոնծես։

Յովսէփ։ Շա՞տ լաւ, կգամ. բայց այժմ պէտք է գնամ, ժամի մէկը խփեց։ (վերցնում է գինով լի բաժակը) Շնորհակալութիւն, պարոն տանուտէր։

Տանուտէր։ Շնորհակալութեան ոչինչ չկայ. եթէ խօսքդ կատարես, հինգ թալէրը կստանաս։

—Անպատճառ, պարոն տանուտէր, ասաց Յովսէփը, տեղից վեր կացաւ, տակի աթոռը մի անկիւն դրեց, վեր-

ջին բաժակն էլ դատարկեց ու շարունակեց. ապահով եղիր, խօսքս կկատարեմ, շնորհակալութիւն։

Տանուտէր։ Յոտեսութիւն, Յովսէփ, պայմանը չմոռանաս։

Յովսէփը դուրս եկաւ և գնալիս ինքն իրեն ասում էր. ի՞նչ տարօրինակ բաներ ասաց տանուտէրը. մի՞թէ կարելի է այդպիսի մի փորձ անել ամբողջ աշտարակի վրայ. ինչ և իցէ, ես ստանալիքս կառնեմ նրանից, իսկ յետոյ թէ արդեօք կկատարեմ նրա ասածը թէ ոչ—այդ ուրիշ խնդիր է։

Բանս լաւ գնաց, շա՞տ լաւ, ասում էր տանուտէրն ինքն իրեն, աւելի լաւ, քան թէ կարծում էի և այն էլ կէս գնով։ Եթէ նա բանի էութիւնը հասկանար, հնգի փոխանակ տասը թալէր կխոստանայի նրան։ Շա՞տ ուրախ եմ, որ գործս կարգի ընկաւ։ Ո՛չ, ո՛չ, մարդ իր արիութիւնն երբէք չպէտք է կորցնէ։ Երանի՜ թէ պատի հիմքն արդէն դրուած լինէր. համբերութիւն, երկուշաբթի արդէն կսկսեն հիմքի համար քար կտրել։ Խե՜ղճ, բարի որմնադիր, կինդ վա՜տ բան արաւ քեզ համար, իսկ դու կարծում ես թէ արդէն գահի վրայ ես նստած։

12.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Որմնադիր Լինհարդը, որ առաւօտեան վաղ գնացել էր դղեակ, կրկին վերադարձաւ իր կնոջ մօտ։

Իսկ Գերտրուդը մինչև ամուսնու գալը շտապել էր վերջացնել շաբաթ օրուայ գործը. սանրել էր մանուկների մազերը և հիւսել, զգեստները զնել, փոքրիկ սենեակը մաքրել ու աշխատելու ժամանակ իր սիրելիներին մի երգ սովորեցրել։

Երբ հայրիկը տուն գայ՝ այդ երգը պէտք է երգէք նրա ներկայութեամբ, ասաց նա մանուկներին. և երեխաները սիրով սովորում էին՝ գիտենալով, որ դրանով պէտք է ուրախութիւն պատճառեն իրենց հօրը։ Աշխատելու ժամանակ նրանք առանց դժուարութեան, առանց բանից ընկնելու և առանց գրքի այնչափ երգեցին իրենց մօր հետ, մինչև որ կարողացան սովորել։

Երբ հայրը տուն եկաւ, մայրը բարևեց նրան և եր-

գեց բոլոր մանուկների հետ միասին։ Լինհարդի աչքերն արտասուքով լցուեց, երբ մայրն ու երեխաները բոլորն էլ այդպէս երգելով զուարթ ու հանգիստ դիմաւորեցին իրեն։ Աստուած օրհնէ ձեզ, սիրելիներս, Աստուած օրհնէ քեզ, սիրելիս, ասաց նա յուզուած սրտով։

Սիրելիս, պատասխանեց Գերտրուդը, երկիրն երկինք է դառնում, երբ մարդ խաղաղութիւն է որոնում, իր պարտքը կատարում և սակաւ ցանկանում։

Լինհարդ։ Եթէ կարող լինեմ գոնէ մի ժամ վայելել կեանքի այդ երկինքն ու սրտի խաղաղութիւնը, պատճառը դու պէտք է լինես։ Մինչև մահ շնորհակալ կլինեմ քեզնից, որ ինձ ազատեցիր. իսկ այս մանուկները մահիցդ յետոյ էլ շնորհակալ կլինին քեզնից։ Մանուկնե՞րս, միշտ ձեր պարտքը կատարեցէ՛ք, հետևեցէ՛ք ձեր մօր օրինակին և այդպէսով միայն լաւ վիճակ կունենաք։

Գերտրուդ։ Այսօր դու էլ շատ ուրախ ես երևում։

Լինհարդ։ Արների մօտ էի և բանս լաւ գնաց։

Գերտրուդ։ Փա՞ռք Աստուծոյ, սիրելիս։

Լինհարդ։ Արների նման լաւ մարդ չկայ. կին, ո՞րչափ երեխայ էի, որ չէի համարձակւում նրա մօտ գնալ։

Գերտրուդ։ Միշտ այդպէս յետոյ ենք խելօքանում, սիրելիս։ Սակայն պատմի՛ր՝ ի՞նչ շինեցիր Արների մօտ։

13.

ԱՊԱՑՈՅՑ, ՈՐ ԼԻՆՀԱՐԴԸ ՍԻՐՈՒՄ ԷՐ ԳԵՐՏՐՈՒԴԻՆ

Գերտրուդը ձեռքն առաւ կիսագործ գուլպան և նստեց Լինհարդի մօտ՝ իր աշխատանքը շարունակելու։ Լինհարդն ասաց. Հարկաւ պէտք է պատմեմ, քանի որ այնպէս ես նստում, կարծես կիրակի երեկոյեան Աստուածաշնչի ընթերցումն պիտի լսես։

Գերտրուդ։ Բոլորը, բոլորը պէտք է պատմես, սիրելիս։

Լինհարդ։ Հէնց այդ է, կարծես թէ այժմ բոլորը միտս է, բայց չէ՞ որ այսօր շաբաթ է և շատ ժամանակ չես ունենայ։ Գերտրուդը ծիծաղեց. աչքերդ բա՛ց արա։ Լինհարդը նայեց շուրջը և ասաց. արդէն վերջացրո՞ւ ես։

Լիզան։ (Միջամտելով) այսօր մայրիկը շատ շտապեց, հա՛յրիկ։ Ես ու Էննէն էլ օգնեցինք նրան սենեակը կարգի

բերելիս. լաւ չենք արե՞լ։ Ի հարկէ լաւ էք արել, պատասխանեց հայրը։ Սակայն ինչի՞ պատմել, ասաց Գերտրուդը։

Լինհարդ։ Արները հարցրեց մինչև անգամ հօրս անունը, մեր բնակած փողոցի անունն ու տան համարը։

Գերտրուդ։ Ճիշտ չես պատմում, Լինհարդ, ես գիտեմ, նա այդպէս չսկսեց։

Լինհարդ։ Ինչո՞ւ չէ, ապա ի՞նչպէս։

Գերտրուդ։ Դու առաջ ողջունեցիր նրան ու նա շնորհակալ եղաւ։ Ի՞նչպէս արեցիք այդ։

Լինհարդ։ Իրաւունք ունիս. ես սկզբից չսկսեցի։

Գերտրուդ։ Տեսնո՞ւմ ես, Լինհարդ։

Լինհարդ։ Նա հէնց որ տեսաւ ինձ, իսկոյն հարցրեց թէ արդեօք էլ չե՞մ վախենում իրենից։ Ես խոնարհ գլուխ տուի, որչափ կարող էի ու ասացի. ներեցէք ինձ, ողորմած Տէր։ Նա ծիծաղեց և իսկոյն մի աման գինի դնել տուեց առաջս։

Գերտրուդ։ Ճշմարիտ որ այդ բոլորովին ուրիշ տեսակ սկսուեց. շուտո՞վ դատարկեցիր գինու ամանը։

Լինհարդ։ Ո՛չ, սիրելիս, ես նորահարսի նման ամաչկոտ էի, և չէի կամենում ձեռք դիպցնել բաժակին, բայց չթողեց։ Ես լաւ գիտեմ, որ ճանաչում ես գինու համը, ածա՛ ու խմի՛ր, ասաց նա։ Այդպէս էլ արի և զգուշութեամբ խմեցի նրա կենացը։ Բայց նա այնպիսի խիստ հայեացք ձգեց վրաս, որ բաժակը դողում էր բերանիս։

Գերտրուդ։ Երևի խիղճդ զարթեց, Լինհարդ, խի՞ղճդ։ Արդեօք երկիւղդ շուտո՞վ անցաւ։

Լինհարդ։ Այո՛, շատ շուտով, որովհետև Արները շատ սիրալի կերպով ասաց. բնական է, որ շատ աշխատող մարդը հաճութեամբ մի բաժակ գինի խմէ. ոչ ոք չի կարող դրա դէմ բան ասել. սակայն դժբաղդութիւնն այն է, որ ոմանք փոխանակ մի բաժակ գինով զովանալու՝ հարբելով յիմարանում են և կին ու զաւակ մոռանում։

Այդ դժբաղդութիւն է, Լինհարդ։ Այդ խօսքերը լսելիս կարծես սրտիս մէջ մի բան ցցեցին, բայց և այնպէս ինքս ինձ ժողովեցի և պատասխանեցի. ես այնպիսի դժբաղդ հանգամանքների մէջ էի խճճուած, որ ինձ այլ ևս օգնել չէի կարողանում և—վկայ է Աստուած—այդ միջոցին ու-

բախ սրտով մի բաժակ գինի անգամ չէի կարողանում խմել։

Գերտրուդ։ Կարողացա՞ր այդչափն արտասանե՞լ։

Լինհարդ։ Եթէ Արներն այնպէս սիրալի չլինէր դէպի ինձ, հարկաւ չէի կարող արտասանել։

Գերտրուդ։ Էլ ի՞նչ ասաց յետոյ։

Լինհարդ։ Նա ասաց, որ դժբաղդաբար չքաւորները մեծ մասամբ կարիքի ժամանակ այնպիսի մարդոց հետ են կապւում, որոնցից պէտք է փախչէին, ինչպէս ժանտախտից։— Այդ միջոցին ես ակամայ հառաչեցի. կարծեմ նա նկատեց այդ, որովհետև ցաւակցաբար շարունակեց. եթէ կարելի լինէր այդպիսիներին բան հասկացնել... Չքաւորը կիսով չափ ազատուած կլինի, եթէ գոնէ տղրուկի ձեռքը չընկնի։— Մի փոքր լռելուց յետոյ շուտով կրկին սկսեց և ասաց. «սիրտս ցաւում է, երբ մտածում եմ, թէ որչափ չքաւորներ զաղբալի թշուառութեան մէջ են ընկնում և հասկացողութիւն ու սիրտ չունին իրենց հանգամանքները մի այնպիսի տեղ յայտնելու, որտեղ նրանց սիրով կօգնէին, եթէ գիտենային բանի էութիւնը։ Աստուծոյ առաջ չես կարող արդարանալ, որ տարիներով մոլորուել ես տանուտէրի շնորհիւ և կնոջդ ու որդոցդ թողել անհանգստութեան ու վտանգի մէջ, առանց գոնէ մի անգամ ինձնից խորհուրդ և օգնութիւն խնդրելու։ Որմնադիր, մտածի՛ր, եթէ կինդ քեզնից աւելի հասկացողութիւն և սիրտ չունենար, ի՞նչ կլինէր քո վերջը։

Գերտրուդ։ Նա այդ բոլորն ասաց տան համարը հարցնելուց առա՞ջ։

Լինհարդ։ Այո՛, ինչպէս որ ասացի։

Գերտրուդ։ Դու աշխատում էիր այդ չասել ինձ։

Լինհարդ։ Կարծեմ որ այդ աւելի խելացի կլինէր, եթէ ոչ շա՞տ կհպարտանաս, որ այդպէս սրտի՞տ ես եղել։

Գերտրուդ։ Կարծո՞ւմ ես, որմնադիր։ Այո՛, ճիշտ է, ես միշտ կհպարտանամ արածիս վրայ, քանի որ կենդանի եմ ու քանի որ այդ մեզ համար լաւ հետևանքներ կունենայ։ Սակայն էլ ի՞նչ ասաց Արները։

Լինհարդ։ Նա հարցաքննեց ինձ շինութեան վերաբերութեամբ։ Լաւ էր, որ դեռ բոլորը չէի մոռացել։ Ամեն բան սաժէնով հաշուեցի և կրի ու աւազի սայլերի թիւը մանրամասնորէն յայտնեցի։

Գերտրուդ։ Հաշուի մէջ չսխալուեցաք։

Լինհարդ։ Ո՛չ, այս անգամ ո՛չ, սիրելիս։

Գերտրուդ։ Փա՞ռք Աստուծոյ։

Լինհարդ։ Այո՛, փա՞ռք Աստուծոյ։

Գերտրուդ։ Այժմ ամէն բան կարգի՞ն է։

Լինհարդ։ Այո՛, շա՛տ լաւ է։ Կարո՞ղ ես գուշակել, թէ ո՞րչափ փող տուեց առաջուց։—Լինհարդը շխշկացրեց իր քսակի միջի թալէրները և շարունակեց—երկար ժամանակ է, որ այսպէս չեմ շխշկացրել գրպանիս թալէրները, այնպէս չէ՞։ Գերտրուդը հառաչեց։

Լինհարդ։ Էլ մի՛ հառաչի, սիրելիս, ապրենք, խնայենք և առաջուայ կարիքն էլ չենք զգայ։

Գերտրուդ։ Այո՛, Աստուած օգնեց մեզ։

Լինհարդ։ Եւ մեզ հետ՝ գիւղի շատ մարդկանց։ Երեւակայիր, Արներն աշտարակի շինութեան համար մշակներ վարձեց տասը չքաւոր և կարիք ունեցող ընտանիքի հայրեր և իւրաքանչիւրին պէտք է տայ օրական 25 կրոյցէր։ Սիրելիս, դու պէտք է տեսնէիր՝ թէ նա ինչպիսի հոգացողութեամբ ընտրեց այդ մարդկանցը։

Գերտրուդ։ Ասա՛, ինչպէս։

Լինհարդ։ Կասէի, եթէ միտս լինէր։

Գերտրուդ։ Մտածիր մի փոքր։

Լինհարդ։ Լաւ։ Նա հարցրեց ինձ գիւղի բոլոր չքաւոր ընտանիքների մասին. թէ քանի՞ երեխայ ունեն, ինչ հասակի են, ինչ աշխատանք ու օժանդակութիւն են ստանում. յետոյ ընտրեց այնպիսիներին, որոնք ամենևին աշխատանք չունէին կամ թէ ամենից շատ անչափահաս զաւակների տէր էին ու երկու անգամ ասաց. եթէ ճանաչում ես մէկին, որ քեզ պէս ճնշուած դրութեան մէջ է, ասա՛ ինձ։ Ես էլ Հիւբէլ Բուդիի անունը տուի և նա անկասկած մի ամբողջ տարուայ աշխատանք կունենայ։

Գերտրուդ։ Շա՞տ լաւ ես արել, որ մեր գետնախնձորը գողանալու համար Բուդիին վրէժխնդիր չես եղել։

Լինհարդ։ Չքաւորին չեմ կարող վրէժխնդիր լինել, սիրելիս, այդ ընտանիքը սարսափելի թշուառութեան մէջ է։ Բուդիին մի երկու օր առաջ կրկին տեսայ գետնախնձոր հանելիս, սակայն չտեսնելու դրի։ Սիրտս ցաւեց. նրա ար-

տաքին տեսքը թանկութեան և սովի է նմանւում իսկ մենք, փա՜ռք Աստուծոյ, միշտ գոնէ ուտելու բան ունեցել ենք։

Գերտրուդ։ Այդ լաւ է, սիրելիս, բայց թշուառութեան միջոցին գողութիւնը չէ օգնում և գող չքաւորը կրկնակի կարիքի մէջ է ընկնում։

Լինհարդ։ Ի հարկէ. բայց երբ մարդ քաղցած է և միևնոյն ժամանակ տեսնում է, որ ուտելիքը գետնի մէջ փըթում է ու անասուններն են վայելում, ո՞րչափ կամքի ոյժ է հարկաւոր, որ նա գաղտնագողի ձեռք չմեկնի դէպի այդ անհրաժեշտ պիտոյքը։

Գերտրուդ։ Դժուար է, բայց չքաւորը պէտք է ունենայ այդ կամքի ոյժը, եթէ ոչ անխուսափելի է նրա դըժբաղդութիւնը։

Լինհարդ։ Սիրելիս, ո՞վ կարող է անել այդ և ո՞վ կարող է պահանջել այդ նրանից.

Գերտրուդ։ Աստուած այդ ոյժը պահանջելով չքաւորից, կարողութիւն է տալիս նրան և օգնում՝ յաղթելու կարիքի ստիպմունքին և հանգամանքների անյաջողութեանը։ Հաւատա՛ ինձ, Լինհարդ, Աստուած օգնում է չքաւորին և ոյժ ու հասկացողութիւն է տալիս նրան՝ դիմանալու այն բանին, ինչ որ համարեա թէ անհաւատալի է թւում։ Իսկ երբ անցնում է այդ վայրկեանը և մարդ հանգիստ խղճով է մնում, այն ժամանակ նրա ուրախութիւնն երկնային է. նա իրեն առաւել լաւ է զգում, քան նրանք, որոնք առիթ չունեն այդչափ չարչարուելու։

Լինհարդ։ Գիտեմ, Գերտրուդ, գիտեմ, որ դու էլ այդպէս ես, կոյր չեմ։ Ցաճախ տեսնում էի, թէ ի՞նչպէս ամենամեծ կարիքիդ ժամանակ Աստծուն էիր ապաւինում և գոհ էիր. բայց շա՞տ քիչ մարդիկ կան, որ կարիքի ու թշուառութեան մէջ քո՛զ պէս լինեն. մեծամասնութիւնն ինձ պէս թոյլ է։ Այդ պատճառով միշտ մտածում եմ, որ պէտք է աւելի աշխատել բոլոր չքաւորների համար հաց ու գործ գտնելու։ Ես կարծում եմ, որ նրանք այն ժամանակ աւելի լաւ կլինեն, քան այժմեան չքաւորութեան ու վշտերի մէջ։

Գերտրուդ։ Այդպէս չէ, սիրելիս։ Եթէ միայն գործն ու աշխատանքը բաղդաւորեցնէին չքաւորներին, այդ դէպ-

քում կարելի կլիներ շուտ օգնել նրանց, սակայն այդպէս չէ։ Երջանիկ լինելու համար թէ հարստի և թէ չքաւորի խիղճը պէտք է հանգիստ լինի. իսկ այդ նպատակին մարդ հասնում է աւելի շուտ կարիքի ու հոգսերի մէջ, քան թէ հանգստութեան և ուրախութեան միջոցին։ Աստուած սիրով աւելի շատ ուրախութիւններ կպատճառէր մեզ, բայց որովհետև մարդիկ բաղդաւորութիւնը, հանգստութիւնն ու ուրախութիւնը միայն այն ժամանակ կարող են վայելել, երբ նրանց սիրտը զօրեղ, համբերող և ընդունակ է շատ բաներին դիմանալու, այդ պատճառով էլ կարևոր է, որ շատ թշուառութիւն և կարիք լինի աշխարհում։ Առանց կարիքի շատ քիչ մարդոց սրտերն են կարգի ընկնում և ներքին հանգստութիւն գտնում. իսկ ում խիղճը հանգիստ չէ, գործ ունենալն ու չունենալը, հարուստ կամ աղքատ լինելը նշանակութիւն չունի։ Հարուստ, ձեր Մայէրն ամեն բան ունի իր սրտի ուզածին չափ, սակայն ամեն օր գինետանն է ընկած և աղքատ Վեխտէրից աւելի բաղդաւոր չէ. թէ և Վեխտէրն էլ ամեն օր ծարաւում է, բայց միայն երբեմն երբեմն է մի բաժակ գինի գտնում իր տանը։

Լինհարդը հառաչեց. գերտրուդը լռեց մի վայրկեան և ապա ասաց. արդեօք աշակերտներիդ նայեցի՞ր. աշխատո՞ւմ են։ Յովսէփն այսօր էլ գինետուն մտաւ ծածկաբար։

Լինհարդ։ Այդ անհաճոյ բան է։ Հարկաւ տանուտէրը կանչած կլինի նրան. նա մի տարօրինակ բան ասաց։ Ցուն դալուց առաջ ես նրա մօտ էի և եթէ ճիշտ է, որ նա նոր էր գինետնից եկել, այն ժամանակ նրա ասածն ինձ անհանգստացնում է. երևի իր խելքի վիշածը չէր ասում։

Գերտրուդ։ Ի՞նչ ասաց։

Լինհարդ։ Նա ասում էր՝ թէ Ղվինդիբրուխի քարը շատ լաւ է եկեղեցու պատի համար։ Իսկ երբ ես պատասխանեցի, թէ այն մեծ դաշտաքարերը, որ ահագին քանակութեամբ ածած են այս ու այնտեղ՝ աւելի լաւ են, նա ասաց որ իբրև թէ ես կամենում եմ միշտ յիմար մնալ և իմ օգուտը չեմ հասկանում և թէ եկեղեցու պատն աւելի գեղեցիկ ու տեսքով կլինի, եթէ Ղվինդիբրուխի քարով շինուի։ Ես կարծեցի թէ նա իմ բարին կամենալով է այդպէս ասում, բայց որովհետև յանկարծ սկսեց քարի մասին խօսել, մի

փոքր տարօրինակ թուաց ինձ։ Եթէ նա տանուտէրի մօտ է եղել, այն ժամանակ անկասկած այդտեղ մի գաղտնիք կայ։ Շվինդիբրուխի քարը փխրուն ու աւազոտ է և այդ շէնքի համար բոլորովին անպէտք։ Զլինի՞ թէ տանուտէրը մտածում է թակարդի մէջ ձգել ինձ։

Գերտրուդ։ Յովսէփն էլ բարի պտուղ չէ, զգուշացի՛ր նրանից։

Լինհարդ։ Այդտեղ ես թակարդի մէջ չեմ ընկնի։ Արներն եկեղեցու պատի համար աւազաքար չէ կամենում։

Գերտրուդ։ Ինչո՞ւ։

Լինհարդ։ Նա ասաց, թէ որովհետև պատի տակը աղբանոցներ և գոմերի կոյուղիներ կան, աւազաքարը կփթի ու կմաշուի բորակից։

Գերտրուդ։ Ճի՞շտ է նրա ասածը։

Լինհարդ։ Այո՛, մի անգամ, երբ դեռ օտար երկրումն էի աշխատում՝ մի շէնքի հիմքն աւազաքարից շինեցինք, բայց շուտով ստիպուած եղանք ամբողջ հիմքը նորից քանդելու։

Գերտրուդ։ Զարմանալի է, Արները ո՞րտեղից գիտէ այդ բաները։

Լինհարդ։ Ես էլ զարմանում եմ, բայց շա՞տ լաւ է հասկանում։ Նա հարցրեց նոյնպէս, թէ ամենալաւ աւազն ո՞րտեղ կարելի է գտնել. ստորին ջրաղացի մօտ, պատասխանեցի ես։ Այդ շատ հեռու է և ճանապարհն էլ զառիվեր, ասաց նա, թէ սայլապանները և թէ անասուններն շա՞տ կչարչարուեն. աւելի մօտիկ տեղ չգիտե՞ս։ Ես ասացի՝ թէ նոյն իսկ եկեղեցու մօտ շատ մաքուր աւազ կայ, բայց գեղինն ուրիշի սեփականութիւն է, պէտք է փողով գնել և որովհետև ճանապարհն էլ մարգագետնի միջովն է անցնում, դրա համար էլ պէտք է վճարել։—Անաս չունի. աւելի լաւ է փող վճարել, քան թէ այնքան հեռուից բերել, ասաց Արները։—Դեռ մի բան էլ ունիմ պատմելու։ Երբ Արներն աւազի մասին էր խօսում, ծառան յայտնեց Օբէրհօֆէնի կալուածատիրոջ գալուստը։ Ես կարծեցի թէ պէտք է այդէն հրաժեշտ տամ և ասացի. չեմ ուզում խանգարել ձեզ, ուրիշ անգամ կգամ. սակայն Արները ծիծաղեց և ասաց. ո՛չ, որմնադի՛ր, ես սիրում եմ սկսած գործս վերջացնել և յետոյ միայն տեսնել թէ էլ ո՞վ խօսելու բան ունի ինձ հետ։ Դու քո «մնաս բա-

րևով» լաւ ձեռքս ընկար. ինչպէս տեսնում եմ, քո հին սովորութիւնն է ամեն մի դատարկ բանի համար գործ ու աշխատանք դէն ձգելն ու տեղից վերկենալը։ Այդ բանին պէտք է վերջ դնես։—Ականջիս ետևը քերեցի և ինքս ինձ մտածեցի. աւելի լաւ կլինէր, որ լռէի և «մնաս բարևի» համար այս յանդիմանութիւնն էլ չստանայի։—Մասամբ էլ արժանի էիր դրան, ասաց Գերտրուդը և հէնց այդ միջոցին մի մարդ աղաղակեց նրանց տան առաջը. տանը մարդ չկայ։

14.

ՍՏՈՐ ՇԱՀԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Որմնադիրը բացեց դուռը և ներս մտաւ Շնաբէլգրիտէն, ժամկոչի հարսը, տանուտէրի հանգուցեալ եղբօր աղջիկը։ Նա բերանը մի փոքր բանալով՝ բարևեց որմնադրին ու իր կնոջը և ասաց. երևի այժմ էլ չես ցանկանայ մեր փչացած վառարանը նորոգել, Լինհարդ։

Լինհարդ։ Ինչո՞ւ չէ, ի՞նչն է փչացել։

Գրիտէ։ Դեռ չի փչացել, կամենում էի միայն հարցնել, որ կարևոր եղած ժամանակը գիտենամ։

Լինհարդ։ Շա՞տ հոգացող ես երևում, Գրիտէ, բայց կարող ես սխալուել։

Գրիտէ։ Այո՛, ժամանակները փոխւում են և դրանց հետ նաև մարդիկը։

Լինհարդ։ Այդ ճշմարիտ է, բայց վառարան նորոգող մարդիկ միշտ կգտնուին։

Գրիտէ։ Շա՛տ լաւ է, որ այդպէս է,

Գերտրուդը, որ ցայժմ լռութիւն էր պահպանել, վերջնում է հաց կտրելու դանակը և մի չորացած սև հաց կտրում՝ ընթրիքի արգանակի համար։ Սև հաց ես կտրում, ասաց Գրիտէն, բայց շուտով աւելի լաւը կունենաք, որովհետև ամուսինդ պալատական որմնադիր է դարձել։ Ի՞նչ սիմար ես, Գրիտէ։ Ես շնորհակալ կլինեմ Աստծուց, եթէ մինչև մահս միշտ այսպիսի հաց ունենամ, ասաց Գերտրուդը։

Գրիտէ։ Չէ՞ որ սպիտակ հացն աւելի լաւ է. և ինչո՞ւ չպէտք է սպիտակ ունենաք. երևի շուտով տանուտէրի կին կդառնաս, իսկ ամուսինդ էլ գուցէ տանուտէր, բայց այդ ժամանակ վայն եկել է ու մեզ տարել։

Լինտարդ։ Այդ կծու խօսքերով ի՞նչ ես կամենում ասել։ այդպիսի բան չեմ սիրում. եթէ ասելու բան ունիս, ուղղակի ասա։

Գրիտէ։ Կասե՛մ, որմնադի՛ր, եթէ այդպէս է. իմ մարդը լուսարարի աղջկայ ամուսինն է և մեր եկեղեցու գոյութեան օրից սկսած, երբէ՛ք լսուած չէ, որ վերանորոգութեան ժամանակ լուսարարի ընտանիքի անդամներն առաջին տեղը չբռնեն բանուորների մէջ։

Լինտարդ։ Ցետոյ ի՞նչ։

Գրիտէ։ Ցետոյ այն, որ այժմ տանուտէրի ձեռքն եղած տոմսակում նշանակուած են աւելի քան 12 գձուձների անուններ, եկեղեցու շինութեան վրայ բանելու համար, իսկ լուսարարի ընտանիքից մէկն էլ չէ յիշուած այդտեղ։

Լինտարդ։ Բայց ի՞նչ իմ բանն է այդ. մի՞թէ ես եմ գրել այդ անունները։

Գրիտէ։ Ո՛չ, դու չես գրել, բայց այդ անունները դո՛ւ ես ասել Արներին։

Լինտարդ։ Այդ արդէն չափից դուրս կլինէր, եթէ ե՛ս թելադրէի Արների գրած տոմսակները։

Գրիտէ։ Արդէն յայտնի է, որ դու ամեն օր դղեակումն ես ու հէնց այսօր էլ այնտեղ ես եղել։ Եթէ դու էլ այնպէս յայտարարէիր, ինչպէս եղել է ցայժմ, այն ժամանակ այդպիսի փոփոխութիւն չէր լինի։

Լինտարդ։ Սխալւում ես, Գրիտէ, եթէ հաւատում ես այդ բաներին։ Արներն այն մարդը չէ, որ պահպանէ հինը, եթէ համոզուած լինի, որ նորով աւելի լաւ բան կարող է անել։

Գրիտէ։ Երևում է։

Լինտարդ։ Բացի դրանից, նա կամենում էր այդ աշխատանքով էքաւորներին ու կարօտեալներին օգնել։

Գրիտէ։ Այո՛, հէնց միայն գձուձներին և մուրացկաններին է կամենում օգնել։

Լինտարդ։ Բոլոր էքաւորներն անպիտան մարդիկ չեն, Գրիտէ, երբէք այդպէս չպէտք է խօսես. մեզնից ոչ ոք չգիտէ՝ թէ ինչ կլինի իր վերջը։

Գրիտէ։ Հէնց այդ է բանը. ամեն մարդ պէտք է իր

հացի կտորի համար հոգայ և այդ պատճառով էլ ցաւում ենք, որ մոռացուել ենք։

Լինհարդ։ Ա՜խ, Գրիտէ, այդ ուրիշ բան է։ Դու գեղեցիկ կալուածներ ունես և կերակրում ես հօրդ տանը, իսկ հայրդ ամենից լաւ աշխատանքն ունի գիւղում։ Դու մեր չքաւորների նման ամենօրեայ հացի կարիք չունես։

Գրիտէ։ Ասա՛, ինչ որ կամենաս։ Երբ մենք կարծում ենք թէ մի բան մեզ է պատկանում, անշուշտ կցաւենք՝ եթէ այդ բանն ուրիշ չան բերանն ընկնի։

Լինհարդ։ Շներին մի կո՛ղմը թող, Գրիտէ, երբ մարդկանց մասին ես խօսում, եթէ ոչ մի անգամ էլ այնպիսի մի շանը կպատահես, որ կկծէ քեզ։ Իսկ եթէ կարծում ես, թէ այդ աշխատանքը քոնն է, կարող ես գործդ տեղ հասցնել և յայտնել այնտեղ, ուր կօգնեն քեզ՝ իրաւունքդ պաշտպանելու. դեռ երիտասարդ, ուժեղ ես և առողջ ոտքեր ու խօսելու կարողութիւն ունես։

Գրիտէ։ Շատ շնորհակալ եմ, պարոն որմնադիր, սիրուն խորհրդիդ համար։

Լինհարդ։ Դրանից լաւ խորհուրդ չեմ կարող տալ։

Գրիտէ։ Գուցէ դէպք լինի փոխադարձ ծառայութեան։ Մնա՛ս բարև։

Լինհարդ։ Մնա՛ս բարև, Գրիտէ, դրանից աւելի չեմ կարող օգնել։

Գրիտէն գնաց տուն, իսկ Լինհարդն իր բանուորների մօտ։

15.

ՄԻ ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ, ՈՐ ՄԻ ԲԱԺԱԿ ԳԻՆԻ ԱՐԺԷ

Առաւօտը Լինհարդը դեռ նոր էր հեռացել դղեակից, երբ Արները գզիր Ֆլինքի ձեռքով տանուտէրին ուղարկեց այն տոմսակը, որի մէջ գրուած էին նոր նշանակուած մշակների անունները։ Տանուտէրը պէտք է իմաց տար նրանց։ Գզիրն այդ հրամանը տանուտէրին հասցրեց ճաշից առաջ։ Յայժմ դղեակից տանուտէրի հասցէով ստացուած նամակների վրայ գրուած էր լինում. «Իմ սիրելի և հաւատարիմ տանուտէր Հումելին, Բոննալում». այժմ գրուած էր միայն՝ «տանուտէր Հումելին, Բոննալում»։

Ի՞նչ է մտածում դղեակի այդ անիծուած գրագիրը, որ ինձ յատուկ տիտղոսը չէ գրում հասցէի վրայ, ասաց տանուտէրը գղջին, հէնց որ նամակը ձեռքն առաւ։

Գղջիրը պատասխանեց. մտածիր թէ ի՞նչ ես ասում, տանուտէր. Արներն ինքը գրեց նամակի հասցէն։

Տանուտէր։ Ճշմարիտ չէ. ես ճանաչում եմ պուդր քսած աղքատ գրագրի ձեռքը։

Գլինքը շարժեց գլուխն ու ասաց. աչքովս տեսայ, որ Արներն ինքը գրեց. գրելիս հէնց նրա կողքին էի կանգնած սենեակում։

Տանուտէր։ Այդ դէպքում ես սխալուեցի, Գլինք, խօսքը բերնիցս դուրս թռաւ, մոռացիր այդ և արի մի բաժակ գինի խմիր։

— Միւս անգամ զգոյշ եղիր, տանուտէր, այդպիսի բաներից կարող են անհամութիւններ ծագել. ասաց Գլինքը, ներս մտաւ սենեակը, կարճ հրացանը մի անկիւն դրեց, մի բաժակ խմեց և ապա կրկին դուրս գնաց։

Տանուտէրը նամակը բաց արաւ, կարդաց և ասաց. սրանք սկզբից մինչև վերջը բոլորն էլ սրիկաներ ու մուրացկաններ են. իմ մարդկանցից ոչ ոք չկայ՝ բացի Հուաբէնմիխելից. Տէ՛ր Աստուած, այս ի՞նչ է նշանակում, մինչև անգամ մի մշակ չեմ կարող առաջարկել նրան և հէնց այսօր էլ պէտք է իմաց տամ նրանց։ Այս շատ ծանր աշխատանք կլինի ինձ համար, բայց պէտք է անեմ։ Նոյն իսկ այժմ կայցնեմ նրանց և խորհուրդ կտամ, որ երկուշաբթի դըղեակ գնան ու շնորհակալութիւն յայտնեն Արներին։ Դրանցից ոչ մէկին չէ ճանաչում նա և պարզ երևում է, որ որմնադիրն է առաջարկել դրանցը։ Երբ դրանք երկուշաբթի դղեակ գնան և ամենքն էլ այդպէս փախստականների նման ներկայանան Արներին՝ մէկն առանց գլխարկի, միւսն առանց կօշկի, զարմանք կլինի, եթէ որ հետևանքն ինձ համար նպաստաւոր չլինի։

Այսպէս մտածեց տանուտէրն ինքն իրեն, հագնուեց ու կրկին տոմսակը ձեռքն առաւ տեսնելու՝ թէ արդեօք ո՞վքեր են միմեանց մօտիկ ապրում, որ նոյն ճանապարհն երկու անգամ չգնայ։ Հիւբէլբուդին թէև ամենից մօտիկը չէր, բայց տանուտէրն առաջ նրա մօտ գնաց, որովհետև

Բրունէն կոչուած մարգագետինը նրա հօր ձեռքից կորզելուց յետոյ, նա սիրով չէր մտնում այդ տունը և տեսնելով նրանց աղքատ վիճակը, յիշում էր իր վատ արարքը։ Շուտ գնամ այդ անպիտանի մօտ, ասաց և իսկոյն նրանց պատուհանի առաջն էր։

16.

ԳԼԽԱՐԿՆԵՐԴ ՎԵՐՑՐԷ՛Ք, ՄԱՆՈՒԿՆԵՐ, ՄԱՀՈՒԱՆ ԱՆԿՈՂԻՆ Է

Հիւբէլրուդին հէնց այդ միջոցին նստած էր իր չորս զաւակների մօտ։ Երեք ամիս առաջ վախճանուել էր խեղճի կինն, իսկ այժմ յարդով լցրած քսակի վրայ ընկած էր նրա մեռնող մայրը և ասում Ռուդիին. ճաշից յետոյ չոր տերև աւելացրու վերմակիս մէջ, մրսում եմ։

Մա՛յր, հէնց որ վառարանի կրակը մարի, կերթամ, ասաց Ռուդին։

Մայր։ Արդեօք փայտ ունի՞ս, Ռուդի, կարծեմ—ո՛չ, դու չես կարող ինձ և մանուկներին մենակ թողնել ու անտառը գնալ։ Ա՜խ, Ռուդի, ծանր բեռն եմ քեզ համար։

Ռուդի։ Մա՛յր, այդպէս մի՛ ասի, ծանր բեռը չես ինձ համար, Աստուած իմ, գոնէ կարողանայի տալ քեզ այն, ինչ որ անհրաժեշտ է. դու ծարաւ ու քաղցած ես և չես գանգատւում. սիրտս կտրտւում է, մայր։

Մայր։ Մի՛ տանջուիր, Ռուդի. ցաւերս, փա՛ռք Աստուծոյ, այնչափ էլ մեծ չեն, Աստուած կօգնէ շուտով և իմ օրհնութիւնը վարձատրութիւն կլինի արածիդ փոխարէն։

Ռուդի։ Ո՜հ, մայր, երբէք իմ չքաւորութիւնն այնչափ ցաւ չէ պատճառել ինձ, որչափ այժմ, երբ ոչինչ չեմ կարող տալ քեզ և ոչինչ անել։ Ա՜խ, Աստուած, այդպէս հիւանդ ու թշուառ դրութեան մէջ նեղութիւն ես կրում նա և իմ չքաւորութեան պատճառով։

Մայր։ Երբ մարդ մօտենում է իր վախճանին՝ քիչ պահանջ ունի երկրիս վրայ. իսկ ինչ որ կարևոր է, տալիս է երկնաւոր Հայրը։ Շնորհակալ եմ նրանից, Ռուդի, նա այժ է տալիս ինձ վերջին ժամին։

Ռուդի։ (արտասուելով) Մա՛յր, կարծում ես թէ էլ չե՞ս լաւանայ։

Մայր։ Ո՛չ, Ռուդի, հարկաւ ոչ։

Ռուդի։ Աստուա՜ծ իմ։

Մայր։ Սփոփուիր, Ռուդի, միւս կեանքում աւելի երջանիկ կլինեմ։

Ռուդի։ (հեկեկալով) Ո՛հ, Աստուա՜ծ իմ։

Մայր։ Սփոփուիր, Ռուդի, դու իմ երիտասարդութեան ուրախութիւնն էիր, իսկ այժմ ծերութեանս սփոփանքն ես։ Շնորհակալ եմ Աստծուց։

Շուտով քո ձեռքերը կփակեն աչքերս, ես կերթամ Աստծոյ մօտ, կաղօթեմ քեզ համար և դու լաւ կլինես յաւիտեան։ Մտածիր երբեմն իմ մասին, Ռուդի, այս կեանքի բոլոր չարչարանքն ու ցաւը լաւ է մարդու համար, եթէ նա դիմանում է այդ ամենին։ Ինձ սփոփում և ինձ համար սուրբ է այն ամենը, ինչ որ անցել է գլխովս։ Շնորհակալ եմ Աստծուց իմ մանկութեան օրերի համար. սակայն երբ աշնանը կեանքի պտուղը հասունանում է և ցաւը ձմեռուան քնի համար տերևներից մերկանում, այն ժամանակ կեանքի չարչարանքը սուրբ է, ուրախութիւնները միայն երա՜զ. յիշիր ինձ, Ռուդի և լաւ կլինես թշուառութեանդ ժամանակ։

Ռուդի։ Մա՛յր, սի՛րելի մայր։

Մայր։ Մի բան էլ ունեմ ասելու, Ռուդի։

Ռուդի։ Ի՞նչ է, մայր։

Մայր։ Երեկուանից այդ բանը քարի նման ճնշում է սիրտս, պէ՞տք է ասեմ քեզ։

Ռուդի։ Ի՞նչ է այդ, սիրելի՛ մայր։

Մայր։ Ես տեսայ երէկ, որ Ռուդէլին անկողնիս ետեւը թաքկացած՝ գրպանից խորոված գետնախնձոր էր հանում և ուտում։ Նա իր քոյր ու եղբայրներին էլ տուեց ու նրանք էլ ծածուկ կերան։ Ռուդի, ինչպէս երևում է, այդ գետնախնձորը մերը չէ. եթէ ոչ երեխան սեղանի վրայ կածէր և բարձրաձայն մօտ կկանչէր իր քոյր ու եղբայրներին։ Ա՜խ, և մի հատ էլ ինձ կտար, ինչպէս որ արել է հազար անգամ։ Ամեն անգամ սիրտս կտրտւում էր, երբ նա մի բան ձեռքին դէպի ինձ էր թռչում և սրտանց ասում. դու էլ կե՛ր, մե՛ծ մայր։—Ո՛հ, Ռուդի, մի՞թէ այս սիրելի երեխան գո՞ղ պէտք է դառնայ. Ռուդի, այս միտքն երեկուա-

նից տանջում է ինձ. ո՞ւր է նա, բեր նրան այստեղ, ուզում եմ հետը խոսել։

Ռուդի։ Ո՞հ, թշուառս. (նա վազում, որոնում է մանկան և բերում մեծ մոր անկողնի մոտ։)

Մայրն ուժով նստում է անկողնում, վերջին անգամ դէմքը դարձնում դէպի մանուկը, բռնում նրա ձեռքերը և իր թոյլ, մեռնող գլուխը խոնարհում մանկան վրայ։ Մանուկը լալիս է բարձրաձայն եւ ասում. մեծ մայր, ի՞նչ ես ուզում՝ դեռ հո չես մեռնում, ա՜խ, մի՛ մեռնի, մեծ մայր։ Նա պատասխանում է կոտրուած ձայնով. այո՛, Ռուդելի, ես շուտով կմեռնեմ։

Ա՜խ, Աստուած իմ, մի՛ մեռնի, մեծ մայր, ասում է փոքրիկը։ Հիւանդի շունչը կտրւում է և. ստիպուած է լինում պառկել։ Մանուկն ու իր հայրն արտասուում են։

Սակայն մայրը նորից ուշքի է գալիս և ասում. այժմ այսպէս պառկած լաւ եմ։

Ռուդելի։ Էլ չե՛ս մեռնում, այնպէս չէ՞, մեծ մայր։

Մայր։ Այդպէս մի՛ անի, սիրելիս, ես գոհ սրտով եմ մեռնում և պէտք է գնամ երկնաւոր Հօր մոտ. եթէ դու գիտենա՞ս, Ռուդելի, թէ ի՞նչպէս ուրախ եմ, որ շուտով նրա մոտ պէտք է գնամ, այդպէս չես տխրի։

Ռուդելի։ Ե՛ս էլ ուզում եմ քեզ հետ մեռնել, մեծ մայր։

Մայր։ Ո՛չ, Ռուդելի, դու ինձ հետ չպէտք է մեռնես, այլ եթէ Աստուած կամենայ, երկար պէտք է ապրես ու քաջ լինես, իսկ երբ մի անգամ հայրդ կծերանայ ու թոյլ կլինի, դու պէտք է նրա օգնականը և սփոփանքը լինես։ Այնպէս չէ՞, Ռուդելի, դու կլսես նրան, քաջ կլինես ու պարտքդ կկատարես. խոստացիր ինձ այդ, սի՛րելիս։

Ռուդելի։ Այո՛, մեծ մայր, պարտքս կկատարեմ ու կլսեմ նրան։

Մայր։ Ռուդելի, երկնաւոր Հայրը, որի մոտ ես կերթամ շուտով, տեսնում ու լսում է այն ամենը, ինչ որ անում ենք ու խոստանում։ Դու գիտես այդ ու հաւատում ես, այնպէս չէ՞։

Ռուդելի։ Այո՛, մեծ մայր, ես գիտեմ ու հաւատում եմ։

Մայր։ Ապա ինչո՞ւ երէկ իմ անկողնի ետևը ծածկաբար գետնախնձոր կերար։

Ռուդելի։ Ների՛ր ինձ, մեծ մայր, էլ չեմ անի։ Ների՛ր ինձ, երբէք էլ չեմ անի, մեծ մայր։

Մայր։ Գողացա՞ծ գետնախնձոր էր։

Ռուդելի։ (հեկեկալով) Ա.....ա...այո՛, մեծ մայր։

Մայր։ Ո՞ւմից գողացար։

Ռուդելի։ Որմ.... որմ.... Որմնադրից։

Մայր։ Դու պէտք է գնաս նրա մօտ, Ռուդելի ու խնդրես, որ ներէ քեզ։

Ռուդելի։ Մեծ մայր, ի սէր Աստծոյ, այդ չեմ կարող անել։

Մայր։ Պէտք է անես, Ռուդելի, որ միւս անգամ էլ չգողանաս։ Առանց ընդիմախօսելու պէտք է գնաս,—և ի սէր Աստծոյ, սիրելիս, էլ ոչինչ չգողանաս. Աստուած ոչ օրի չէ թողնում անօգնական։ Ռուդելի, երբ քաղցած լինես, ոչինչ չունենաս և ոչինչ չգիտենաս, յոյսդ դիր Աստծոյ վրայ ու ոչինչ մի գողանայ։

Ռուդելի։ Մե՞ծ մայր, մե՞ծ մայր, էլ ոչինչ չեմ գողանայ. եթէ քաղցած էլ լինեմ, դարձեալ չեմ գողանայ։

Մայր։ Աստուած օրհնէ քեզ և պաշտպանէ, սիրելիս։ —Նա սեղմում է փոքրին իր սրտին, լաց է լինում ու շարունակում.—այժմ պէտք է որմնադրի մօտ գնաս ու ներողութիւն խնդրես նրանից։ Ռուդի, դու էլ նրա հետ գնա՛ և ասա՛ որմնադրի ընտանիքին, որ ես էլ եմ ներողութիւն խնդրում նրանցից և շատ ցաւում եմ, որ չեմ կարող վերադարձնել նրանց գետնախնձորը. ասա՛, թէ ես Աստծուց կխնդրեմ, որ օրհնէ նրանց։ Ես շա՞տ եմ ցաւում, որովհետև նրանք իրենց համար էլ հաղիւ ուտելու բան ունեն և եթէ Գերտրուդն այնպէս գիշեր ցերեկ չաշխատէր, չէին կարող իրենց մեծ ընտանիքն էլ կառավարել։ Ռուդի, դու սիրով մի երկու օր կաշխատես նրա համար, որ յետ ստանայ իր կորուստը, այնպէս չէ՞։

Ռուդի։ Ա՜խ, Աստուած իմ, ամենայն սիրով կանեմ այդ, սիրելի մայր։

Հէնց որ նա այդ խօսքերն արտասանեց, տանուտէրը դուռը թխկացրեց։

17.

ՀԻՒԱՆԴ ԿԻՆԸ ՀԱՏ ԼԱՒ Է ՎԱՐՈՒՈՒՄ

Հիւանդը նրա հաղից ճանաչեց տանուտէրին ու ասաց. Ռուդի, տանուտէրն է։ Երևի այն հացի ու իւղի գինը, որից ինձ համար արգանակ էիր պատրաստում, դեռ չես վճարել։

Ռուդի։ Ի սէր Աստծոյ, այդ մասին մի՛ մտածի, մայր, այդ ոչինչ։

Ես կաշխատեմ նրա համար, հունձ կանեմ կամ ինչ որ կամենայ։

—Ա՜խ, նա չի՛ սպասի քեզ, ասաց մայրը։ Ռուդին սենեակից դուրս գնալով մօտեցաւ տանուտէրին, իսկ հիւանդը հառաչեց ու ինքն իրեն ասաց. մեր դատից յետոյ—Աստուած թող ներէ այդ կուրացած խեղճին—երբ տեսնում եմ դրան, կարծես սրտիս մէջ մի բան են ցցում։ Վերջին ժամիս էլ հէնց նա՞ պէտք է գար պատուհանիս առաջ և հազար։ Երևի Աստծոյ կամքն է, որ նրան այժմ ներեմ և նրա հոգու համար աղօթեմ։ Այդպէս էլ կանեմ։ Աստուած, դու՛ ես կառավարում մեր բոլոր գործերը, ների՛ր նրան։ Յետոյ նա լսեց տանուտէրի բարձր խօսակցութիւնը, վախեցաւ ու ասաց, ա՜խ Աստուած, նա բարկացած է։

Խե՜ղճ Ռուդի, իմ պատճառով դու՛ ես նրա ճանկն ընկնում։ Եւ հիւանդը կրկին լսելով նրա բարձրաձայն խօսակցութիւնը, ուշաթափուեց։

Ռուդելին սենեակից դուրս է թռչում և կանչում հօրը. հայր, ե՛կ, ե՛կ, մեծ մայրը կարծեմ մեռաւ։

Ռուդին բացականչում է. Տէ՛ր Աստուած, տանուտէր, պէտք է ներս գնամ։

Տանուտէր։ Այո՛, այդ շատ կարևո՛ր է, շա՜տ մեծ դժբաղդութիւն կլինի, եթէ այդ կախարդը մեռնի։

Ռուդին չլսեց նրա խօսքերն ու արագ մտաւ սենեակը։ Հիւանդը շուտով ուշքի եկաւ ու երբ աչքերը բացեց, իսկոյն ասաց, նա բարկացած էր, Ռուդի, երևի չի ուզում սպասել։

Ռուդի։ Ո՛չ, մայր, այս անգամ նա լա՛ւ բան ասաց, սակայն լա՛ւ ես զգում քեզ։

Այո՛, ասաց մայրը լրջօրէն և ցաւակցաբար նայելով

նրա դէմքին։ Ի՞նչ բարի լուր կարող է բերել այդ մարդը, ի՞նչ ես ասում, երևի կամենում ես ինձ սփոփել և ինքդ միայն տանջուե՛լ. նա սպառնում էր քեզ։

Ռուդի։ Ո՛չ, վկայ է Աստուած, մա՛յր, նա յայտնեց ինձ, որ ես բանուոր եմ նշանակուած եկեղեցու վերանորոգութեան համար և օրական 25 կրոյցէր պէտք է ստանամ։

Մայր։ Տէ՞ր Աստուած, ճի՞շտ է արդեօք։

Ռուդի։ Այո՛, մա՛յր, և վերանորոգութիւնը մէկ տարուց աւելի կտևի։

Մայր։ Այժմ թեթևացած սրտով կմեռնիմ, Ռուդի։ Ո՜րքան բարի ես, բարձրեալդ Աստուած. Ռո՛ւդի, հաւատացա՛ծ եղիր միշտ, որ որչափ մեծ է կարիքը, այնչափ մօտիկ է Աստուած։ Հիւանդը լռեց մի վայրկեան ու ապա ասաց կրկին. կարծեմ բանս վերջացաւ. շունչս հետզհետէ կտրւում է։ Մենք պէտք է բաժանուենք իրարից. ուզում եմ վերջին հրաժեշտս տալ ձեզ։

Ռուդին դողում է, հանում գլխարկը, ընկնում ծնկների վրայ մօր անկողնի առաջ, կցում է ձեռքերը և աչքերը դէպ երկինք բարձրացնում. արտասուքն և հեկեկանքը չեն թողնում նրան խօսելու։

Մայրն ասում է. ուրախացի՛ր, Ռուդի, յոյս ունեմ որ յաւիտենական կեանքում մենք կրկին կտեսնուենք։

Մահը մի անցողական վայրկեան է. ես չեմ վախենում նրանից։ Ես գիտեմ, որ իմ Փրկիչն ապրում է իմ փոշու վրայ. և երբ իմ մարմինը կրկին ոսկորներիս վրայ կանգնի, այն ժամանակ ես իմ մարմնաւոր աչքով կտեսնեմ Աստծուն։

Ռուդին մի փոքր հանգստացաւ և ասաց. ուրեմն օրհնի՛ր ինձ, մա՛յր, եթէ Աստուած կամենայ, ես էլ շուտ կգամ այն երջանիկ աշխարհը։

Մայր։ Լսի՛ր, երկնաւոր Հայր և տուր քո օրհնութիւնը միակ որդուս, որ շնորհել ես ինձ և որին ես սրտանց սիրում եմ։ Ռուդի, իմ Աստուածը և իմ Փրկիչը լինի քեզ հետ և ինչպէս որ Իսահակին և Յակոբին իրենց հօր Աբրահամի պատճառով բարութիւն արաւ, ա՜խ, այնպէս էլ թող իմ օրհնութեան շնորհիւ բարութիւն անէ քեզ, որ սիրտդ նորից ուրախանայ և նրա անունը փառաբանես։

Լսի՛ր այժմ Ռուդի և կատարի՛ր ինչ որ ասեմ. երե-

խաներիդ սովորացրու կարգ ու աշխատանքի, որ նրանք չքաւորութեան մէջ անկարգ ու անպիտան չլինեն. սովորացրու նրանց՝ յոյս դնել Աստծոյ վրայ՝ թէ ուրախութեան և թէ ցաւի ժամանակ միշտ սիրով մնան միմեանց հետ։ Այդպիսով նրանք չքաւորութեան մէջ ևս երջանիկ կլինեն։ Ներիր նոյնպէս տանուտէրին ու երբ ես մեռած ու թաղուած կլինեմ, գնա՛ նրա մօտ ու ասա՛, որ ես նրա հետ հաշտ սրտով մեռայ։ Եւ եթէ Աստուած իմ խնդիրը լսէ, նա բաղդաւոր կլինի և իր մահից առաջ կճանաչէ ինքն իրեն։

Մի վայրկեանից յետոյ մայրը կրկին շարունակեց. Ռուդի, տուր ինձ իմ երկու Աստուածաշունչ գրքերը, իմ աղօթագիրքը և փոքրիկ արկղի մէջ գտնուող գիրքը։

Ռուդին վերկենալով չոքած տեղից, բերեց այդ ամենը մօր մօտ։

Այժմ առա՛ջ բեր բոլոր երեխաներին, ասաց մայրը։ Երեխաները սեղանի մօտ նստած լաց էին լինում. Ռուդին բերեց նրանց հիւանդի անկողնի մօտ և բոլորն էլ ընկան ծնկների վրայ։

Մայր։ Այդպէս մի՛ լաց լինէք, սիրելիք, երկնաւոր Հայրը կպահպանէ ձեզ և կօրհնէ. դուք սիրելի էիք ինձ, թանկագիներս և ինձ ցաւ է պատճառում, որ ձեզ այսպէս աղքատ ու առանց մօր եմ թողնում։ Բայց յոյսներդ Աստծոյ վրայ դրէք և հաւատացէք նրան՝ ինչ էլ որ պատահելու լինի ձեզ. այդ աւելի կօգնէ ձեզ, քան ձեր ծնողների հաւատարմութիւնը։

Յիշեցէք ինձ, սիրելիներս, թէև ձեզ համար ոչինչ չեմ թողնում, սակայն սիրելի էիք ինձ և գիտեմ, որ ես էլ սիրելի էի ձեզ։

Իմ բոլոր կարողութիւնն այս Աստուած շունչները և աղօթագիրքն է, բայց քիչ բան չկարծէք այդ, զաւակներս. իմ թշուառ կեանքի ընթացքում դրանց ընթերցմունքը հազար անգամ սփոփանք և նոր ոյժ են տուել ինձ։ Թող Աստծոյ խօսքը լինի նոյնպէս ձեր սփոփանքը և ձեր ուրախութիւնը. սիրեցէ՛ք և օգնեցէ՛ք միմեանց ձեր խորհուրդներով, քանի որ կենդանի էք և անխարդախ, հաւատարիմ ու սիրով ե-

ղէք բոլոր մարդկանց հետ. այդպիսով բաղդաւոր կլինէք կեան-
քի մէջ։

Ռուդի, մեծ սուրբ գիրքը պահիր սիրելի Բեթելիի, իսկ
փոքրը Ռուդելիի համար. իմ երկու աղօթագիրքը փոքրիկին
լինի։

—Ա՜խ, քեզ համար ոչինչ չունեմ, Ռուդի, բայց կարիք
էլ չունես, դու չես մոռանայ ինձ։ Ցետոյ դիմում է դար-
ձեալ Ռուդելիին. տո՛ւր ինձ ձեռքդ, սիրելիս, դու էլ ուրի-
շից բան չես վերցնի, այնպէս չէ՞։

—Ո՛չ, մեծ մայր, հաւատա՛ ինձ, ես էլ ոչ ոքից բան
չեմ վերցնի, ասաց Ռուդելին արտասուալի աչքերով։

—Լա՜ւ, այժմ հաւատում եմ ու կաղօթեմ քեզ համար,
ասաց մայրը։ Ցե՛ս, սիրելի՛ս, քո հօրը տալիս եմ մի թուղթ,
որ ստացել եմ այն քահանայից, որի մօտ ծառայում էի։
Երբ մեծանաս, կարդա՛, յիշի՛ր ինձ ու համեստ և հաւատա-
րիմ եղիր։

Այդ թուղթը Այեշտետէնի հանգուցեալ քահանայի
տուած վկայականն էր, որի մէջ ասուած էր, թէ Հիւանդ
Կատարինէն տասը տարի շարունակ ծառայել է նրա մօտ և
իր կնոջ մահից յետոյ օգնել է նրան իր զաւակները դաս-
տիարակելու և թէ Կատարինէին է ամէն բան յանձնուած
եղել և նա ամէն բան կառավարել է մեծ հոգացողութեամբ։
Քահանան շնորհակալութեամբ վկայում է, որ Կատարինէն
մօր պէս է վարուել իր որդոց հետ և այդ պատճառով մին-
չև իր կեանքի վերջը չի կարող մոռանալ նրա բարութիւնը։

Քահանայի մօտ ծառայելու միջոցին Կատարինէն բա-
ւականին դրամ էր վաստակել և իր ամուսնուն տուել՝ այն
մարգագետինը գնելու, որ յետոյ տանուտէրը կրկին կորզեց
նրա ձեռքից։ Այս թուղթը Ռուդիին յանձնելուց յետոյ,
հիւանդը շարունակեց. երկու նոր շապիկ էլ ունեմ, դրան-
ցից ո՛չ մէկն ինձ հետ գերեզման չդնես. հագինս էլ լաւ է.
մահիցս յետոյ հագուստս կտրտել տուր երեխաների համար.
հո՛գ տար Բեթելիի վրայ, նա կրկին մրսել է. միշտ մա-
քուր պահի, բոլորին լուա՛, սանդրի՛ր։ Եթէ կարողանաս,
ամառը մի այծ պահիր դրանց համար, Բեթելին կարող է
պահել նրան։

Ցաւում եմ, որ մենակ ես մնում, սակայն արիացի՛ր և

արա՛ ինչ որ կարող ես։ Եկեղեցու շինութեան վրայ բանելու համար ստացածդ վարձատրութիւնը մի փոքր կթեթևացնէ գործդ. այդ բանի համար էլ շնորհակալ եմ Աստծուց։

Մայրը լռեց. հայրն ու զաւակները մի վայրկեան մնացին ծնկների վրայ և ասում էին իրենց գիտցած բոլոր աղօթքները։

Յետոյ ոտքի կանգնեցին և Ռուդին ասաց. մայր, հիմա գնամ չոր տերև բերեմ վերմակիդ համար. հիւանդը պատասխանեց. էլ շտապելու բան չէ այդ, Ռուդի, այժմ, փա՜ռք Աստծոյ, սենեակում աւելի տաք է, իսկ դու փոքրիկի հետ պէտք է գնաս որմնադրի մօտ։

Ռուդին նշանով դուրս կանչեց Բեթելիին սենեակից և ասաց. մեծ մօր մօտ նստիր և եթէ նրան մի բան պատահի, Անելիին ուղարկիր ետևիցս, որմնադրի մօտ կլինեմ։

18.

ԽԵՂՃ ՄԱՆՈՒԿԸ ԳՈՂԱՑԱԾ ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ. ՀԻՒԱՆԴԸ ՄԵՌՆՈՒՄ Է

Ռուդին փոքրիկի ձեռքից բռնելով՝ գնաց Լինհարդի տուն։ Գերտրուդը մենակ էր տանը, երբ սրանք եկան և իսկոյն նկատեց, որ հօր ու որդու աչքերը արտասուքով լի էին։ Ի՞նչ ես ուզում, դրացի Ռուդի, ինչո՞ւ է լաց լինում փոքրիկը, հարցրեց նա սիրալի կերպով ու ձեռքը մեկնեց դէպի երեխան։

—Ա՜խ, Գերտրուդ, դժբաղդ եմ, պատասխանեց Ռուդին, Ռուդելին մի քանի անգամ ձեր գետնախնձորից ծածուկ վերցրել է. մայրս երեկ նկատել էր այդ և սա էլ խոստովանեց իր յանցանքը. ների՛ր մեզ, Գերտրուդ, մայրս մահուան անկողնի մէջ է. ա՜խ, Աստուած, իսկոյն չեմ կարող վերադարձնել ձեր գետնախնձորը, բայց սիրով կաշխատեմ ձեզ մօտ դրա փոխարէն։ Ների՛ր մեզ. երեխան այդ արել է սաստիկ քաղցից ստիպուած։

Գերտրուդ։ Լո՛ւր այդ մասին, Ռուդի, իսկ դո՛ւ, փոքրիկ, ե՛կ խոստացիր ինձ, որ էլ ուրիշից բան չես վերցնի ծածուկ։ Գերտրուդը համբուրում է երեխային և ասում. դու ազնիւ մեծ մայր ունես, նրա պէս համեստ ու պարկեշտ եղի՛ր։

Ռուդելի։ Ներիր ինձ, տիկին, վկայ է Աստուած, որ ես էլ չեմ գողանայ։

Գերտրուդ։ Ո՛չ, սիրելիս, էլ այդպիսի բան չանես, դու չգիտես թէ ի՞նչ թշուառ և դժբաղդ դրութեան մէջ են ընկնում գողերը. էլ մի՛ գողանայ և երբ քաղցած լինես, աւելի է, արի մօտս և ասա ինձ. եթէ կարողանամ միշտ մի բան կտամ քեզ։

Ռուդի։ Շնորհակալ եմ Աստծուց. այսուհետև կբանեմ եկեղեցու շինութեան վրայ և երեխաներս էլ քաղցից ստիպուած գողութիւն չեն անի։

Գերտրուդ։ Ես ու իմ ամուսինը նոյնպէս շա՞տ ուրախացանք, որ Արները քեզ չէ մոռացել և բանուոր է նշանակել։

Ռուդի։ Ա՜խ, ո՞րքան ուրախ եմ, որ մայրս այդ սփոփանքը լսեց։ Ասա՛ ամուսնուդ, որ ես նրա մօտ հաւատարմութեամբ ու պատուով կաշխատեմ առաւօտից—երեկոյ և փիրով իմ վարձից կտամ ձեր գետնախնձորի գինը։

Գերտրուդ։ Այդ մասին թող խօսք չլինի, Ռուդի, Ալինհարդը հարկաւ քեզնից ոչինչ չի վերցնի. մենք էլ, փա՜ռք Աստծոյ, այդ շինութեան գործի միջոցով մի փոքր թեթեւացանք։ Ռուդի, ես կգամ քեզ հետ մօրդ մօտ։

Գերտրուդը լցրեց Ռուդելիի գրպանը չոր պտուղներով և մի անգամ էլ ասաց. սի՛րելիս, այլ ևս ոչ ոքից քան մի վերցնի ծածուկ. յետոյ Ռուդիի հետ միասին գնաց նրա մօր մօտ։ Երբ Ռուդին ընկուզենու տակ սկսեց տերևներ ժողովել իր մօր վերմակի համար, Գերտրուդն էլ օգնեց նրան և ապա միասին շտապեցին Կատարինէի մօտ։

Գերտրուդը բարևեց Հիւանդին, բռնեց նրա ձեռքն ու արտասուեց։

Դո՞ւ ես լալիս, Գերտրուդ, ասաց մեծ մայրը, մենք պէտք է լանք. ների՛ր մեզ։

Գերտրուդ։ Ա՜խ, ի՞նչ ներելու բան կայ, Կատարինէ, ձեր կարիքը սիրտս կտրտում է, իսկ դու ո՞րչափ բարի ու հոգացող ես։

Աստուած քո բարութեան ու հոգացողութեան փոխարէն ընտանիքդ կօրհնէ։

Կատարինէ։ Ներեցի՛ր մեզ, Գերտրուդ։

Գերտրուդ։ Այդ մասին մի՛ խօսիր, Կատարինէ, ես սիրով կցանկանայի հիւանդութեանդ ժամանակ մի բանով օգնել քեզ։

Կատարինէ։ Շա՜տ բարի ես, Գերտրուդ, շնորհակալ եմ քեզնից, սակայն Աստուած շուտով ինքը կօգնէ։ Ռուդելի, ներողութիւն խնդրեցի՛ր Գերտրուդից, ներե՞ց արդեօք քեզ։

Ռուդելի։ Այ՛, մեծ մայր, տե՜ս, ո՞րքան բարի է նա։ (ցոյց է տալիս մրգով լի գրպանը։)

Ի՞նչպէս քունս տանում է, ասաց մեծ մայրը, օրինաւոր կերպով ներողութիւն խնդրեցի՞ր նրանից, Ռուդելի։

Ռուդելի։ Այո՛, մեծ մայր։

Կատարինէ։ Աչքերս մթնում են. պէտք է շտապեմ, Գերտրուդ, ասաց նա ցածր ու կոտրուած ձայնով։

Մի բան էլ պէտք է խնդրեմ քեզնից. կարո՞ղ եմ.... այս դժբաղդ մանուկը քեզնից գողացել է.... կարո՞ղ եմ խնդրել, Գերտրուդ,.... երբ ես մեռնեմ.... այս խեղճ, անտէր մանուկներս,.. դրանք անտէր են.... (նա մեկնում է ձեռքը. աչքերն արդէն փակ են) – կարո՞ղ եմ յուսալ.... լսի՛ր և հետևիր նրան, Ռուդելի.... Հիւանդը հոգին աւանդեց՝ չկարողանալով խօսքը վերջացնել։

Ռուդին կարծելով թէ հիւանդը քնեց, ասաց մանուկներին. ոչ ոք ձայն չհանի, նա քնած է։ Երանի նորից ուշքի գա՜ր. սակայն Գերտրուդը զգաց, որ Կատարինէն մեռաւ և յայտնեց Ռուդիին։

Ես չեմ կարող նկարագրել՝ թէ ի՞նչպէս Ռուդին ու փոքրիկները ձեռքերը միմեանց խփեցին և ողբում էին՝ անմսիթար։ Ընթերցո՛ղ, թո՛ղ ինձ, որ լռեմ ու լաց լինեմ, որովհետև սիրտս կտրտւում է, երբ մտածում եմ թէ մարդկութիւնն ի՞նչպէս երկրի փոշու մէջ հասունանում է անմահութեան համար. իսկ փարթամութեան և ունայնութեան մէջ դեռ չհասունացած՝ թառամում է։

Մարդկութի՛ւն, կեանքի արժէքը մարդուս մահուան անկողնի վրայ կշռի՛ր։ Եւ դո՛ւ, որ արհամարհում ես չքաւորներին, ցաւակցում՝ բայց չես ճանաչում, ասա՛ ինձ, արդեօք կարո՞ղ է մեռնել նա, ով դժբաղդ կեանք է ունեցել։ Սակայն, ես լռում եմ, ես չեմ ցանկանում ձեզ ուսուցանել, մարդի՛կ։ Միայն սիրով կցանկանայի, որ դուք ձեր աչքերը

քանայիք և շուրջներդ նայելով՝ տեսնէիք թէ ո՞ր տեղ է աշխարհիս բաղդաւորութիւնն ու դժբաղդութիւնը, օրհնութիւնն ու անէծքը։

Գերտրուդը սփոփեց խեղճ Ռուդիին և յայտնեց նրա աղնիւ մօր վերջին ցանկութիւնը, որ նա կսկծից չէր լսել։

Ռուդին անկեղծ սրտով սեղմեց Գերտրուդի ձեռքը և ասաց. ափսո՞ս իմ խեղճ մայր, ո՞րչափ բարի էր նա։ Գերտրուդ, դու էլ չես մոռանայ նրա խնդիրը, այնպէս չէ՞։

Գերտրուդ։ Պէտք է քարասի՞րտ լինէի, որ նրա ասածները մոռանայի. կարողացածիս չափ կօգնեմ զաւակներիդ։

Ռուդի։ Ա՜խ, արած բարութեանդ փոխարէն Աստուած կվարձատրէ քեզ։ Գերտրուդը դէմքը դարձրեց դէպի պատուհանը, արտասուքը սրբեց, աչքերը դէպ երկինք բարձրացրեց, հառաչեց և յետոյ արտասուալի աչքերով գրկեց երեխաներին, ննջեցեալին պատրաստեց՝ թաղելու համար ու ամեն բան հոգալուց յետոյ գնաց իր խրճիթը։

19.

ՀՈԳՈՒ ԼԱՒ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՍՓՈՓՈՒՄ, ԶՈՒԱՐԹԱՑՆՈՒՄ ԵՒ ՕԳՆՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՆ. ԻՍԿ ՏԽՐՈՒԹԻՒՆԸ ՉԱՐՁԱՐՈՒՄ

Տանուտէր Հումելը Ռուդիի մօտից գնաց միւս բանուորների մօտ և առաջ տեսաւ Եօգլի Բէրին։ Սա երգելով ու սուլելով փայտ էր կոտրտում, բայց երբ տանուտէրին տեսաւ, աչքերը չռեց ու ասաց. եթէ փողի համար ես գալիս, տանուտէ՛ր, ոչինչ չունեմ։

Տանուտէր։ Արտի մէջ եղած թռչնակի պէս ես երգում ու սուլում, մի՞թէ կարելի է, որ փող չունենաս։

Բէր։ Եթէ ողբալով հաց ստանայի, այն ժամանակ չէի սուլի, բայց ճի՛շտն ասա, ի՞նչ ես ուզում։

Տանուտէր։ Ոչինչ, պէտք է յայտնեմ միայն, որ դու եկեղեցու շինութեան վրայ բանուոր ես նշանակուած և օրական 25 կրոյցեր վարձատրութիւն կստանաս։

Բէր։ Ճշմարի՞տ։

Տանուտէր։ Լուրջ բան եմ ասում, երկուշաբթի օրը պէտք է դղեակ գնաս։

Բէր։ Եթէ ճշմարիտ ես խօսում, շատ շնորհակալ եմ,

պարոն տանուտէր, տեսնո՞ւմ ես, որ այսօր կարող եմ երգել ու սուլել։

Տանուտէրը ծիծաղելով հեռացաւ նրանից և գնալիս ինքն իրեն ասաց. կեանքիս մէջ մի ժամ անգամ այս մուլոցկանի պէս ուրախ չեմ եղել։

Բէրը ներս մտաւ, իր կնոջ մօտ և ասաց. միշտ պէտք է արիասիրտ լինել. Աստուած մեր բարին է ցանկանում. կին, ինձ էլ բանուոր են նշանակել եկեղեցու վերաշինութեան համար։

Կինը։ Այո՛, դեռ շա՞տ երկար ժամանակ կանցնի, մինչև հերթը քեզ գայ, դու միշտ պարկով լի սփոփանք ունես, իսկ հաց՝ երբէ՞ք։

Բէր։ Այսուհետև հացն էլ անպակաս կլինի, եթէ օրական վարձ ստանամ։

Կինը։ Բայց արդեօք օրական վարձն էլ անպակա՞ս կլինի։

Բէր։ Այո՛, սուրբ խորհուրդը վկայ, Արները լաւ է վարձատրում իր բանուորներին և այդ էլ անպակաս կլինի։

Կինը։ Կատակ ես անո՞ւմ, թէ ճիշտ է շինութեան մասին ասածդ։

Բէր։ Հէնց այժմ յայտնեց տանուտէրը, որ երկուշաբթի օրը միւս բանուորների հետ դղեակ գնամ։

Կինը։ Այդ շա՞տ լաւ կլինէր. երանի՜ թէ գոնէ մի ժամ հանգիստ լինելու յոյս ունենայի։

Բէր։ Այդպիսի ժամեր շատ կունենաս այսուհետև. երեխայի պէս ուրախ եմ, որ դու էլ չես բարկանայ, երբ ես ուրախ ու զուարթ տուն կգամ։ Ստացած վարձատրութեանս վերջին կոպէկն էլ տուն կբերեմ։ Կեանքն ինձ երբէք ուրախութիւն չէր պատճառի, եթէ յոյս չունենայի, որ կգայ ժամանակ, երբ դու ուրախութեամբ կմտածես, թէ մի քաջ ամուսին ունես, թէև ունեցած կարողութիւնդ շա՞տ պակասել է իմ շնորհիւ։ Ների՛ր ինձ, եթէ Աստուած կամենայ, այն էլ կրկին ձեռք կբերեմ։

Կինը։ Քո արիասրտութիւնն ուրախացնում է ինձ, բայց անհոգութիւնն էլ լաւ բան չէ։

Բէր։ Մի՞թէ պարաքս չեմ կատարում։

Կինը։ Այդ չեմ ասում, բայց երբ տանը հաց չի լինում՝ երբէք չես տրտմում։

Բէր։ Սակայն եթէ տխրեմ՝ հաց կստանա՞նք։

Կինը։ Ուրիշ կերպ չեմ կարող. ես միշտ տխուր եմ լինում։

Բէր։ Արիացի՛ր ու զուարթացիր, կի՛ն և կրկին ուրախ կլինես։

Կինը։ Այո՛, երկուշաբթի ծիրը դղեակ գնալու համար կարգին հագուստ չունեմ։

Բէր։ Է՜հ, ինչ անեմ. դու էլ միշտ հոգսեր պիտի ունենա՞ս։

Հումելը գնաց Լոյպի մոտ, բայց նա տանը չլինելով՝ տանուտէրը պատուիրեց նրա դրացի Հիւգլիին, որ յայտնէ նրան ու ինքը գնաց Հանս Լէէմանի մոտ։

20.

ԶՈՒՐ ԵՒ ԱՒԵԼՈՐԴ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆԸ ՇՐՋՄՈԼԻԿ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՄԱՐԴՈՒՆ

Լէէմանն իր տան առաջը կանգնած՝ յորանջելով այս ու այն կողմն էր նայում, երբ հեռուից տեսաւ տանուտէրին ու ինքն իրեն ասաց. երևի մի նոր բան կա՞յ և աղաղակեց. ո՞ւր ես գնում, տանուտէ՛ր։

Տանուտէր։ Քեզ մոտ եմ գալիս, Լէէման։

Լէէման։ Մեծ պատիւ է ինձ համար, տանուտէ՛ր, բայց ասա՛ խնդրեմ՝ ի՞նչ է անում որմնադրի կինը. նա էլի մեծ բերա՞ն է բաց անում, ինչպէս որ արեց անցեալ օրն եկեղեցու բակում։ Կատարեա՞լ կախարդ էր։

Տանուտէր։ Կարո՞ղ ես այդպէս խօսել, դու նրա մարդու մշակն ես այժմ։

Լէէման։ Ուրիշ ոչինչ նորութիւն չգիտե՞ս։

Տանուտէր։ Ո՛չ, ես ճիշտ եմ ասում, դղեակից եկած հրամանի համաձայն՝ եկել եմ քեզ յայտնելու այդ։

Լէէման։ Ի՜նչպէս արժանացայ այդ պատուին, պարո՛ն տանուտէր։

Տանուտէր։ Ես ի՞նչ գիտեմ։

Լէէման։ Ե՞րբ պէտք է գործի գնամ։

Տանուտէր։ Կարծեմ առաւօտեան։

Լէէման։ Քանի՞ բանուոր ենք ընդամենը, պարո՛ն տանուտէր։

Տանուտէր։ Տասը։

Լէէման։ Ասա խնդրեմ, ո՞րոնք են։

Տանուտէրը դրանց անունները տուեց, իսկ Լէէմանը քսանից աւելի անուններ ասաց ու հարցրեց. Նա չէ՞, նա նո՞յնպէս չէ. ուշանում եմ, ասաց վերջապէս տանուտէրը և շարունակեց իր ճանապարհը։

21.

ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՆՁ

Լէէմանի մօտից տանուտէրն ուղղակի գնաց Եօգլի Լէնկի մօտ։ Սա նստած էր վառարանի քարի վրայ և ծխում էր. կինը թել էր մանում, իսկ հինգ կիսամերկ մանուկներն ածած էին յատակի վրայ։ Տանուտէրը համառօտ յայտնեց նրան իր գալու պատճառը։ Լէնկը բերնից հանեց ծխամորջը և պատասխանեց. շա՞տ զարմանալի է, որ մի անգամ ինձ էլ մի լաւ բան է ընկնում. կեանքումս միշտ զրկուած եմ եղել ամեն բարի բանից։

Տանուտէր։ Լէնկ, կարծեմ մենակ դու չես այդպէս։

Լէնկ։ Իմ եղբայրն էլ վարձուածների թւո՞ւմն է։

Տանուտէր։ Ո՛չ։

Լէնկ։ Ո՞վքեր են միւսները։

Տանուտէրը տալիս է նրանց անունները։

Լէնկ։ Իմ եղբայրը հօ աւելի լա՞ւ բանուոր է, քան Բուդին, Բէրն ու Մարքսը. իսկ Կրիխէրի մասին չեմ էլ ուզում խօսել։ Աստուած վկայ, այդ տասը մարդկանց մէջ մէկն էլ չկայ, բացի ինձնից, որ իմ եղբօր կիսի չափ էլ կարողանար աշխատել։ Տանուտէր, չե՞ս կարող այնպէս անել, որ նա էլ գայ բանելու։

Չգիտեմ, ասաց տանուտէրը, ընդհատեց խօսակցութիւնն և գնաց։

Լէնկի կինը լուռ էր, քանի որ տանուտէրն այդտեղ էր, բայց այդ խօսակցութիւնը նրա սրտին դիպաւ և հէնց որ տանուտէրը գնաց, նա իր մարդուն ասաց. դու ապերախտ ես Աստծոյ ու մարդկանց առաջ։ Երբ ամենամեծ կարիքիդ ժամանակ Աստուած քեզ օգնութիւն է ուղարկում, դու զրպարտում ես դրացիներիդ, որոնց Աստուած նոյն բարութիւնն է արել։

Լէնկ։ Իմ ստացած կոպէկների փոխարէն պէտք է աշխատեմ, զուր հո չե՞մ ստանալու։

Կինը։ Բայց չէ՞ որ մինչև այժմ ոչինչ վաստակ չունէիր։

Լէնկ։ Այո՛, սակայն աշխատանք էլ չունէի։

Կինը։ Եւ մանուկներդ հաց չունէին։

Լէնկ։ Բայց ես էլ ձեզ նման ոչինչ չունէի։

Կինը լռում է և լաց լինում դառն արտասուքով։

22.

ՍՐՏՄՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԻ ԿԱՐԵԼԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ ՀԱՆԴԱՐՏԱՑՆԵԼ

Տանուտէրը Լէնկի մօտից գնաց Կրիխերի մօտ ու ճանապարհին դիպուածով պատահեց Հանս Վիւստին։ Եթէ հեռուից տեսնէր նրան, ճանապարհից կշեղուէր, որովհետև Ռուդիի գործից յետոյ այդ երկուսը միմեանց պատահելիս, կարծես ամաչում էին իրարից։ Բայց այժմ անսպասելի կերպով պատահեցան միմեանց, ներքին աղբիւրի մօտ, փողոցի անկիւնում։

—Դո՞ւ ես, Վիւստ, հերցրեց տանուտէրը։—այո՛, ես եմ, պատասխանեց Վիւստը։

Տանուտէր։ Ինչո՞ւ էլ ինձ մօտ չես գալիս. երևի բոլորովին մոռացել ես, որ ինձ փող ես պարտական։

Վիւստ։ Ես այժմ փող չունեմ. իսկ երբ մտաբերում եմ անցեալը՝ վախենում եմ. քո փողը շա՞տ թանկ նստեց ինձ։

Տանուտէր։ Երբ փողը տուի, այդպէս չէիր խօսում. տես, ո՞րքան վատ բան է եղել մէկին օգնելը։

Վիւստ։ Օգնելը վատ բան չէ՛, բայց երբ այնպէս են օգնում, որ օգնութիւն ստացողը յետոյ մի ժամ անգամ հանգստութիւն չէ ունենում, այդ ուրիշ բան է։

Տանուտէր։ Այդպէս մի՛ խօսի Վիւստ, այն ժամանակ միայն ճշմարիտն ասացիր։

Վիւստ։ Ի հարկէ դու միշտ այդպէս ես ասում, բայց իմ խիղճն անդադար ասում է, որ ես սուտ երդուեցի։

Տանուտէր։ Այդ ճշմարիտ չէ, Վիւստ, հոգիս վկայ, ճշմարիտ չէ։ Դու երդուեցիր միայն այն, ինչ որ առաջդ

կարդացին, իսկ գրածը ճիշտ էր. հարիւր անգամից աւելի կարդացի ես այն գրուածքը քեզ մօտ և դու միշտ ասում էիր. այո՛, ճիշտ է, կարող եմ երդուել։

Միթէ՞ ճշմարիտ չէր։ Այդպէս ես խօսում, որ պարտքդ չպահանջեմ և էլի երկար սպասեմ։

Վիւստ։ Ո՛չ, տանուտէր, սխալւում ես։ Եթէ փող ունենայի, հէնց այս րոպէիս կտայի, որ էլ աչքիս չերևայիր. քեզ տեսնելիս սիրտս սկսում է բաբախել։

Ի՞նչ յիմար ես, ասաց տանուտէրը, բայց նրա սիրտն էլ էր բաբախում։

Վիւստ։ Ես արդէն վաղուց նկատել էի թէ դու ի՞նչպէս էիր կարդում, բայց հէնց սկզբից կալուածատիրոջ խօսքերից հասկացայ, որ նա կարծես թէ ուրիշ տեսակ էր ըմբռնել։

Տանուտէր։ Կալուածատիրոջ բերանացի խօսածը քեզ չէ վերաբերում բոլորովին, դու երդուեցիր միայն առաջդ կարդացած տոմսակի վրայ։

Վիւստ։ Այո՛, բայց նա այնպէս վճռեց, ինչպէս որ հասկացել էր բերանացի խօսակցութիւնից։

Տանուտէր։ Եթէ կալուածատէրը յիմարի մէկն էր, այդ իր գործն է, քե՞զ ինչ. հօ տոմսակն առաջն ունէր, եթէ պարզ չէր գրած՝ կարող էր ուրիշ տեսակ գրել տալ։

Վիւստ։ Ես շատ լաւ գիտեմ, որ դու կարող ես ամեն անգամ քեզ արդարացնել, սակայն դրանով իմ սիրտը չէ հովանում և ճաշակուելու ժամանակ քի՞չ է մնում, որ ամոթից գետինը մտնեմ։ Տանուտէր, երանի թէ երբէ՞ք պարտական չլինէի քեզ. երանի՞ երբէք ճանաչած չլինէի քեզ կամ թէ երդուելուցս առաջ մեռնէի՞։

Տանուտէր։ Ի սէր Աստծոյ, Վիւստ, զուր տեղը ինքդ քեզ մի՛ տանջի. յիմարութիւն է արածդ. յիշի՛ր գոնէ գործի բոլոր հանգամանքները. չէ՞ որ նոյն իսկ քո ներկայութեամբ ես պարզ ու որոշ կերպով հարցրի փոխանորդին. թէ արդեօք Վիւստը տոմսակում գրուածի՞ ճշմարտութիւնը պէտք է երդմամբ հաստատի, թէ ուրիշ բան. մինչև անգամ ասացի, որ դու լա՞ւ չես հասկանում։ Յիշո՞ւմ ես՝ թէ նա ի՞նչ պատասխանեց։

Վիւստ։ Այո՛, բայց դրանով ի՞նչ. ...

Տանուտէր։ Նա էլ որոշ խօսքերով ասաց. Վիւստը պէտք է երդուի այն, ինչ որ գրուած է տոմսակի մէջ և ոչ մի մաղաչափ աւելի. նա ճիշտ այս խօսքերը չասաց։

Վիւստ։ Այո՛, այդպէս ասաց, բայց դրանով ի՞նչ....

Տանուտէր։ Ինչպէ՞ս թէ՝ դրանով ինչ, այդ բաւական չէ՞ քեզ համար։

Վիւստ։ Ո՛չ, տանուտէր, եթէ ուզում ես՝ այժմ ամեն բան կասեմ. փոխանորդն էլ ինձպէս պարտական էր քեզ և դու շա՜տ լաւ գիտես թէ ի՞նչ անպիտանն էր նա, այդ պատճառով ինձ համար մի առանձին սփոփանք չէ այն թեթեւամիտ մարդու ասածները։

Տանուտէր։ Քո բանը չէ նրա կեանքը քննադատել. նա իր գործը հասկանում էր, այդքանը քեզ էլ յայտնի է։

Վիւստ։ Ո՛չ, այդ յայտնի չէ ինձ, բայց գիտեմ, որ նա անպէտք մարդ էր։

Տանուտէր։ Այդ քեզ չէ՛ վերաբերում։

Վիւստ։ Երբ ես մի մարդու ճանաչում եմ մի որևէ գործի մէջ իբրև վատ ու անաստուած, ուրիշ գործերումն էլ չեմ կարող նրան հաւատալ։ Ես կարծում եմ, որ այն անպիտանը, քո պարոն փոխանորդը, ինձ քնացրեց և այդ, կարծեմ որ, ինձ է վերաբերում։

Տանուտէր։ Թո՛ղ այդ մտքերը, Վի՛ւստ, դու երդուեցիր միայն յանուն ճշմարտութեան։

Վիւստ։ Երկար ժամանակ ես էլ այդպէս էի կարծում, բայց անցաւ այդ ժամանակը, էլ չեմ կարողանում ինձ խաբել։ Խե՜ղճ Ռուդի. ուր որ գնում եմ, միշտ նրան եմ աչքիս առաջ կանգնած տեսնում։ Խե՜ղճ Ռուդի. թշուառութեան, քաղցի ու կարիքի մէջ նա հառաչանք է արձակում դէպ Աստուած և իմ դէմ բողոքում։ Ո՜հ, նրա զաւակներն այժմ հիւանդ են և գնչուների նման դեղնած, ծոմռուած ու սեւացած. իսկ առաջ հրեշտակների նման գեղեցիկ էին ու ծաղկափթիթ. իմ երդման շնորհիւ նրանք զրկուեցան իրենց մարգապետնից։

Տանուտէր։ Ես իրաւունք ունէի. իմ ասածը ճիշտ էր. իսկ այժմ Ռուդին աշխատանք ունի եկեղեցու վերաշինութեան գործում և նա կրկին կուղղուի։

Վիւստ։ Այդ ի՞նչ իմ գործն է. եթէ ես երդուած

չլինէի, ինձ համար միևնոյնը կլինէր՝ թէ արդեօք Բուդին հարուստ է, թէ մուրացկան։

Տանուտէր։ Մի վիճիր այդ մասին, ես իրաւունք ունէի։

Վիլատ։ Զվիճե՞մ. այո՛, տանուտէր, եթէ ես նրա տունը կողոպտէի և նրա բոլոր ստացուածքը յափշտակէի, խիղճս այժմեանից աւելի հանգիստ կլինէ՞ր։ Ո՞հ, տանուտէր, երանի՜ այդ բանը չանէի. շուտով մոտենում են կրկին սրբազան օրե՛րը — երանի՜ թէ հազար սաժէն խորութեամբ գետնի տակ լինէի։

Տանուտէր։ Ի սէ՛ր Աստծոյ, Վիլատ, այդպէս մի՛ ա-նի փողոցում, մարդկանց առաջը, եթէ մէկը լսէ ի՞նչ կասէ։ — Դու չարչարւում ես յիմարութեանդ պատճառով. այն ամենը, ինչ որ երդուեցիր, ճիշտ է։

Վիլատ։ Իմ յիմարութե՜ան, այո՛, եթէ ես չերդուէի, Բուդին այսօր էլ դեռ իր մարգագետինը կունենար։

Տանուտէր։ Դո՞ւ հօ չես խլել նրանից մարգագետինն ու ինձ տուել. քե՛զ ինչ՝ թէ ումն է պատկանում մարգագետինը։

Վիլատ։ Թէ ումն է պատկանում մարգագետինը՝ այդ իմ գործը չէ՝ բայց որ սուտ երդուեցի, այդ դժբաղդաբար իմ գործն է։

Տանուտէր։ Բայց ասածդ ճիշտ չէ. դու սուտ չերդուեցիր, ինչ որ երդուեցիր՝ ճշմարիտ էր։

Վիլատ։ Դու յեղաշրջում ես գործը։ Ես կալուածատիրոջը չասացի՝ թէ ի՞նչպէս էի հասկանում գրուածը և նա էլ ուրիշ տեսակ հասկացաւ. ասա՛, ինչ որ ուզում ես, ես գիտեմ և զգում եմ, որ Ցուդա ու մատնիչ դարձայ և սուտ երդուեցի։

Տանուտէր։ Խղճում եմ քեզ, Վիլատ, անհասկացողութեանդ համար. դու հիւանդ ես երևում, կարծես թէ գերեզմանից լինես դուրս եկած, իսկ հիւանդ ժամանակ մարդ ամեն բան ծուռն է տեսնում։

Հանգստացիր, Վիլատ, հետս եկ և մի բաժակ գինի խմէ։

Վիլատ։ Չե՞մ կարող, տանուտէր, աշխարհումս ինձ էլ ոչինչ ուրախութիւն չէ պատճառում։

Տանուտէր։ Հանգստացիր, Վիլատ, գլխիցդ հանի՛ր այդ բաները և մոռացիր մինչև որ կրկին առողջանաս, այն

ժամանակ ինքդ կտեսնես, որ ես արդար եմ։ Ես էլ կպատ-
ռեմ պարտամուրհակդ, գուցէ դրանով հանդարտուես։

Վիլսան։ Ո՛չ, տանուտէր, պարտամուրհակս պահիր. եթէ
քաղցից նոյն իսկ իմ միսն ուտեմ, դարձեալ կվճարեմ պարտքս. ես
չեմ ուզում արեա՞ն գնով ձեռք բերած փող ունենալ։ Դու
ինձ խաբեցիր, փոխանորդն ինձ քնացրեց, բայց գուցէ Աս-
տուած դեռ ներէ։ Ես չէի կարծում, որ այսպէս կլինէր։

Տանուտէր։ Վերցրո՛ւ այս մուրհակը, Վիլսան, տե՛ս,
աչքիդ առաջն եմ պատռում. իսկ իմ արածի համար ես եմ
պատասխանատու. հանգի՛ստ եղիր։

Վիլսան։ Պատասխանատու եղիր ինչի համար որ ցան-
կանաս, տանուտէր, երկու օրից յետոյ կծախեմ իմ կիրակ-
նօրեայ զգեստը և կվճարեմ պարտքս։

Տանուտէր։ Լա՛ւ մտածիր, Աստուած է վկայ, որ
սխալւում ես, սակայն ես պէտք է գնամ։

Վիլսան։ Փա՞ռք Աստծոյ, որ գնում ես։

Տանուտէր։ Ի սէ՞ր Աստծոյ, հանգստացիր, Վիլսան։

Նրանք բաժանուեցան միմեանցից։ Տանուտէրն երբ մե-
նակ մնաց, ակամայ հառաչեց և ասաց. դա էլ հէնց այժմ
պէտք է պատահէ՞ր, առանց դրան էլ բաւական էր այսօր։
Սակայն շուտով կրկին սիրտը պնդացրեց և ասաց. ինչ-
պէ՞ս չարչարւում է այդ անպիտանը, խղճում եմ նրան, բայց
ճիշտ չէ դատում. ի՞նչ նրա գործն է՝ թէ դատաւորն
ի՞նչպէս է հասկացել նրա ասածը։ Եթէ ասածի միտքը միշտ
այդպէս պարզ և հեշտ որոշուի, սատանան էլ չի երդուի. ես
գիտեմ նոյնպէս, որ նոյն իսկ այն մարդիկը, որոնք ամենից
լաւ պէտք է հասկանային բանի էութիւնը, երդւում են ըստ
իրենց բացատրութեան և հանգիստ են։ Թէև Վիլսան նման
ամեն մի անպիտան պարզ կտեսնէր, որ գործը յայտնապէս
յեղաշրջւում է։ Բայց ի՞նչպէս ցանկանում եմ, որ այս մտածմունքներն այժմ գլխից դուրս գան. սրանք ինձ տաճաճութիւն են պատճառում։

Ցետ գնամ ու մի բաժակ գինի խմեմ։ Այսպէս ասաց տանուտէրը և իր ասածը կատարեց ճշտութեամբ։

23.

ԿԵՂԾԱՒՈՐՆ ՈՒ ՎՀՏԱՀԱՐ ԿԻՆԸ

Յետոյ նա գնաց Ֆէլիքս Կրիխէրի մօտ։ Սա անպիտանի մէկն էր, որ ամենախորին ցաւերի մէջ ընկղմուածի նման, շարունակ պտուտ էր գալիս։ Նա այնպէս էր խոնարհում սափրիչի, տանուտէրի, ջրաղացպանի և իւրաքանչիւր օտարականի առաջ, ինչպէս որ խոնարհւում են քահանայի առաջ. միշտ ներկայ էր լինում շաբաթական քարոզներին և կիրակի երեկոյեան երգի ժամերին։ Դրա համար էլ քահանայից մի մի անգամ մի բաժակ գինի էր ստանում և երբեմն, երբ բաւականին ուշ էր գալիս, ընթրիքի էր մնում։ Բայց Կրիխէրը գիւղի տարապայման պաշտօնասէրների հետ չէր կարողանում հաշտուել, թէև միևնոյն հոգացողութեամբ այդ էլ փորձում էր, որովհետև դրանց պատճառով չէր կամենում ուրիշների հետ ունեցած իր լաւ յարաբերութիւնը խանգարել։ Բայց տարապայման պաշտօնասէրները չէին թոյլ տալիս, որ իրենց աշակերտներն երկու աթոռի վրայ նստեն և այսպիսով նա չընդունուեցաւ նրանց շրջանում՝ չնայելով իր բոլոր հնազանդութեան ցոյցերին, արհեստական կերպով սովորած կեղծիքներին և հոգու մեծամտութեան՝ թէև այդ յատկութիւններն ընդհանրապէս ընդունուած էին դրանց մէջ։

Բացի այդ արտաքին ու հասարակութեան յայտնի յատկութիւններից՝ Կրիխէրն ունէր և այլ յատկութիւններ, որոնք թէև նրա ընտանեկան կեանքի գործածութեան համար էին, բայց և այնպէս հարկ եմ համարում պատմել։ Նա մի հրէշ էր՝ իր կնոջ և զաւակների վերաբերութեամբ։

Ամենայետին չքաւորութեան մէջ լինելով միշտ ցանկանում էր լաւ բան ուտել և երբ նրա ուզածը չկար, ամեն բան ծուռ էր երևում նրան. երբեմն մանուկները չսանրուած էին թւում նրան, երբեմն չլուացուած և այսպիսի հազար ու մի բաներ։

Իսկ երբ կռուելու ոչինչ չէր գտնում և նրա փոքրիկ երեք ամսական երեխան թթու դէմք էր ցոյց տալիս, խփում էր նրա փոքրիկ ձեռքերին՝ յարգանք պահանջելով նրանից։

Ցիմար ես, ի՞նչ է, ասաց նրան մի անգամ, այդպիսի դէպքերից մէկում, կինը, որ հարկաւ իրաւունք ունէր ու

ճշմարտութիւնից մի խօսք անգամ աւելի չէր ասել. բայց Կրիխէրը ոտքով հարուածեց նրան. խեղճ կինն ուզեց փախչել, բայց վայր ընկաւ դրան տակը և գլուխն երկու տեղ ճղեց։ Կրիխէրը վէրքերը տեսնելով վախեցաւ, որովհետև կարծում էր թէ իր արարքը կարող է հրապարակ դուրս գալ և ինչպէս որ առհասարակ բոլոր կեղծաւորներն երկիւղի միջոցին խոնարհւում, ծռմռւում են, այդպէս էլ նա էր խոնարհւում և կուչ ու մուչ գալիս։ Նա չոքեց կնոջ առաջը և ներողութիւն էր խնդրում, բայց ո՛չ թէ իրեն ներելու համար, այլ որ այդ եղելութիւնն ոչ ոքի չասէ։

Խեղճ կինն առանց մէկին բան ասելու՝ համբերութեամբ տարաւ վէրքերի պատճառած ցաւը. իսկ սափրիչին ու դրացիներին յայտնեց՝ թէ պատահմամբ է վայր ընկել ու գլուխը կոտրել, թէև նրանք չհաւատացին։ Բարի՜ կին. բոլորովին չմտածեց, որ կեղծաւորները չեն կարող երախտագէտ լինել և իրենց խօսքը կատարել. չպէտք է հաւատա՞ր նրան։ Սակայն ի՞նչ եմ ասում. նա այդ բոլորը լա՜ւ գիտէր, բայց մտածում էր իր մանուկների մասին և հաւատացած էր, որ բացի Աստծուց ոչ ոք չէր կարող փոխել Կրիխէրի սիրտը և ուրիշների խօսակցութիւնն ի զուր կանցներ։ Քա՜ջ կին. ափսո՜ս, որ նա աւելի բաղդաւոր չէ. ափսո՜ս, որ նրա սիրտն ամեն օր պէտք է վիրաւորուի ամուսնու վարմունքով։ Նա լռում է, աղօթում Աստծուն և անտրտունջ ենթարկւում այդ փորձութեան։

Ո՜հ, յաւիտենականութի՜ւն. եթէ մի օր վարագոյրը բանալով՝ ցոյց տայի՞ր մարդկանց Աստծոյ ճանապարհները, նրանք կտեսնէին, որ Աստուած ցաւի, ողբի և թշուառութեան միջոցով՝ հոգեկան-ոյժ, համբերութիւն ու իմաստութիւն է տալիս,—ո՜հ ի՞նչպէս կբարձրացնէիր այդ փորձութեան ենթարկուածներին, որոնց այստեղ այդպէս ստորացրի՞ր։—Կրիխէրը կնոջ գլխի վէրքերը դեռ չլաւացած՝ մոռացաւ իր արարքը և կրկին նոյնն էր։ Նա ամեն օր առանց պատճառի ու առիթի վիրաւորում ու չարչարում էր կնոջն ու դառնացնում նրա կեանքը։

Տանուտէրի գալուց մի քառորդ ժամ առաջ՝ կատուն վառարանի վրայից վայր էր ձգել ճրագը և մի քանի կաթիլ ձէթ թափել միջից։ Կրիխէրն իր սովորական կատաղու-

թեամբ գոռաց խեղճ կնոջ վրայ. յանցաւոր անպիտան, եթէ լաւ հոգայիր, այդպէս չէր պատահի։ Այժմ կարող ես մրթնումը նստել և աթարով կրակ վառել, տաւա՜ր։

Կինը մի խօսքով անգամ չպատասխանեց, բայց արտասուներ էին՝ որ գլորւում էին նրա այտերից. երեխաներն անկիւններում նստած՝ նոյնպէս լաց էին լինում։

Հէնց այդ ժամանակ դուռը բաղխեց տանուտէրը։

Լռեցէ՛ք, ի սէր Աստծոյ, լռեցէ՛ք, ի՞նչ պէտք է լինի արդեօք, տանուտէրն եկել է, ասաց Կրիխէրը, թաշկինակով սրբեց երեխաների այտերից արտասուքը և սպառնաց. եթէ ձեզնից մէկը մի խօսք ասի՜, տեսէք թէ ի՞նչպէս կծեծեմ նրան յետոյ. ապա դուռը բաց արաւ, խոնարհ գլուխ տուեց և հարցրեց—ի՞նչ կհրամայէք, պարոն տանուտէր։

Տանուտէրը կարճ հաղորդեց նրան իր յայտարարութիւնը. բայց Կրիխէրը դրան մօտ ականջները սրելով՝ երբ տեսաւ, որ էլ ոչ ոք չէ լաց լինում, պատասխանեց. ներս համեցէ՛ք, պարոն տանուտէր. ես շուտով սիրելի ամուսնուս կյայտնեմ, թէ ի՞նչպիսի մեծ բաղդի եմ արժանացել։ Տանուտէրը ներս գնաց նրա հետ և Կրիխէրն իսկոյն ասաց կնոջը. պարոն տանուտէրը մեզ համար մի բաղդաւոր լուր բերեց. ես էլ եկեղեցու վերաշինութեան համար բանուոր եմ նշանակուած. այս մի ա՜յնպիսի մեծ շնորհ է, որի համար ես չեմ կարող բաւականաչափ երախտագէտ լինել։

Կինը պատասխանեց. շնորհակա՜լ եմ Աստծուց (մի ծանր հառաչանք դուրս թռաւ նրա կրծքից)։

Տանուտէր։ Կինդ հիւանդ է։

Կրիխէր։ Բաւականին ժամանակ է, որ նա իրեն առողջ չէ զգում, պարոն տանուտէր. (նա մի կողմակի, բարկացկոտ և սպառնալի հայեացք ձգեց կնոջ վրայ)։

Տանուտէր։ Ես պէտք է գնամ, ցանկանում եմ ձեզ առողջութիւն, տիկին։

Կինը։ Գնաք բարով, պարոն տանուտէր։

Կրիխէր։ Եթէ կարելի է, պարոն տանուտէր, խնդրեմ, բարի եղէ՛ք և իմ կողմից շնորհակալութիւն յայտնեցէք Արներին այս շնորհի համար։

Տանուտէր։ Այդ ինքդ էլ կարող ես անել։

Կրիխէր։ Իրաւունք ունի՞ք, պ. տանուտէր. իմ կողմից

անամօթութիւն էր, որ ձեզ խնդրեցի։ Ես շուտով դղեակ կերթամ, այդ իմ պարտաւորութիւնն է։

Տանուտէր։ Երկուշաբթի առաւօտը բոլոր բանուորները պէտք է գնան և կարծեմ դու էլ կարող ես նրանց հետ գնալ։

Կրիկէր։ Բնականապէս, պ. տանուտէր, այո, ի հարկէ, ես չգիտէի, որ նրանք էլ գնում են։

Տանուտէր։ Մնաք բարև։

Կրիկէր։ Յայտնում եմ ձեզ խորին շնորհակալութիւնս, պ. տանուտէր։

Տանուտէր։ Ինձնից շնորհակալ լինելու ոչինչ չունես։ (Նա գնում է ու ինքն իրեն ասում ճանապարհին.) գուցէ այս մարդն ինձ պէտք գայ՝ որմնադրին խարդաւանելու համար, սակայն ո՞վ կհաւատայ կեղծաւորին։ Շաբէն—Միխէլնաւելի լաւ է, նա ուղղակի խաբեբայ է։

24.

ՊԱՐԶ, ՈՒՐԱԽ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍԻՐՏ

Կրիկէրից յետոյ տանուտէրը գնաց կրտսեր Էբիի մօտ։ Երբ Էբին լսեց այդ յայտարարութիւնը, ուրախութիւնից աղաղակեց և սկսեց գարձան սկզբին առաջին անգամ մարգարէտնի վրայ ազատ թռղած երնջի նման թռչկոտալ. իսկոյն պէտք է կնոջս յայտնեմ այդ, որ նա էլ ուրախանայ, բայց աւելի լաւ կլինի, որ սպասեմ մինչև վաղը. հէնց վաղը լրանում է մեր ամուսնութեան ութերորդ տարին։ Այդ օրն ես երեկուայ պէս լա՜ւ եմ յիշում. այն ժամանակից յետոյ մենք շա՜տ ուրախ ու դառն օրեր ենք ունեցել։ Փա՜ռք Աստծոյ. այդ բոլորի համար շնորհակալ եմ նրանից։ Այո՛, վաղը, հէնց որ զարթի, իսկոյն այդ լուրը կհաղորդեմ նրան։ Երանի՜ թէ արդէն վաղը լիներ, այժմ իսկ երևակայում եմ՝ թէ նա ի՜նչպէս լացն ու ծիծաղն իրար խառնելով՝ ինձ ու իր սիրելի մանուկներին ուրախութիւնից պէտք է գրկէ։ Ա՜խ, երանի՜ թէ արդէն վաղը լիներ։ Նրան ուրախացնելու համար՝ նրանից ծածուկ մի հաւ կմորթեմ և կեփեմ՝ նա թէև կափսոսայ, բայց կուրախանայ. դրանով խիղճս էլ կարծեմ շատ անհանգիստ չի լինի. նրան այդպիսի ուրախութիւն պատճառելու համար յանցանք չի լինի արածս, այո՛, ես կմոր-

թեմ հաւը։ Ամբողջ օրը տանը կմնամ և կուրախանամ կնոջս ու երեխաներիս հետ։ Բայց ո՛չ, ես նրա հետ եկեղեցի կերթամ։ Պէտք է ուրախանանք, զուարճանանք և շնորհակալ լինենք Աստծուց, որ նա այդչափ բարի է։

Այսպէս ուրախ սրտով ինքն իրեն խօսում էր կրտսեր Էբին՝ տանուտէրի բարի համբաւը լսելով և մեծ անհամբերութեամբ սպասում էր առաւօտեան գալուն. նա միւս օրը կատարեց իր ասածը։

25.

ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ ԵՆ ԽԱԲԵԼԲԱՆՆԵՐԸ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ԽՕՍՈՒՄ

Տանուտէրն Էբիի մօտից գնաց Շաբէն-Միխէլի մօտ։ Վերջինս հեռուից նրան տեսաւ թէ չէ, կանչեց, տարաւ տան յետևի կողմը և հարցրեց. ի՞նչ կայ։

Տանուտէր։ Ուրա՜խ բան։

Միխէլ։ Այո, գիտեմ, դու այնպիսի մարդ ես, որ կարող ես հրաւիրակի պաշտօն կատարել հարսանիքներում։

Տանուտէր։ Ինչ կուզես ասա՛, այս անգամ տխուր բան չէ ասելիքս։

Միխէլ։ Ի՞նչ է։

Տանուտէր։ Դու մի նոր ընկերութեան անդամ ես դարձել։

Միխէլ։ Ի՞նչ ընկերութեան և ինչո՞ւ։

Տանուտէր։ Հիւբէլ-Բուդիի, Լէնկի, Լէէմանի, Կրիխէրի և Բոյտի Մարքսի։

Միխէլ. Գի՞ժ ես ինչ է. ի՞նչ գործ ունեմ ես դրանց հետ։

Տանուտէր։ Բօնաալ գիւղի եկեղեցին պէտք է վերաշինէք ու զարդարէք։

Միխէլ։ Ճի՞շտ։

Տանուտէր։ Աստուած է վկայ։

Միխէլ։ Բայց ո՞վ է այդ կաղերին ու կոյրերին ընտրել։

Տանուտէր։ Իմ ազնուազարմ, իմաստուն և արդարադատ տէր Արնոլդը։

Միխէլ։ Խե՞նթ է նա։

Տանուտէր։ Ես ի՞նչ գիտեմ։

Միխէլ։ Այդպէս է երևում։

Տանուտէր։ Գուցէ այնքան էլ վատ չէ, որ նա այդպէս է. ճկուն փայտը հեշտ է ոլորուում, բայց պէտք է գնամ, երեկոյեան եկ ինձ մօտ, առանձին խօսելիք ունեմ քեզ հետ։

Միխէլ։ Կգամ. այժմ ո՞ւմ մօտ ես գնում։

Տանուտէր։ Բոյտի Մարքսի մօտ։

Միխէլ։ Հէ՞նց դա է գործի մարդը. Տէ՛ր Աստուած, մարդ պէտք է խելքը կորցրած լինի, որ դրան բանուոր ընտրէ։ Չեմ կարծում, որ նա տարիներով բահ կամ թի առած լինի ձեռքը. նրա մի կողմն էլ հաշմ է։

Տանուտէր։ Ի՞նչ անենք. դու երեկոյեան եկ ինձ մօտ։

Այդտեղից տանուտէրը գնաց Մարքսի մօտ։

26.

ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵԾԱՄՏՈՒԹԻՒՆՆ ԱՄԵՆԱԱՆՐՆԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՆԱԶԶՈՒԵԼԻ ԳՈՐԾԵՐ Է ԱՆԵԼ ՏԱԼԻՍ

Մարքսը մի ժամանակ կարողութեան տէր մարդ էր և պարապել էր վաճառականութեամբ. բայց վաղուց արդէն իր բոլոր ունեցածն աճրդով ծախել էր և ապրում էր համարեա՛ թէ միմիայն քահանայի և իր մի քանի հարուստ աղգականների տուած ողորմութեամբ։ Բայց իր թշուառութեան մէջ միշտ մնաց մեծամիտ և ամեն կերպ աշխատում էր ամենքի առաջ ծածկել իր ընտանիքի մեծ կարիքը (բացի այն տեղերից, ուր նա մուրացկանութիւն էր անում)։ Սա տեսնելով տանուտէրին, խիստ վախեցաւ, բայց չդունատուեց, որովհետև առանց այդ էլ մեռելի գոյն ունէր։ Նա շուտով հաւաքեց ցրուած ցնցոտիները և ծածկեց անկողնի վերմակի տակ. իսկ կիսամերկ երեխաներին հրամայեց շուտով թագնուել ննջարանում։—Տէ՛ր Աստուած, բացագանչում են մանուկները, անձրևն ու ձիւնը սենեակի մէջ է թափւում. լսո՞ւմ ես թէ ի՞նչպիսի փոթորիկ է, հայր. ննջարանն էլ պատուհան չունի։—Գնացէք, անիծած երեխաներ, ի՞նչպէս կատաղեցնում էք ինձ. ձեր մարմինը պէտք է չարչարանքի սովորի։—Չի՞ կարելի դիմանալ, հայր. ասում են մանուկները։—Երկար չի՛ տևի, անպիտանները, գնացէք, ասում է հայրը, ուժով ներս հրում նրանց, փակում դուռը և ապա թէ ներս կանչում տանուտէրին։

Հումելը յայտնում է նրան իր գալու նպատակը։ Մարքսը շնորհակալութիւն է յայտնում և հարցնում. արդեօք ես վերակացո՞ւ եմ նշանակուած այդ մարդկանց վրայ։

—Ո՛չ, պատասխանեց տանուտէրը, դու էլ միւսների նման պէտք է բանես։

Մարքս։ Մի՞թէ։

Տանուտէր։ Եթէ չես կամենում յանձն առնել այդ աշխատութիւնը, կարող ես հրաժարուել։

Մարքս։ Հարկաւ ես այդպիսի աշխատանքի սովոր չեմ, բայց որովհետև գործը վերաբերում է Արներին ու քահանային, ուրիշ կերպ չեմ կարող, պէտք է ընդունեմ։

Տանուտէր։ Այո՛, նրանք շատ կուրախանան և կարելի է ենթադրել, որ Արներն ինձ մի անգամ էլ կուղարկէ քեզ մօտ՝ իր շնորհակալութիւնը յայտնելու։

Մարքս։ Այդ չե՞մ ասում, բայց ես էլ հօ ամեն մարդու մօտ չեմ կարող օրավարձով աշխատել։

Տանուտէր։ Առանց աշխատանքի էլ ապրուստ ունես։

Մարքս։ Փա՞ռք Աստծոյ, դեռ ունեմ։

Տանուտէր։ Գիտե՞մ, գիտե՞մ, բայց ո՞ւր են երեխաներդ։

Մարքս։ Այսօր նրանք քենուս տանն են ճաշում։

Տանուտէր։ Ինձ այնպէս է թւում՝ թէ ննջարանից աղաղակ եմ լսում։

Մարքս։ Ոչ մէկն էլ տանը չէ։

Տանուտէրը մի անգամ էլ լսելով երեխաների աղաղակը՝ առանց այլևայլութեան բաց է անում ննջարանի դուռը և տեսնում համարեա՝ մերկ երեխաներին, որոնք սենեակի մէջ ներս մտնող քամուց, անձրևից և ձիւնից այնպէս են դողում, որ հազիւ թէ կարողանում են խօսել։

Տանուտէր։ Երեխաներդ ճաշում են հա՞, Մարքս. շո՞ւնդ կեղծաւոր անպիտան. անիծե՞ալ մեծամտութեանդ պատճառով խեղճ երեխաներին ի՞նչ օրն ես գցում։

Մարքս։ Ի սէր Աստծոյ, ոչ ոքի չասես, տանուտէր, ի սէր Աստծոյ. եթէ այդ բանը դուրսը պատմես՝ աշխարհիս երեսին ամենադժբաղդ մարդը կլինեմ։

Տանուտէր։ Խելքդ կորցրել ե՞ս ինչ է. երեխաներին ասա՛, որ դուրս գան այդ շա՞ն որջից, չե՞ս տեսնում, որ

խեղճերը կապտել և սևացել են ցրտից. ես իմ շանն էլ այդպէս չեմ բանտարկի։

Մարքս։ Դո՞ւրս եկէք, բայց խնդրում եմ, տանուտէր, ի սէր Աստծոյ, ոչոքի չասէք։

Տանուտէր։ Իսկ դու կերթաս և քահանայի առաջ դարձեալ բարեպաշտ կձևանաս։

Մարքս։ Ի սէր Աստծոյ, ոչոքի մի ասէք։

Տանուտէր։ Անամօթութիւն է արածդ սո՞ւրբ մարդ։ Հերիտիկո՞ս անպիտան. արածդ մարդկային վարմունք չէ։ Անցեալ շաբաթ էլ դու՛ ես տէրտէրին պատմել մեր կռուի մասին, որովհետև հէնց ժամի 12-ին, երբ այդ կռիւը պատահեց, դու իմ տան մօտովն էիր անցնում։

Մարքս։ Ո՛չ, ի սէր Աստծոյ, մի հաւատաք, ես չեմ ասել. Աստուած է վկայ, որ ճիշտ չէ։

Տանուտէր։ Դեռ համարձակւում ես երդուե՞լ։

Մարքս։ Աստուած վկայ ճիշտ չէ. տանուտէր, թո՛ղ տեղեցս չկարողանամ շարժուել՝ եթէ այդ ճիշտ լինի։

Տանուտէր։ Այժմեան ասածդ կարո՞ղ ես իմ ներկայութեամբ քահանայի մօտ կրկնել. ես աւելի տեղեկութիւններ ունեմ քան թէ դու կարծում ես։

Մարքսն սկսեց կակազել. ես գիտեմ,.... ցանկանում եմ... ես... չկսեցի այդ մասին խօսել։

—Քեզ պէս մի ստախօս շուն կեանքումս չեմ տեսել. այժմ մենք միմեանց ճանաչում ենք, ասաց տանուտէրը, գընաց և այդ ամենը պատմեց քահանայի խոհարարուհուն, որ կուշտ ծիծաղեց բարեպաշտ իսրայելացու վրայ և խոստացաւ բոլորը ճշտօրէն պատմել քահանային։ Տանուտէրն էլ սըրտանց ուրախացաւ, կարծելով թէ քահանան այլ ևս այդ անպիտանին ուտելու հաց չի տալ, բայց այդտեղ նա շատ սխալուեց, որովհետև քահանան ցայժմ էլ նրան հաց էր տալիս ոչ թէ նրա առաքինութեան, այլ քաղցածութեան համար։

27.

ՋԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ՝ ԱՌԱՆՑ ԵՐԱԽՏԱԳԻՏ ՈՒ ՑԱՒԱԿԻՑ ՍՐՏԻ

Մարքսի մօտից տանուտէրը գնաց վերջապէս տոմսակի

վրայ նշանակուած վերջին բանուորի մօտ։ Սա Քինասոտ անունով մի հիւանդոտ մարդ էր, որ թէև դեռ 50 տարեկան էլ չկար, բայց աղքատութիւնից ու հոգսերից թուլացել էր. այսօր մանաւանդ նա սաստիկ տխուր էր։ Նրա աւագ դուստրն երէկ քաղաքում պաշտօն էր ստանձել և այժմ հօրը ցոյց էր տալիս ստացած գրաւականը. այդ բանից շատ վախեցաւ խեղճ մարդը։ Նրա յղի կինը պէտք է շուտով ծննդաբերէր և Սուսաննան միակն էր նրա զաւակների մէջ, որ կարող էր ընտանեկան գործերում օգնել մօրը. այժմ դա էլ 14 օրից յետոյ պէտք է ծառայելու գնա՞ր։ Հայրն արտասուալի աչքերով խնդրում էր, որ աղջիկը գրաւականը կրկին յետ դարձնէ և տանը մնայ մինչև մօր ծննդաբերութիւնը։ Ձե՞մ կամենում, պատասխանում էր դուստրը, եթէ այդ ծառայութիւնը թողնեմ, յետոյ ուրիշը չեմ կարող գտնել։

Հայը։ Մօրդ ծննդաբերութիւնից յետոյ ինքս քեզ հետ քաղաք կգամ և կօգնեմ քեզ՝ մի այլ տեղ որոնելու. միայն թէ մինչև այն ժամանակ մնա՛ այստեղ։

Դուստրը։ Մինչև այդ ժամանակ կէս տարի կանցնի. բացի դրանից այժմեան պաշտօնս լաւն է իսկ ո՞վ գիտէ թէ յետոյ ինչպիսինը կգտնեմ քո օգնութեամբ. կարծ, ես չեմ կարող այդչափ երկար սպասել։

Հայը։ Դու գիտե՛ս, Սուսաննա, որ ամեն բան, ինչ որ կարողացել եմ, արել եմ քեզ համար. յիշի՛ր մանկութեանդ տարիները և այժմ, կարիքի ժամանակ, անօգնական մի՛ թողնի ինձ։

Դուստրը։ Մի՞թէ իմ բաղդաւորութիւնը չես ցանկանում, հա՛յր։

Հայը։ Ա՜խ, այդ բաղդաւորութիւն չէ՛, որ խեղճ ծնողներիդ անօգնական ես թողնում այսպիսի հանգամանքների մէջ. այդպէս մի՛ անի, Սուսա՛ննա։ Մայրդ մի գեղեցիկ թաշկինակ ունի, որ ստացել է իր հանգուցեալ կնքահօրից իբրև յիշատակ. եթէ դու մեզ մօտ մնաս, այդ թանկագին ընծան քոնը կլինի։

Դուստր։ Ես ոչինչ չեմ ցանկանում. ոչ ձեր ցնցոտիները և ոչ էլ թանկագին իրերը. դրանից լաւը կարող եմ աշխատել։ Արդէն ժամանակ է, որ ինքս ինձ համար հոգամ։

Եթէ տասը տարի ևս ձեզ մօտ մնամ, դարձեալ մի անկողին ու արկղ էլ չեմ ունենայ։

Հայր։ Ամեն բան հօ այդ կէս տարուց չէ՞ կախուած. ծննդաբերութիւնից յետոյ էլ չեմ ուշացնի քեզ. այս մի քանի շաբաթը մնա։

—Ո՛չ, չեմ կարող, հայր, պատասխանում է դուստրը, շուռ գալիս ու վազում դրացիներից մէկի մօտ։

Հայրը մնաց վհատուած, իր հոգսերից ու ցաւերից ընկճուած և ինքն իրեն ասաց. ի՞նչ անեմ, ինչո՞վ օգնեմ. այս Ցովբի լուրն ի՞նչպէս յայտնեմ կնոջս։ Թշուառ ու անպիտանն ե՛ս եմ, որ այս երեխային այսպէս վա՞տ դաստիարակեցի։ Նա լա՞ւ է աշխատում, մտածում էի միշտ ու ամեն բան ներում նրան։ Կինս հարիւր անգամ ասել է, որ նա շատ կո՞շտ ու յանդուգն է իր ծնողների վերաբերութեամբ և իր եղբայր ու քոյրերին բան սովորեցնելիս նոյնպէս անսիրտ է վարւում, որ նրանցից ոչ մէկը մի բան չէ սովորում։—Նա լա՞ւ է աշխատում, գուցէ միւսներն էլ մեղաւոր են, պէտք է ներել նրան, պատասխանում էի միշտ։—Ես չմտածեցի, որ երբ մարդուս սիրտը կոշտ է, այն ժամանակ ամե՞ն բան վերջացաւ. ի՞նչ լաւ յատկութիւններ էլ որ ունենայ, այնուամենայնիւ նրա վրայ չի կարելի վստահ լինել։ Երանի՞ թէ արդէն ասած լինէի կնոջս. ի՞նչ պէտք է անէ խեղճը։

Մինչդեռ Քինասան այդպէս ինքն իրեն խօսում էր, տանուտէրն անկատելի կերպով մօտեցաւ նրան։

—Ի՞նչը չես կարող կնոջդ ասել, Քինասա՛, հարցրեց տանուտէրը։

Քինասանը գլուխը բարձրացնելով՝ տեսնում է տանուտէրին և ասում. դո՞ւ ես, տանուտէ՛ր, չտեսայ։ Հա՛, ինչը չեմ կարող կնոջս ասե՞լ—այն, որ Սուսանանն քաղաքում պաշտօն է գտել և ուզում է գնալ, բայց մեզ էլ հարկաւոր է։ Քիչ մնաց մոռանայի հարցնել, թէ դու ի՞նչ ես ուզում։

Տանուտէրը։ Ի նկատի ունենալով Սուսաննայի վարմունքը՝ գուցէ բերած համբաւս քեզ համար մի սփոփանք լինի։

Քինասան։ Այսպիսի կարիքի ժամանակ այդ բաղդաւորութի՞ւն կլինէր ինձ համար։

Տանուտէրը։ Եկեղեցու վերաշինութեան համար բանուոր ես նշանակուած և օրական 25 կրոյցեր վարձատրու-

թիւն կստանաս. դրանով կարող ես մի կերպ գործդ առաջ տանել։

Քինասատ։ Տէր Աստուած, կարո՞ղ եմ վստահ լինել ասածիդ վրայ։

Տանուտէր։ Այո՛, այո՛, Քինասատ, ասածս ճշմարիտ է։

Քինասատ։ Գոհութիւն Աստծոյ (յանկարծ վատ է զգում իրեն, անդամները դողում են). պէտք է նստեմ, երկիւղն և ուրախութիւնը միմեանց յաջորդելով՝ ինձ բոլորովին շփոթեցրին (նստում է մօտիկ ընկած կոճղի վրայ և յենւում տան պատին, որ վայր չընկնի։)

Տանուտէր։ Շա՞տ բանի չես կարող դիմանալ։

Քինասատ։ Դեռ ևս անօթի եմ։

Այսքան ժամանա՞կ, պատասխանեց տանուտէրն ու գնաց իր ճանապարհով։

Խեղճ կինը սենեակից տեսնելով, որ տանուտէրն իր մարդու հետ է խօսում, սարսափելի կերպով ողբում և ասում էր. երևի մի դժբաղդութիւն է պատահել, մարդս այսօր ամբողջ օրը շփոթուած է և չգիտէ թէ ի՞նչ է անում. Սուսաննային էլ դրացու մօտ ձեռքերը միմեանց խփելիս տեսայ. նա կարծես տհաճութիւնից չգիտէ թէ ի՞նչ անէ, այժմ էլ տանուտէրն է եկել. այս ի՞նչ դժբաղդութիւն է պատահել, աշխարհումս ինձ պէս բազմաչարչար կին չկայ... արդէն քառասուն տարեկան եմ և ամեն տարի էլի երեխայ եմ բերում՝ հոգսերով, երկիւղով և կարիքով շրջապատուած։— Այսպէս ողբում էր խեղճ կինը սենեակում։ Այդ միջոցին Քինասատը նորից զգաստացաւ և երկար տարիներ չտեսնուած ուրախ ու զուարթ դէմքով՝ կնոջ մօտ եկաւ։

Կինը։ Դու ուրախ ես ձևացնում քեզ, կարծում ես թէ չգիտե՞մ, որ տանուտէրն այստեղ էր։

Քինասատ։ Այսօր նա մեզ սփոփելու համար՝ կարծես երկնքից իջաւ։

Կինը։ Մի՞թէ կարելի բան է ասածդ։

Քինասատ։ Նստի՛ր, լաւ բան պէտք է պատմեմ քեզ։— Եւ նա պատմեց ինչ որ պատահել էր Սուսաննայի հետ և թէ ինչպէս երկիւղի մէջ էր ինքը, բայց այժմ, փառք Աստծոյ, այլ ևս կարիք չի ունենայ։ Յետոյ կերաւ ճաշին ձեռք չտուած ապուրը և ապա իր կնոջ հետ ի միասին շնորհա-

կալութեան և ուրախութեան արցունքներ թափեց և աղօթեց առ Աստուած, որ կարիքի ժամանակ օգնեց իրենց։ Սուսաննան նոյն իսկ օրը ծնողների թոյլտուութեամբ գնաց քաղաք և իր ցանկացած պաշտօնը ստանձնեց։

28.

ՄԻ ՏՕՆԻ ՆԱԽԸՆԹԱՑ ԵՐԵԿՈՆ ՏԱՆՈՒՏԷՐ — ՊԱՆԴՈԿԱՊԵՏԻ ՏԱՆԸ

Տանուտէրը շատ մանգալուց յոգնած և ծարաւ շտապեց կրկին դէպի տուն։ Արդէն շատ ուշ էր, որովհետև Քինասոը բնակւում էր գիւղից համարեա մի ժամ հեռու գտնուող սարի վրայ։ Հումելն այսօր իր մարդկանց միջնորդութեամբ ամեն տեղ տարածել էր, որ երէկուայ դէպքից բոլորովին չէ վախեցել և մի տարի կլինի, որ ինքն այսօրուայ պէս զուարթ ու աշխոյժ չէ եղել։ Այս լուրն իր ներգործութիւնն ունեցաւ ու երեկոյեան դէմ մի քանի մարդիկ սիրտ առան գինետուն մտնելու։ Երբ մթնեց՝ աւելի շատերն եկան. իսկ գիշերը, մօտ ժամի 7-ին, ըստ սովորականին բոլոր սեղանների շուրջը լիքն էին։

Այդպէ՞ս է միշտ։ Երբ որսորդը կեռասենու վրայ մի թռչուն է սպանում, իսկոյն կեռաս կոցահարող բոլոր թռչունների խումբն արագութեամբ թռչում է այդ ծառից. բոլոր թռչուններն աղաղակում են երկիւղից. սակայն մի փոքր ժամանակից յետոյ կրկին գալիս են։ Սկզբումը միայն մէկն է գալիս և էլ որսորդին չտեսնելով՝ սկսում է այնպէս սուլել, որ նման չէ երկիւղից առաջացած աղաղակին. կերակրի մօտ նստած՝ նա սուլում է ուտելու ախորժակով և աշխոյժ ձայնով։ Այդ համարձակ ձայնի վրայ հաւաքւում են նաև երկչոտները և բոլորը նորից սկսում են կեռաս կոցահարել՝ կարծես թէ որսորդն ոչ օքի սպանած չլինէր։

Այդպէս պատահեց և գիւղացիների հետ. սենեակը կրկին լցուեց այն մարդկանցով, որ երէկ և այսօր ճաշից առաջ չէին համարձակւում գալու։

Շար գործ անելիս ամեն ինչ աշխոյժ է անցնում, եթէ շատերն են միատեղ են լինում և դրանց կառավարում են սըրտոտ ու համարձակ մարդիկ։ Եւ որովհետև այդպիսիներն անպակաս են գինետների մէջ, անվիճելի է, որ դրանք ա-

ւելի լաւ են կազմակերպուած՝ հասարակ ժողովրդին ամեն տեսակ չարութիւնների և վատ արարքների համար տրամադրելու, համարձակ և թեթևամիտ ուղղութիւն տալու, քան խեղճ և հասարակ դպրոցները, որ մարդկանց պատրաստում են առաքինի, խաղաղ և տնտեսական կեանքի համար։ Սակայն շարունակենք մեր պատմութիւնը։

Գինետանն եղած գիւղացիները կրկին տանուտէրի բարեկամները դարձան, որովհետև նրա գինու մօտ էին նստած։ Մէկը խօսում էր՝ թէ տանուտէրն այնպիսի մարդ է, որին ոչ ոք չի կարող յաղթել. միւսն ասելով՝ թէ Արները դեռ երեխայ է, պատմում էր թէ ի՞նչ ազդեցութիւն ունէր տանուտէրը նրա պապի վրայ։ Մի ուրիշը՝ թէ ի՞նչպէս Աստծոյ առաջ անարդարացի է և վերջին դատաստանի օրն անպատասխանատու բան, որ Արները կամենում է խեղճ համայնքից խլել գինետուն պահելու իրաւունքը, որ Նոյն իսկ Նոյի և Աբրահամի ժամանակներից՝ համայնքի ձեռքին է եղել։

Գիւղացիներն այսպէս էին բարբանջում և կոնծում. տանուտէրի կինը ծիծաղում էր և գինու գաւերը մէկը միւսի յետևից սեղանի վրայ դնում, իսկ դրանց թիւը միւս սենեակում կաւիճով նշանակում էր տախտակի վրայ։

Այդ միջոցին եկաւ տանուտէրը և սրտանց ուրախացաւ, երբ բոլոր սեղանները կրկին սրիկաներով շրջապատուած գտաւ։ Շա՞տ լաւ էք արել, պարոններ, որ ինձ չէք մոռացել, ասաց նա։

Մենք չենք դաւաճանի քեզ, պատասխանեցին գիւղացիները և աղմկալի գոչիւնով խմեցին նրա կենացը։

Այդպէս մի աղաղակէք, դրացիներ, ասաց տանուտէրը, այս գիշեր նախատօնակ է։ Պատուհանի փեղկերը փակի՛ր և հանգցրո՛ւ փողոցի կողմն եղած ճրագները։ Աւելի լաւ է, յետևի սենեակը գնանք. տաք է այնտեղ, այ կին։

Կինը։ Այո՛, ես մտածեցի այդ մասին ու տաքացնել տուի։

Տանուտէրը։ Լա՛ւ. դրացիներ՛, ամեն ինչ վերցրէք սեղաններից, գնանք յետևի սենեակը։

Կինն ու գիւղացիները վերցրին բաժակները, շշերը, հաց, պանիր, դանակ, ափսէ, խաղալու թուղթ և բոլորը

տարան յետևի սենեակը, որտեղից, եթէ մարդ էլ սպանեն, փողոցի վրայ ոչինչ չի լսուի։

Այստեղ ապահով ենք պատուհանների տակից ականջ դնող անպիտանների և սևագլխի (քահանայի) ծառաների հսկողութիւնից. բայց ես որսի շան նման ծարաւ եմ. գինի՛ բերէք այստեղ։

Կինը բերում է գինին և Քրիստէնը հարցնում է իսկոյն. այդ էլ այսօրուայ գինուցն է՞, տանուտէր, որ սափրիչի շունը հետդ խմեց։

Տանուտէր։ Ի՞նչպէս չէ. կրկին այնպիսի յիմարութիւն կանե՞մ.

Քրիստէն։ Ի՞նչ սատանայական նպատակ ունէիր։

Տանուտէր։ Աստուած է վկայ, ոչ մի նպատակ չունէի, յիմարութիւն էր միայն. գեռ անօթի էի ու չէի ուզում խմել։

Քրիստէն։ Չե՛մ հաւատում։

Տանուտէր։ Ինչո՞ւ։

Քրիստէն։ Ինչո՞ւ, որովհետև մեր խմած գինին էլ ծծմբի հոտ ունէր։

Տանուտէր։ Ո՞վ ասաց։

Քրիստէն։ Ե՛ս, վարպե՛տ Ուրիաս, խմելիս չնկատեցի այդ, բայց երբ դատարկ գաւը տուն էի տանում, ծծմբի հոտն այնպէս փչեց քթիս, որ քիչ մնաց մէջքիս վրայ ընկնէի։ Այս բոլորն ի նկատի առնելով՝ բաւականին պարզւում է, որ դու մի բան էիր ուզում անել։

Տանուտէր։ Եթէ օրօրոցի մանուկը բան գիտէ կնոջս ուղարկած գինու մասին՝ այնպէս էլ ես։ Դու երևակայում ես, գի՞ժ։

Քրիստէն։ Բայց գիտե՞ս, որ երկրի իրաւունքների մասին մի լաւ քարոզ ասացիր. կարծեմ այդ էլ այնպէս աննպատակ արեցիր, ինչպէս որ մեկը մի պտղունց քթախոտ է վերցնում։

Տանուտէր։ Լո՛ւր, Քրիստէն, ամենից լաւն այն կլինէր, որ քեզ մի լա՜ւ ծեծել տայի՝ գինու գաւը շուռ տալու համար։ Բայց, ասա՛ տեսնեմ, իմ գնալուց յետոյ սափրիչի մօտ էլ ի՞նչ պատահեց։

Քրիստէն։ Բայց խոստո՞ւմդ։

Տանուտէր։ Ի՞նչ խոստում։

Քրիստէն։ Որ մինչև առաւօտ խմած գինուս փողը չվճարեմ, եթէ լա՜ւ բան իմանամ։

Տանուտէր։ Բայց եթէ ոչինչ չգիտենաս՝ դարձեալ կխմե՞ս։

Քրիստէն. Ոչինչ չգիտենամ. գինի՛ բեր այստեղ և լսիր։

Տանուտէրը գինի է տալիս նրան, ու նստում կողքին։ Քրիստէնը պատմում է իր գիտցածը և չգիտցածը։ Մի անգամ նա իր ասածներն այնպէս շփոթեց, որ տանուտէրը նկատեց այդ և ասաց.

—Այնպէ՛ս ստիր, շո՜ւն, որ իսկոյն չնկատուի։

—Ո՛չ, Աստուած է վկայ, պատասխանեց Քրիստէնը, ասածիս ոչ մի կէտն էլ մազի չափ հեռու չէ ճշմարտութիւնից։

—Բաւականէ, Շաբենմիխէլն եկաւ, նրա հետ բան ունեմ խօսելու, ասաց տանուտէրը, մօտեցաւ միւս սեղանին, ուր նստած էր Շաբենմիխէլը, խփեց նրա ուսին և ասաց.

29.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. ԹԷ ՍՏԱՀԱԿՆԵՐՆ Ի՞ՆՉՊԷՍ ԵՆ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ԽՕՍՈՒՄ ԵՒ ԳՈՐԾՈՒՄ

Դու էլ մեղաւորների շարքո՞ւմն ես։ Ես կարծում էի, որ եկեղեցու պարսպի շինութեան գործում պաշտօն ստանալով՝ յանկարծ սուրը դարձար, ինչպէս որ արեց մեր մաագործը, երբ մի անգամ՝ մի ամբողջ շաբաթ՝ մղձսու փոխարէն ճաշերին պէտք է զանգահարէր։

Միխէլ։ Ո՛չ, տանուտէր, իմ դարձն այդպէս արագ չի լինի, բայց երբ մի անգամ սկսուի, էլ յետ չեմ մնայ։

Տանուտէր։ Այդ դէպքում կցանկանայի քո խոստովանահայրը լինել, Միխէլ։

Միխէլ։ Բայց ես չէի ցանկանայ։

Տանուտէր։ Ինչո՞ւ։

Միխէլ։ Դու յանցանքներս կկրկնապատկէիր քո սուրբ կաւիճով։

Տանուտէր։ Իրաւացի չէ՞ր լինի այդ։

Միխէլ։ Ո՛չ, տանուտէ՛ր, ես կամենում եմ այնպիսի

խոստովանահայր ունենալ, որ յանցանքներս ներէ ու թողութիւն տայ և ոչ թէ կաւիճով գրէ։

Տանուտէր։ Ե՛ս էլ կարող եմ յանցանքներդ ներել և թողութիւն տալ։

Միխէլ։ Քո գրքի՞ յանցանքներից։

Տանուտէր։ Ի հարկէ, դժբաղդաբար այդ յաճախ եմ անում։ Բայց աւելի լաւ է, որ ուրիշները կարծեն՝ թէ սիրով եմ այդպէս անում։

Միխէլ։ Կարելի՞ է այդ, պարո՛ն տանուտէր։

Տանուտէր։ Տեսնե՛նք, (կանչելու նշան է անում)։

Նրանք միասին գնում են վառարանին կից անկիւնում դրած սեղանի մօտ և տանուտէրն ասում է. լա՜ւ որ այստեղ ես, կարող է բաղդդ բանել։

Միխէլ։ Ես էլ բաղդի կարիք ունեմ։

Տանուտէր։ Հաւատում եմ, բայց եթէ պատրաստուես, փող կվաստակես։

Միխէլ։ Ինչպէ՞ս պէտք է անեմ այդ։

Տանուտէր։ Դու պէտք է որմնադրին շողոքորթես և քաղցած ու աղքատ ձևացնես քեզ։

Միխէլ։ Այդ առանց ստելու էլ կարող եմ անել։

Տանուտէր։ Դու պէտք է յաճախ քո բաժին ընթրիքն երեխաներիդ տաս, որ նա հաւատայ՝ թէ քո սիրտը հալած իւղի նման փափուկ է. երեխաներդ էլ պէտք է բոբիկ ու ցնցոտիներով յետևիցդ վազեն։

Միխէլ։ Ա՛յդ էլ դժուար չէ։

Տանուտէր։ Եւ երբ նրա տասը բանուորների մէջ ամենից սիրելին դու կդառնաս, այն ժամանակ կսկսուի գործդ։

Միխէլ։ Իսկ այդ գործն ի՞նչ պէտք է լինի։

Տանուտէր։ Դու պէտք է անես այն ամենը, ինչ որ կարող է շինութեան ժամանակ վէճ ու կասկած ծագեցնել, աշխատանքն անկարգ դրութեան մէջ ձգել և վարպետի ու բանուորների վարկն Արների աչքում վայր ձգել։

Միխէլ։ Այդ արդէն մի փոքր դժուար կարող է լինել։

Տանուտէր։ Բայց միևնոյն ժամանակ դու կարող ես դրամ վաստակել։

Միխէլ։ Այս ծրագիրն առանց այդ յոյսի՝ թէև կա-

դող էր մի խելօք մարդ տալ, սակայն յիմարը միայն կարող էր յանձն առնել։

Տանուտէր։ Շա՞տ հասկանալի է, որ դու այդ գործում դրամ պէտք է վաստակես։

Միխէլ։ Երկու թալէր առ ձեռն, պարոն տանուտէր, այդ պէտք է առաջուց վճարես, եթէ ոչ չեմ յանձն առնի։

Տանուտէր։ Դու հետզհետէ աւելի անամօթ ես դառնում, Միխէլ. իմ տուած գործում՝ բոլորովին ոչինչ չշինելով փող պէտք է վաստակես, իսկ դու կամենում ես իմ բարի խորհուրդը լսելուդ համար էլ վարձ ստանա՞լ։

Միխէլ։ Ոչինչ չեմ ուզում լսել։ Դու կամենում ես, որ քեզ ծառայելիս խաբեբայի դեր խաղամ. իսկ ես կամենում եմ այդ սրտանց ու հաւատարմութեամբ անել. բայց դրա համար հարկաւոր է առ ձեռն փող ու մի գրաւական. պէտք է տաս երկու թալէր և ոչ մի կրոյցեր պակաս. եթէ ոչ՝ ինքդ արա այդ գործը, տանուտէր։

Տանուտէր։ Հո՞ւն, դու գիտես՝ թէ ո՞րտեղ կարող ես ստիպել. ահա՛ քեզ երկու թալէր։

Միխէլ։ Հիմա ամեն բան կարգին է, վարպետ, կարող ես հրամայել։

Տանուտէր։ Դու կարող ես, օրինակի համար, գիշերով տախտակամածի ոտնակապերը կտրտել, մի հարուածով եկեղեցու լուսամուտները ջարդել ու վերևից ներքև թափել. քեզ համար շա՞տ հեշտ բանէ այդ. իսկ որ պարանները, թիերն և ուրիշ այնտեղ թափուած մանր մունր բաները յաջող դիպուածում պէտք է անյայտանան, ինքն ըստ ինքեան հասկանալի է։

Միխէլ։ Բնականապէ՞ս։

Տանուտէր։ Դժուար չէ նոյնպէս մի մութը գիշեր տախտակամածի տախտակները բլրի վրայից այնպէս ածել գետի մէջ, որ նրանք դէպի Հոլլանդիա գնան։

Միխէլ։ Ո՛չ. այդ էլ կարող եմ։ Ես մի մեծ սպիտակ շապիկ կկախեմ եկեղեցու գաւթի մէջտեղն եղած սիւնի վրայ, որ գիշերապահն ու դրացի կինն եթէ աղմուկ լսեն, այդ երևոյթը տեսնելով՝ երեսները խաչակնքեն և չհետաքրքրեն ինձ։

Տանուտէր։ Անսա՞նձ անպիտան, ի՞նչպիսի մտքեր են գալիս գլուխդ։

Միխէլ։ Հարկաւ այդպէս կանեմ. դա կպաշտպանէ ինձ պարանոցաձիգ երկաթից։

Տանուտէր։ Այո՛, չպէտք է մոռանաս նաև հետեւելը. եթէ Արներին պատկանելիք նկարներ, հաշիւներ ու յատակագծեր ընկած լինեն այս և այնտեղ, պէտք է հաւաքես ու գիշերով ածես վառարանիդ մէջ։

Միխէլ։ Ճի՛շտ այդպէս կանեմ, պարո՛ն տանուտէր։

Տանուտէր։ Դու պէտք է բանն այնպէս սարքես, որ պատուելի ընկերներդ չաշխատեն. նա՞ մանաւանդ երբ դղեակից գալիս լինի Արները կամ մի այլ մարդ. այդպիսի դէպքերում անկարգութիւնն աւելի պէտք է աչքի ընկնի և դրանց էլ պէտք է հասկացնես թէ ի՞նչ ոգորմելի դրութեան մէջ է գործը։

Միխէլ։ Ամե՛ն բան կփորձեմ. այժմ լաւ հասկանում եմ՝ թէ ի՞նչ ես ցանկանում։

Տանուտէր։ Բայց ամենից առաջ հարկաւոր է, որ ես ու դու թշնամանանք։

Միխէլ։ Այդ էլ հասկանալի է։

Տանուտէր։ Սկսենք հէնց այժմեանից, որովհետև այստեղ այնպիսի անպիտաններ կլինեն, որ կերթան կպատմեն ուրիշներին՝ թէ մենք միասին ենք խորհուրդ արել ու համաձայնութիւն կայացրել։

Միխէլ։ Իրաւունք ունես։

Տանուտէր։ Մի քանի բաժակ էլի խմի՛ր. ես էլ այնպէս կձևացնեմ, որ իբրև թէ քեզնից հաշիւ եմ պահանջում, իսկ դու ուրանում ես։

Ես կսկսեմ աղաղակել, դու կհայհոյես ինձ և մենք դռնից դուրս կձգենք քեզ։

Միխէլ։ Այդ շա՞տ լաւ մտածեցի՛ր (շուտով դատարկում է բաժակը և տանուտէրին ասում. սկսի՛ր այժմ)։

Տանուտէրն սկսում է հաշուի մասին փնթփնթալ և բարձրաձայն ասում է. գուլդէնը չե՛մ ստացել։

Միխէլ։ Մտածի՛ր, տանուտէր։

Տանուտէր։ Աստուած է վկայ, որ ոչինչ չեմ ստացել.

(կանչում է կնոջը) այ կին, անցեալ շաբաթ Միխէլից մի գուլդէն ստացա՞ր։

Կինը։ Ո՛չ մի կրոյցէր։

Տանուտէր։ Զարմանալի է, ինձ տուր ցուցակը. (կինը բերում է ցուցակը, տանուտէրը կարդում է.) երկուշաբթի ոչինչ չես տուել, երեքշաբթի նոյնպէս. ասում ես՝ թէ չորեքշաբթի՞ էր։

Միխէլ։ Այո՛։

Տանուտէր։ Չորեքշաբթի՞, ահա՛, տես, ոչինչ չկայ նշանակուած. նոյնպէս հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, մի խօսք անգամ չկայ քո տուած գուլդէնի մասին։

Միխէլ։ Սատանա՛ն գիտէ, ես վճարել եմ։

Տանուտէր։ Հանդարտ, բարեկամ, հանդարտ, ես ամեն բան գրում եմ։

Միխէլ։ Ես ի՞նչ գործ ունեմ քո գրելու հետ, տանուտէր, ես վճարեցի գուլդէնը։

Տանուտէր։ Ճշմարիտ չէ՛, Մի՛խէլ։

Միխէլ։ Վճարել եմ, ստահա՛կ։

Տանուտէր։ Ինչ ասացի՞ր, գո՛ղ անպիտան։

Մի քանի գիւղացիներ տեղից վեր են կենում և ասում. նա հայհոյե՛ց տանուտէրին, մենք լսեցինք։

Միխէլ։ Ճշմարիտ չէ. բայց ես վճարել եմ գուլդէնը։

Գիւղացիներ։ Ի՞նչ ես ասում, անպիտան, դու չհայհոյեցի՞ր նրան, բոլորս էլ լսեցինք։

Տանուտէր։ Սենեակից դուրս ձգեցէ՛ք այդ շանը։

Միխէլ։ (դանակը ձեռքին) Թող փորձէ՛ մէկն ինձ մօտենա՛լ...

Տանուտէր։ Խլեցէ՛ք ձեռքի դանակը։

Գիւղացիները դանակը խլում են նրա ձեռքից, դրսից դուրս ձգում ու կրկին յետ գալիս։

Տանուտէր։ Լա՛ւ որ դուրս գնաց. որմնադրի լրտեսն է այդ անիրաւը։

Գիւղացիք։ Աստուած է վկայ, որ նա լրտես է. լա՛ւ որ դուրս գնաց ստահակը։

30.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. ԹԷ Ի՞ՆՉՊԷՍ ՍՏԱՀԱԿՆԵՐԸ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ԽՕՍՈՒՄ ԵՒ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝ ՄԻ ԱՑԼ ԵՂԱՆԱԿՈՎ

Գինի՛ բերէք, տիկի՛ն. տանուտէ՛ր, մենք խմում ենք հունձքի հաշուով. մի չափ գինու համար տասնից մի որայ ենք տալիս։

Տանուտէր։ Շա՜տ շուտ էք ուզում վճարել։

Գիւղացիներ։ Թէպէտ ո՛չ շուտ, բայց աւելի դժուարութեամբ։

Տանուտէրը նստում է նրանց մօտ ու խմում սրտի ուզածին չափ՝ ապագայ ստանալիք տասանորդի յուսով։ Բոլորի բերանները բացւում են. բոլոր սեղաններից բարձրանում է հայհոյեանքների ու անէծքների մի վայրենի աղաղակ. նրանք պատմում են գողութեան, ծեծերի, հայհոյեանքների, իրենց չվճարած պարտքերի, անարդար միջոցներով տարած դատաստանական գործերի, բազմաթիւ չարութիւնների ու անմտութիւնների մասին, որոնցից շատերը թէև սուտ էին, բայց դժբաղդաբար աւելի շատերը ճիշտ։ Պատմում են թէ ի՞նչպէս ծեր Արներին խաբելով՝ գողացել են փայտի և հացի տասանորդը, թէ ի՞նչպէս այժմ իրենց կանայքն երեխաների հետ տխուր նստած են, թէ ի՞նչպէս մէկն աղօթագիրքն է վերցնում, միւսը մի գաւ գինի է թագցնում տոպրակի մէջ։ Պատմում են նոյնպէս իրենց տղաների ու աղջիկների մասին, թէ ի՞նչպէս նրանցից մէկն օգնում է հօրը՝ մօրը խաբելու համար, իսկ մի ուրիշը մօրն է օգնում՝ հօրը ծեծելու համար և թէ իրենք էլ մանկական հասակում դրանից աւելի վատ բաներ են արել։ Յետոյ սկսեցին խօսել խեղճ Ուլիի մասին, որ մի քանի այդպիսի յիմարութեանց մէջ բռնուելով՝ վերջը կախաղանի է արժանացել. պատմեցին թէ նա ի՞նչպէս երկիւղածութեամբ աղօթել է կախուելիս և հարկաւ արդար վախճանուել՝ թէև իր արածի կէսն էլ չէ խոստովանել քահանային։

Նրանք Ուլիի պատմութեան ու քահանայի չարութեան մասին էին խօսում, երբ տանուտէրի կինն իր մարդուն նշանով իմաց տուեց, որ դուրս գայ։

Սպասի՛ր, մինչև որ Ուլիի պատմութիւնը վերջանայ,

եղաւ Նրա պատասխանը։ Բայց կինը ծածուկ Նրա ականջում փսփսաց. Յովսէփն եկաւ։

Թագցրու Նրան, շուտով կգամ, ասաց տանուտէրը։

Յովսէփը մտաւ խոհանոցը։ Բայց տանն այնչափ մարդ կար, որ տիկինն երկիւղ կրելով թէ գուցէ տեսնեն Նրան, ճրագը հանգցրեց և ասաց. Յովսէփ, կօշիկներդ հանիր ու հետևիր ինձ դէպի ներքևի սենեակը, ամուսինս էլ ցած կգայ։ Յովսէփը կօշիկները ձեռքին բռնած՝ ոտքի մատների վրայ հետևեց Նրան դէպի ներքևի սենեակը. կարճ ժամանակից յետոյ եկաւ նոյնպէս տանուտէրը և հարցրեց. ի՞նչ կայ այսպէս ուշ, Յովսէփ։

Յովսէփ։ Առանձին ոչինչ. ուզում էի ասել, որ քարի բանը կարգի բերի։

Տանուտէր։ Շա՞տ ուրախ եմ, Յովսէփ։

Յովսէփ։ Վարպետս այսօր խօսում էր պարսպի մասին և ասում, որ շրջակայքում գտնուած դաշտային քարերը լաւ են, բայց ես Նրան ուղղակի ասացի, որ սիմար է և երբէք իր գործը ճիշտ չէ հասկանում, որ պարիսպը Շվէնդի քարերից ափսէի նման սիրուն ու ողորկ կլինի։ Նա չըհակառակեց. ես հասկացրի Նրան, որ եթէ Շվէնդի քարերից չվերցնէ, նշանակում է թէ՝ քացով է տալիս իր բաղդին։

Տանուտէր։ Ցետոյ վճռե՞ց հետևել քո խորհրդին։

Յովսէփ։ Այո, մի վայրկեանում գործն արդէն վերջացած էր։ Երկուշաբթի կսկսենք կտրել։

Տանուտէր։ Մշակներն երկուշաբթի պէտք է դղեակ գնան։

Յովսէփ։ Նրանք ճաշին կրկին կվերադառնան և իրենց գործիքներով կսկսեն աշխատել. այդ մասին կարող ես վստահ լինել։

Տանուտէր։ Լա՞ւ է, բայց երանի՞ թէ գործն արդէն վերջացած լինէր. ստանալիքդ արդէն պատրաստ է, Յովսէփ։

Յովսէփ։ Հէնց այժմ կարիք ունեմ, տանուտէր։

Տանուտէր։ Երկուշաբթի, երբ արդէն աշխատանքն սկսած կլինէք, ե՛կ և ստացիր. արդէն պատրաստ է։

Յովսէփ։ Կարծում ես թէ խօսքս չեմ կատարի՞։

Տանուտէր։ Հաւատում եմ քեզ, Յովսէփ։

Յովսէփ։ Ուրեմն հէնց այժմ տուր իմ ստանալիք երեք

թալէրը։ Ուզում եմ կոշկակարից վերցնել իմ մի զոյգ նոր կոշիկները, որովհետև վաղն իմ անուանակոչութիւնն է. վարպետից չեմ կարող փող պահանջել։

Տանուտէր։ Այժմ չեմ կարող տալ, երկուշաբթի երեկոյեան եկ։

Յովսէփ։ Այժմ տեսնում եմ, թէ ի՞նչպէս ես հաւատում ինձ։ Խոստանալ կարելի՞ է, իսկ կատարե՞լը—այդ ուրիշ խնդիր է։ Կարծեմ կարող եմ յուսալ, որ խօսքդ կկատարես, պարոն տանուտէր։

Տանուտէր։ Հոգիս վկայ՝ կտամ։

Յովսէփ։ Տեսնո՞ւմ եմ։

Տանուտէր։ Երկուշաբթի կստանաս։

Յովսէփ։ Տանուտէր, դու պարզ ցոյց ես տալի, որ չես հաւատում ինձ. ուրեմն ես էլ կարող եմ ասել՝ թէ ի՞նչպէս եմ մտածում։ Եթէ մենք քար կտրելն արդէն սկսած լինենք, դու մի բարեկամական խօսք էլ չես ասի ինձ։

Տանուտէր։ Անամօթ բաներ ես ասում, Յովսէփ, ես խօսքս կկատարեմ։

Յովսէփ։ Ձե՞մ էլ ուզում լսել։ Եթէ այժմ չես տալ, նշանակում է՝ ամեն բան վերջացաւ։

Տանուտէր։ Ձե՞ս կարող առ այժմ երկու թալէրով բաւականանալ։

Յովսէփ։ Ո՛չ, երեք թալէր պէտք է ունենամ. բայց յետոյ կարող ես ամեն բանում վստահ լինել ինձ վրայ։

Տանուտէր։ Ճար չկայ, պէտք է տամ, բայց խօսքդ կկատարե՞ս։

Յովսէփ։ Եթէ խաբեմ՝ իրաւունք եմ տալիս քեզ ամեն տեղ, ուր որ կամենաս ասելու, որ ես աշխարհիս ամենամեծ ստահակն ու գողն եմ։

Տանուտէրը կանչեց կնոջն ու ասաց. Յովսէփին երեք թալէր տուր։ Կինը մի կողմը քաշեց նրան և ասաց. մի տայ։

Տանուտէր։ Առանց խօսելու արա, ինչ որ ասում եմ։

Կինը։ Խենթ մի՛ լինի, այժմ հարբած ես. վաղը կըզղջաս։

Տանուտէր։ Ո՛չ մի խօսք. իսկոյն տո՛ւր երեք թալէրը, լսում ե՞ս։

Կինը հառաչելով բերում է թալէրներն ու ձգում

տանուտէրի առաջը։ Վերջինս փողը տալիս է Յովսէփին ու մի անգամ էլ ասում. չե՞ս խաբի ինձ։

Աստուած ո՛չ անէ, ի՞նչ ես ասում, տանուտէր, պատասխանեց Յովսէփը. յետոյ դրան մօտ մի անգամ էլ համրեց ստացած փողերը և ինքն իրեն ասաց. հիմա դրամը ձեռքիս է. ինձ համար այստեղ աւելի ապահով է, քան տանուտէրի քսակի մէջ։ Ես չէի ցանկանալ, որ այդ ծեր ստահակն ինձ յիմարացնէ։ Այժմ ինձ համար բոլորովին միևնոյն է թէ վարպետն ի՞նչպիսի քար բերել կտայ պարսպի համար։

Տանուտէրի կինը խոհանոցի օջաղի մօտ նստած՝ բարկութիւնից լաց էր լինում և մինչև կէս գիշեր էլ սենեակ չմտաւ։ Յովսէփի գնալուց յետոյ տանուտէրը նոյնպէս զգաց, որ շտապեց, բայց ընկերութեան մէջ շուտով մոռացաւ այդ։ Կէս գիշերն անցել էր, բայց խմողների անպիտան արարքը դեռ շարունակւում էր։ Վերջապէս տանուտէրի կինը դուրս եկաւ խոհանոցից և ասաց. արդէն ժամանակ է վերկենալու, շուտով կլուսանայ. այս գիշեր էլ նախատօնակ է։

Նախատօնա՞կ, ասացին անպիտանները, ձրգձգուեցին, յորանջեցին, դատարկեցին բաժակները և մէկը միւսի յետևից վեր կացան, սկսեցին այս ու այն կողմն ընկնել և սեղաններից ու պատերից բռնելով՝ հազիւ դուրս եկան պանդոկից։

Մէկ-մէկ գնացէ՛ք և աղմուկ մի՛ հանէ՛ք, ասաց նրանց տանուտէրի կինը, եթէ ոչ քահանան և իր օգնականները տուգանք կառնեն ձեզնից։

Ո՛չ, աւելի լաւ է այդ փողով գինի խմենք, պատասխանեցին նրանք։

Եթէ գիշերապահին պատահէ՛ք, ասաց տանուտէրի կինը, ասացէ՛ք որ գայ. նրա մի բաժակ գինին ու մի կտոր հացը պատրաստ է։ Հէնց նրանք դուրս գնացին թէ չէ, գիշերապահն երևաց պանդոկի պատուհանների առաջն և աղաղակեց.

Կամենո՞ւմ էք լսել՝ թէ ի՞նչ պէտք է ասեմ ձեզ.

Զանգակն արդէն ժամի մէկը խփեց.

Ժամի մէկը խփե՞ց։

Տանուտէրի կինը հասկացաւ այդ խօսքերի նշանակու-

թիւնը, գինին բերեց ու խնդրեց, որ քահանային չասէ՝ թէ ո՞րչափ ժամանակ էին հիւրերը պանդոկում մնացել։ Յետոյ նա օգնեց իր հարբած ու քնած մարդու զգեստները հանելու։..... *)

Տանուտէրի կինը դեռ մրթմրթում էր Յովսէփին տըւած թալէրների և իր մարդու յիմարութեան վրայ. իսկ տանուտէրը քնած խռմփացնում էր և չգիտէր թէ ի՞նչ արեց։ Վերջապէս երկուսն էլ հանգստացան։

Ես էլ, փա՜ռք Աստծոյ, մի փոքր ժամանակ ոչինչ չու�նեմ նրանց մասին պատմելու և դառնում եմ Լինհարդին ու Գերտրուդին։

Աշխարհս զարմանալի՜ է. երբեմն շան որջի մօտ պարտէզ է շինուած լինում. մարդապետնի վրայ թափուած հոտած անմաքրութեան կողքին՝ հրաշալի ու կաթնալի խոտ է բուսնում։ Այո՛, զարմանալի՜ է աշխարհս. նոյն իսկ գեղեցիկ մարդագետիններն առանց իրենց վրայ թափուած անմաքրութիւնների՝ խոտ չեն տալիս։

---

*) Այս կէտերի տեղը կային մի քանի տողեր։—Այդ անվայել է, ասաց հաղիւ տասը տարին լրացած մի մանուկ, երբ լսեց այդ տողերը կարդալիս. ես գրկեցի նրան ու ջնջեցի այդ տողերը։ —Պատանեակ, եթէ դու պահես մաքուր զգացմունքդ և այտերիդ մեղմ կարմրելը, այն ժամանակ երիտասարդական այդ յատկանիշը քեզ ուրախութիւն կպատճառէ ծերութեանդ օրերում։ Բայց եթէ սրտիդ այդ մեղմ անմեղութիւնը զոհես հետզհետէ մեծացող արիութեան համարձակութեանդ, այն ժամանակ քո փայլատակող աչքն այլ ևս գետին չի խոնարհուի և արտասուք թափի. քո այտերն էլ չեն կարմրի անարգար և անբարոյական գործ տեսնելիս։ Պատանեակ, այն ժամանակ դու լաց կլինես այս տողերը կարդալիս կամ թէ կարդալու անարժան կդատես։ Այս բոպէին բնականապէս իմ մէջ պէտք է ծագէր այն միտքը՝ թէ բարոյական մատենագիրն ի՞նչ սահմանի մէջ կարող է յանցանքը նկարագրել։ Արդեօք իմ բերանը կարո՞ղ է արտասանել այն, ինչ որ նկարել են Հօգարթի և ուրիշները. կարո՞ղ եմ արտասանել այդ մարդոց գործողութիւնը, որ վրձինով նկարած եմ տեսնում։ Սարսափելի զգացմունք է տիրում ինձ, երբ այդ մարդոց գործողութիւնը բառերով եմ արտասանում և նայում եմ շուրջս՝ թէ արդեօք մէկը լսո՞ւմ է ինձ։

Սակայն նկարչի պատկերը տեսնում եմ ամենալաւ, ամենասազնիւ անձի ձեռքում և չեմ քաշւում։ Արդու լեզուն և բերանն աւելի սերտ կերպով են կապակցուած նրա զգացմունքների հետ, քան նրա ձեռքը։

31.

ՆԱԽԱՏՕՆԱԿՆ ԱԶՆԻՒ ՄՕՐ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Գերտրուդը դեռ մենակ նստած էր իր մանուկների հետ։ Շաբաթուայ անցքերը և յաջորդ օրուայ տօնն ուրախութիւն էին պատճառում նրան. նա լուռ պատրաստեց ընթրիքը, արկղից հանեց իր մարդու և որդոց կիրակնօրեայ զգեստները և բոլորը կարգի բերեց վաղուան համար, որ տօն օրը հանգիստ լինի և այս ու այն կողմը չընկնի։ Երբ բոլոր գործերը վերջացրեց, երեխաներին հաւաքեց սեղանի շուրջը՝ նրանց հետ աղօթելու։

Գերտրուդը սովորութիւն ունէր ամեն շաբաթ օր, երեկոյեան աղօթքի ժամանակ յիշեցնել երեխաներին ամբողջ շաբաթուայ անցքերն ու սխալները. այդ մի զգուշացուցիչ և օգտակար միջոց էր երեխաների զգացմունքների կրթութեան համար։ Իսկ այսօր նա առանձնապէս մտադիր էր իր կարողութեան չափ մանուկների սրտի մէջ խորը և անմոռանալի կերպով տպաւորելու այն մեծ բարիքը, որ այս շաբաթուայ ընթացքում Աստուած շնորհել էր իրենց ընտանիքին։ Մանուկները խաղաղ նստած էին նրա շուրջը. նրանք կցեցին իրենց ձեռքերն՝ աղօթքի համար և մայրն այսպէս սկսեց։

Այսօր մի լա՜ւ բան ունեմ ասելու ձեզ, զաւակներս. ձեր սիրելի հայրն այս շաբաթ լաւ գործ ստացաւ և սովորականից աւելի վաստակ կունենայ։

Զաւակներս, կարող ենք յուսալ, որ ապագայում մեր ամեն օրուայ հացն աւելի քիչ հոգսերով և տրտմութիւններով ձեռք կբերենք։ Շնորհակալ եղէք Աստծուց, մանուկներս, որ նա մեզ հետ այդպէս լաւ է վարուում և մտածեցէք անցած ժամանակների մասին, երբ ես մեծ երկիւղով և

Արուեստը, որ ձեռքով եւ վրձինով նկարում է յանցանքը, որ համարձակ է եւ ամենախորին զգացմունքն անգամ լաւ է արտայայտում, այնպիսի ուժով չէ փչացնում սիրտը, ինչպէս բերանը՝ երբ նա հաւասարաչափ համարձակութեամբ մերկացնում է յանցանքը։ Այս մի գովասանական ճառ չէ հոչակաւոր բանաստեղծների համար, սակայն ինձ այնպէս է թւում, որ այս բանը մի նշանաւոր ճշմարտութիւն է մարդկութեան համար, նա՝ մանաւանդ մեր դարում, երբ ընդհանրապէս ընդունուած է....

Հոգացողութեամբ էի ամեն մէկիդ մի կտոր հաց տալիս։ Շատ անգամ սիրտս ցաւո՞ւմ էր, որ ձեզ բաւականաչափ հաց չէի կարողանում տալ, բայց մեր սիրելի Աստուածը գիտէր, որ պէտք է օգնէր. ձեզ համար աւելի լաւ է, սիրելիներս, որ չքաւորութեան մէջ դաստիարակուէք, համբերող լինէք և ձեր բաղձանքներին դիմադրէք, քան թէ կարևորից աւելին ունենաք։ Որովհետև այն մարդը, որ ամեն բան ունի, ինչ որ կամենում է, շուտով թեթևամիտ է դառնում, մոռանում է Աստծուն և չէ անում այն, ինչ որ իր համար ամենից պէտքականն ու ամենից լաւն է։ Զաւակներս, մինչև ձեր կեանքի վերջը յիշեցէք այս աղքատութիւնն և մեր ունեցած բոլոր հոգսերն ու կարիքը։ Իսկ եթէ այսուհետև մեր բանն աւելի յաջող լինի, մտածեցէ՛ք, զաւակներս, նրանց մասին, որոնք ձեզ նման կարիք ունեն։ Երբէ՛ք չմոռանաք, որ քաղցը և կարիքը թշուառութիւն է և ցաւակից եղէք չքաւորներին. եթէ կարևորից մի պատառ աւելի ունենաք, սիրով տուէք ուրիշներին։ Դուք այդ սիրով կանէ՛ք, այնպէս չէ՞, մանուկներս։ Այո՛, մա՛յր, իհարկէ սիրով, ասացին բոլոր մանուկները։

32.

ԱՂՕԹՔԻ ԺԱՄՈՒԱՑ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մայր։ Նիկլաս, քո ծանօթներից ո՞վ է ամենից շատ քաղցած լինում։

Նիկլաս։ Ռուդելին։ Դու երէկ նրա հօր մօտ էիր. նա քաղցից կմեռնի, որովհետև գետնի վրայից խոտ է գչլում և ուտում։

Մայր։ Արդեօք կարո՞ղ ես երբեմն—երբեմն ընթրիքդ նրան տալ։

Նիկլաս։ Այո՛, մա՛յր. հէնց վաղը կարո՞ղ եմ այդպէս անել։

Մայր։ Այո՛, կարող ես։

Նիկլաս։ Այդ բանն ուրախութիւն կպատճառէ ինձ։

Մայր։ Իսկ դո՛ւ, Լի՛զէ, մի մի անգամ ո՞ւմը կկամենայիր տալ ընթրիքդ։

Լիզէ։ Իսկոյն չեմ կարող յիշել՝ թէ ամենից սիրով ո՞ւմը կտայի։

Մայր։ Ոչ մի մանուկ չե՞ս յիշում, որ քաղցած լինի ճալիս։

Լիզէ։ Ի՞նչպէս չէ, մա՛յր։

Մայր։ Ուրեմն ինչո՞ւ չգիտես՝ թէ ումը պէտք է տաս, Լիզէ, դու միշտ խելօք ես մտածել։

Լիզէ։ Այժմ գիտե՛մ։

Մայր։ Ո՞վ է։

Լիզէ։ Ռոյտի-Մարքսի Բեթէլին. այսօր նա տանուտէրի աղբանոցում փթած գետնախնձոր էր որոնում։

Նիկլաս։ Այո՛, մա՛յր, ես էլ տեսայ և բոլոր գրպաններս շուռ ու մուռ տուի, բայց մի կտոր հաց էլ չգտայ։ Երանի՜ թէ մի քառորդ ժամ աւելի պահած լինէի ունեցածս։

Գերտրուդը նոյնը հարցրեց և միւս երեխաներին. բոլորն էլ սրտանց ուրախ էին, որ վաղն իրենց ընթրիքը չքաւոր մանուկներին պէտք է տան։ Մայրը մի վայրկեան թոյլ տուեց նրանց ուրախանալու և յետոյ ասաց. զաւակներս, այդչափ բաւական է, այժմ մտածեցէք մեր ողորմած կալուածատիրոջ ձեզ տուած սիրուն ընծաների մասին։

Հա՛, մեր սիրուն աբասինե՜ը։ ցո՜յց տուր մեզ, մա՛յրիկ։

Աղօթքից յետոյ, ասաց մայրը և մանուկներն ուրախութիւնից հրճւում էին։

33.

ԼՐՋՈՒԹԻՒՆ ԱՂՕԹՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Աղաղակ մի՛ բարձրացնէք, զաւակներս, ասաց մայրը։

Երբ ձեզ բարութիւն են անում, միշտ մտածեցէք Աստծոյ մասին, նա է մեզ ամեն բան տալիս։ Երբ այդպէս մտածէք, զաւակներս, այն ժամանակ ոչ մի ուրախութեան միջոցին անզուսպ չէք լինի։ Ես էլ ձեզ հետ ուրախ եմ, սիրելիներս, բայց երբ ուրախութեան և վշտի ժամանակ անզուսպ և շափազանց տաքանում ենք, կորցնում ենք մեր սրտի հանգստութիւնը և խաղաղ անդորրութիւնը։ Իսկ երբ խաղաղ, հանգիստ և զուարթ սիրտ չունենք, առողջ չենք. այդ պատճառով երբէք չպէտք է մոռանանք Աստծուն։ Առաւօտեան ու երեկոյեան աղօթքը հէնց դրա համար է. երբ շնորհակալ ենք լինում Աստծուն կամ աղօթում, ու-

բախանալիս չափից չենք անցնի, իսկ հոգսեր ունենալիս երբէք անսփոփ չենք մնայ. այդ պատճառով, զաւակներս, պէտք է աշխատենք, նա մանաւանդ աղօթքի ժամանակ, հանգիստ ու զուարթ լինել։ Տեսէք, զաւակներս, երբ դուք ձեր հայրիկին շնորհակալութիւն էք յայտնում մի բանի համար, աղաղակ չէք բարձրացնում, նրա վզովն էք ընկնում հանգիստ ու սակաւ խօսքերով և երբ ձեր սիրտը զգացում է, ձեր աչքերն էլ արցունքով են լցւում։ Տեսէք, զաւակներս, այդպէս էլ պէտք է լինի նաև Աստծոյ առաջ։ Եթէ նրա բարիքը ձեզ շատ է ուրախացնում և ուզում էք սրտանց շնորհակալ լինել նրանից՝ մեծ աղմուկ չպէտք է հանէք։ Տեսէք, զաւակներս, աղօթում ենք, որ մեր սիրտը միշտ շնորհակալ մնայ Աստծուց և մարդկանցից։ Սրտանց աղօթելիս՝ սրտանց էլ գործում՝ ենք և այդպիսով մեր ամբողջ կեանքում միշտ սիրելի կլինենք թէ Աստծուն և թէ մարդկանց։

Նիկլաս։ Մայրիկ, դու երէկ ասում էիր, որ եթէ լաւ լինենք՝ մեր ողորմած կալուածատիրոջն էլ սիրելի կլինենք։

Մայր։ Այո՛, զաւակներս, նա մի ճշմարիտ, բարի և երկիւղած մարդ է։ Աստուած վարձատրէ նրան այն ամենի համար, ինչ որ արել է մեզ համար. երանի՜ թէ դու մի օր նրա ճշմարիտ սիրելին լինես, Նիկլաս։

Նիկլաս։ Որովհետև նա այդպէս բարի է, ես կանեմ այն բոլորը, ինչ որ նա կկամենայ. ինչպէս ամեն բան անում եմ քեզ և հօրս համար։

Մայր։ Ա՛յդպէս, Նիկլաս. միշտ այդպէս մտածիր և հարկաւ նա կսիրէ քեզ։

Նիկլաս։ Երանի՜ թէ կարողանայի մի անգամ նրա հետ խօսել։

Մայր։ Ի՞նչ պէտք է խօսէիր նրա հետ։

Նիկլաս։ Շնորհակալութիւն կայտնէի նրա տուած գեղեցիկ աբասիների համար։

Աննելի։ Համարձակութիւն կունենա՞ս նրան շնորհակալութիւն յայտնելու։

Նիկլաս։ Ինչո՞ւ չէ։

Աննելի։ Ես չէի համարձակուի։

Լիզէ։ Ո՛չ էլ ես։

Մայր։ Ինչո՞ւ չէիք համարձակուի, զաւակներս։

Լիզէ։ Ծիծաղս կգար։

Մայր։ Ի՞նչ, ծիծաղդ կգա՞ր, Լիզէ, այդ ի՞նչ յիմարութիւն ասացիր։

Աննելի։ Ես չէի ծիծաղի, բայց կվախենայի։

Մայր։ Նա ձեռքդ կբռնէր, Աննելի, և հայրիկիդ պէս ուրախ ժպիտով կնայէր քեզ. եթէ քեզ հետ այդպէս լաւ վարուէր, այն ժամանակ դու դարձեա՞լ կվախենայիր, Աննելի։

Աննելի։ Ո՛չ, այն ժամանակ չէի վախենայ։

Յովնաս։ Այդ դէպքում ես էլ չէի վախենայ։

34.

ԱՅՍՊԻՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱԶԴՈՒ ԵՒ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԿԼԻՆԻ. ՈՒՍՈՒՑԱՆՈՂԸ ՄԱՑՐՆ Է

Սիրելի զաւակներս, արդեօք այս շաբաթ ամեն բան լաւ ու արդա՞ր կերպով էք արել։

Երեխաները միմեանց նայեցին ու լռեցին։

Մայր։ Աննելի, այս շաբաթ անարդար բան չե՞ս արել։

Աննելի։ (Աչքերը ցած գցելով). Մա՛յր, քեզ յայտնի է փոքրիկ եղբօրս հետ պատահած դէպքը...։

Մայր։ Աննելի, կարող էր երեխային մի բան պատահել. եղել են դէպքեր, որ մանուկները բոլորովին մենակ մնալով՝ խեղդամահ են եղել։ Քացի դրանից, մտածիր թէ ի՞նչ կանէիր, եթէ քեզ մի սենեակում փակած թողնէին և դու այնտեղ քաղցած ու ծարաւ աղաղակէիր։ Փոքրիկ երեխաներն էլ բարկանում են և աղաղակում, երբ երկար ժամանակ առանց օգնութեան են մնում. իսկ այդ բանը նրանց թշուառութիւն կարող է պատճառել։ Աննելի, Աստուած է վկայ, որ ես մի վայրկեան անգամ տանից չէի դուրս գնայ, եթէ երկիւղ ունենայի, որ դու երեխային հոգացողութեամբ չես նայի։

Աննելի։ Հաւատա՛ ինձ, մայր, որ ես էլ նրանից չեմ հեռանայ։

Մայր։ Ցուսով եմ, որ դու էլ այդպէս չես վախեցնի ինձ։

Նիկլաս, դո՞ւ ինչ ես արել այս շաբաթ։

Նիկլաս։ Վատ բան չեմ արել։

Մայր։ Էլ չե՞ս յիշում, որ այս երկուշաբթի օրը Գրիտելին հրեցիր։

Նիկլաս։ Ուժով չարի այդ, մայր։

Մայր։ Ա՜յդ էր պակաս, որ ուժով էլ անէիր. չես ամաչում այդպիսի բան ասելո՞ւ։

Նիկլաս։ Ցաւում եմ. էլ չեմ անի, մայր։

Մայր։ Երբ մեծանաս և այժմեան նման չզգուշանաս ու շուրջդ չնայես, մեծ վնասների կհանդիպես։ Նոյն իսկ անզգոյշ մանուկները միշտ կռիւ են ունենում. այդ պատճառով էլ վախենում եմ, սիրելի Նիկլաս, որ դու քո անզգոյշ էութեամբ շատ հոգս ու դժբաղդութիւն կպատճառես քեզ։

Նիկլաս։ Իհարկէ զգոյշ կլինեմ, մայր։

Մայր։ Հաւատա՛, սիրելիս, որ անզգուշութեամբ կարող ես դժբաղդացնել քեզ։

Նիկլաս։ Սի՛րելի մայր, գիտեմ այդ և այսուհետև իհարկէ զգոյշ կլինեմ։

Մայր։ Իսկ դո՛ւ, Լիզէ, ի՞նչպէս պահեցիր քեզ այս շաբաթ։

Լիզէ։ Այս շաբաթ ես վատ բան չեմ արել, մայր։

Մայր։ Ճշմարիտ։

Լիզէ։ Այո՛, մայր, որչափ յիշում եմ, եթէ ոչ սիրով կասէի։

Մայր։ Դու միշտ չգիտցած ժամանակդ էլ աւելի շատ խօսքերով ես պատասխանում, քան թէ իսկապէս բան գիտցողը։

Լիզէ։ Ես ի՞նչ ասացի այժմ, մայր։

Մայր։ Հէնց այդ է, որ ոչինչ չասացիր, բայց և այնպէս երկար պատասխան տուիր։

Հազար անգամ ասել եմ քեզ, որ խելօք չես, խօսածիդ վրայ չես մտածում, բայց ուզում ես միշտ խօսել— Ի՞նչ գործ ունէիր անցեալ օրը տանուտէրին ասելու՝ թէ Արնները շուտ կգայ։

Լիզէ։ Սխալուել եմ, մայր։

Մայր։ Արդէն յաճախ ասել եմ քեզ, որ չպէտք է խառնուես այն ամեն բանի մէջ, որ քեզ չէ վերաբերում. նա՞ մանաւանդ օտար մարդկանց առաջ, բայց շարունակ

այդպէս ես անում։ Եթէ հայրդ այդ չուզենար ասել, չէ՞ որ կնեղանար ասածիցդ։

Լիզէ։ Այդ ինձ շա՞տ մեծ ցաւ կպատճառէր, բայց ոչ դու և ոչ էլ հայրս չասացիք, որ նրա գալու լուրը գաղտնի պահենք։

Մայր։ Շա՞տ լաւ, հայրդ երբ տուն գայ, կասեմ նրան այդ. այսուհետև պէտք է սենեակում խօսեցածների վերջն աւելացնենք. Լիզան այս կարող է դրացիներին ասել և աղբիւրի վրայ պատմել, իսկ այն—ոչ։ Այսպէսով դու ճիշտ կգիտենաս, թէ ինչի՞ մասին պէտք է դուրս տաս։

Լիզէ։ Ների՛ր ինձ, մայր, ես այդպէս չէի ասում։

Մայր։ Քեզ մի անգամ ընդ միշտ ասել են, թէ ինչ որ քո բանը չէ, չպէտք է խառնուես. սակայն իզո՞ւր։ Այդ բանից պէտք է անպատճառ ձեռք վերցնես. եթէ մի անգամ էլ այդպիսի յիմար խօսակցութեան մէջ բռնուես՝ խիստ հարուածներով կպատժուես։

Երբ մայրը հարուածների մասին խօսեց, Լիզայի աչքերն արտասուքով լցուեցան։ Մայրը տեսաւ այդ և ասաց. Լի՛զէ, ամենամեծ դժբաղդութիւններն անզգոյշ խօսքերից են առաջանում. այդ թերութիւնից պէտք է ազատուես։

Այսպէս խօսեց մայրը բոլորի, մինչև անգամ փոքրիկ Գրիտտելիի հետ և ասաց. դու չպէտք է այդպէս անհանգիստ կերպով կերակուր պահանջես, եթէ ոչ ուրիշ անգամ աւելի երկար սպասեցնել կտամ կամ թէ քո բաժինն էլ ուրիշին կտամ։

Այս բոլորից յետոյ մանուկներն աղօթեցին իրենց սովորական երեկոյեան աղօթքը և ապա թէ շաբաթ օրուայ համար նշանակուածը. այդ Գերտրուդն էր սովորեցրել նը-ռանց։ Այդ աղօթքը հետևեալն է.

35.

ՇԱՐԱԹ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Սիրելի, երկնաւոր Հայր, Դու միշտ բարի ես երկրիս մարդկանց համար և մեզ հետ էլ միշտ բարի ես. Դո՛ւ ես տալի մեզ այն ամենը, ինչ որ կարևոր է։ Այո՛, Դու մեզ կարևորից աւելին ես տալիս։ Ամեն բան Դո՛ւ ես հոգում. թէ հացը և թէ այն ամենն, որ տալիս են մեզ մեր սիրելի հայրն

ու մայրը։ Ամեն բան Դու ես տալի նրանցը և նրանք էլ մեզ են տալի։ Նրանք ուրախանում են այն ամենի համար, ինչ որ կարող են անել ու տալ մեզ և ասում են, որ մենք քեզնից պէտք է շնորհակալ լինենք, որ իրենք այդպէս բարի են։ Նրանք ասում էն, որ եթէ իրենք քեզ չճանաչէին և այդպէս չսիրէին, այն ժամանակ մենք էլ քեզ այդպէս սիրելի չէինք լինի. և եթէ նրանք քեզ չճանաչէին ու չսիրէին, այն ժամանակ մեզ շատ քիչ բարիք կարող էին անել։ Նրանք ասում են մեզ դարձեալ, որ մենք մարդկանց Փրկչից պէտք է շնորհակալ լինենք, որ նրանք քեզ, երկնաւոր Հայր, ճանաչում և սիրում են, իսկ այն բոլոր մարդիկը, որոնք սիրելի Փրկչին չեն ճանաչում ու սիրում, չեն հետևում այն բոլոր բարի խորհուրդներին, որ նա տուել է աշխարհիս մարդկանցը, քեզ էլ չեն ճանաչում և իրենց մանուկներին այնպիսի հոգացողութեամբ և բարեպաշտութեամբ չեն դաստիարակում, ինչպէս նրանք, որոնք հաւատում են աշխարհիս Փրկչին։ Մեր սիրելի Հայրն ու մայրը միշտ շատ բան են պատմում Յիսուսի մասին՝ թէ ինչպէս լաւ է վարուել նա աշխարհիս մարդկանց հետ, թէ ինչպէս մարդկանցը ժամանակաւորապէս և յաւիտեան երջանկացնելու համար իր կեանքն անցրել է հաղարաւոր թշուառութիւններով և թէ ինչպէս վերջապէս խաչի վրայ է մեռել. թէ ինչպէս Աստուած Նրան կրկին յարութիւն է տուել և թէ ինչպէս այժմ երկնային հրաշալեաց մէջ Աստծոյ գահի աջակողմն է։ Նա նոյն իսկ այժմ աշխարհիս բոլոր մարդկանցը հաւասարապէս է սիրում և աշխատում է նրանցն երջանկացնել և Աստծոյ արքայութեան արժանացնել։ Մենք Յիսուսի մասին լսելով՝ ամեն անգամ զգացում ենք։ Երանի՜ թէ մենք էլ սովորէինք այնպէս ապրել, որ նա մեզ սիրէր և մենք նրա մօտ գնայինք երկինք։ Սիրելի, երկնաւոր Հայր, մենք՝ խեղճ մանուկներս, որ այստեղ միասին նստած աղօթում ենք, եղբայրներ ու քոյրեր ենք, այդ պատճառով և ուզում ենք միմեանց հետ միշտ լաւ լինել և ցաւ չպատճառել միմեանց, այլ մեր կարողութեան չափ բարութիւն անել։ Փոքրերի համար հոգանք աշխատասիրութեամբ և հաւատարմութեամբ, որ մեր սիրելի Հայրն ու մայրն առանց հոգսի իրենց գործին գնան։ Այս միակ բանն է, որ մենք կա-

րող ենք անել նրանց՝ մեզ համար արած բոլոր աշխատանքի, հոգացողութեան և ծախսերի փոխարէն։ Երկնաւոր Հայր, ինչ որ նրանք անում են մեզ համար, փոխարէնը Դու վճարիր և թող մեզ, որ նրանց բոլոր կամքը կատարենք, որ նրանք մեզ սիրեն մինչև իրենց կեանքի վերջը, երբ Դու նրանց մեզնից կբաժանես և կվարձատրես մեզ ցոյց տրուած հաւատարմութեան համար։ Թող վաղուան սուրբ օրը յիշենք Քո բարութիւնը և Յիսուս Քրիստոսի սէրը. յիշենք այն, ինչ որ մեր սիրելի հայրն ու մայրը և ամէն մարդիկ անում են մեզ համար, որ մենք էլ Աստծուն և մարդկանց շնորհակալ և հնազանդ լինենք և մեր ամբողջ կեանքի ընթացքում քեզ սիրելի։

Նիկլասն այստեղ կանգ առաւ։ Ապա Գերտրուդը շաբաթուայ մէջ պատահած անցքերի մասին խօսելը վերջացնելուց յետոյ ասաց. շնորհակալ ենք քեզնից, երկնաւոր Հայր, որ այս շաբաթ մեր սիրելի ծնողների ծանր հոգսերը թեթևացրիր և մեր հօրը լաւ և ձեռնտու աշխատանք ցոյց տուիր։ Շնորհակալ ենք քեզնից, որ մեր իշխանաւորը հայրական գթով մեր պաշտպանն է և մեր սփոփանքը՝ ամէն թշուառութեան և կարիքի ժամանակ։ Շնորհակալ ենք մեր ողորմած կալուածատիրոջ բարութեան համար։ Եթէ Աստուած կամենայ՝ մեծանալուց յետոյ մենք հաւատարմութեամբ կծառայենք նրան։

Յետոյ Գերտրուդը Լիզայի կողմից ասաց. Ների՛ր, Աստուած, իմ հին վատ սովորութեան համար և սովորեցրու ինձ լեզուս սանձահարել, լռել՝ որտեղ չպէտք է խօսեմ և ինձ բան հարցնելիս՝ զգոյշ ու մտածելով պատասխանել։

Յետոյ նա խօսեց Նիկլասի կողմից. Աստուած, ապագայում պահպանիր ինձ իմ անզգոյշ վարմունքից ու սովորեցրու աւելի լաւ ուշադրութիւն դարձնել արածիս և շրջապատողներիս վրայ։

Ապա Աննելիի կողմից. ցաւում եմ, սիրելի Աստուած, որ իմ փոքրիկ եղբօրն այնպէս թեթևամտութեամբ մենակ թողի և այդպիսով իմ սիրելի մօրն երկիւղ պատճառեցի։ Կեանքումս այդպիսի բան էլ չեմ անի։

Եւ երբ մայրն այսպէս բոլոր մանուկների կողմից աղօթել տուեց, շարունակեց. Տէր, լսի՛ր մեզ, Հայր, ների՛ր մեզ,

Յիսուս ողորմիր մեզ։—Ապա Նիկլասն աղօթեց «Հայր մերը» և յետոյ Էննէն. Տէր, պահպանիր իմ սիրելի հօրը, մօրը, սիրելի եղբայրներիս ու քոյրերիս, նաև մեր ողորմած Արևհայմի կալուածատիրոջը և երկրիս վրայ գտնուած բոլոր բարի մարդկանցը։—Յետոյ աղօթեց Լիզէն. տայ Աստուած, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։—Վերջը Գերտրուդն ասաց. այժմ տէր ընդ ձեզ, Աստուած պահպանէ ձեզ, Տէր Աստուած թող բարի աչքով նայէ ձեզ։

Մի վայրկեան մայրն ու զաւակները նստած էին՝ պահպանելով այն լուրջ լռութիւնը, որ ներշնչում է ամենքին ճշմարիտ աղօթքը։

36.

ԿՐԿԻՆ ՄԱՅՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄՈՒՆՔ ԵՒ ԱՆԿԵՂԾ ԱՂՕԹՔ

Լիզէն ընդհատեց այդ լռութիւնը։ Այժմ ցոյց տուր մեզ նոր աբասիները, ասաց նա մօրը։

Այո՛, ցոյց կտամ, ասաց մայրը։ Սակայն Լիզէ, առաջին խօսողը միշտ դո՛ւ ես լինում։

Նիկլասը վեր է թռչում տեղից, առաջ մղւում Գրիտտելիի յետևից, որ լոյսից մօտիկ լինի՝ աբասիները տեսնելու համար և դիպչելով փոքրիկին՝ լացացնում է նրան։

Մայրն ասում է. Նիկլաս, լաւ չէս անում։ Հէնց մի քառորդ ժամ առաջ խոստացար աւելի հոգացողութեամբ վարուել և այժմ կրկին այդպէս ես անո՞ւմ։

Նիկլաս։ Ա՜խ, մայր, ցաւում եմ, երբէք էլ այդպէս չեմ անի։

Մայր։ Հէնց այժմ ասացիր այդ Տէր Աստծուն և կրկին արեցիր. ուրեմն լուրջ չես խօսում։

Նիկլաս։ Ա՜խ, մա՛յր, իհարկէ լուրջ եմ խօսում. ներիր ինձ։ Ճշմարիտ որ լուրջ եմ ասում և ցաւո՞ւմ արածիս վրայ։

Մայր։ Ես էլ լուրջ եմ ասում, սիրելիս. բայց այդ մասին դու չե՞ս մտածի, մինչև որ չպատժեմ քեզ։ Այսօր առանց բան ուտելու անկողին կմտնես։

Նա ասաց այդ, երեխային հեռացրեց միւսներից ու տարաւ իր սենեակը։ Նրա եղբայր ու քոյրերը տխուր կանգնած էին սենեակում. նրանք ցաւում էին, որ իրենց սիրե-

լի Նիկլասն ընթրիքից զրկուեց։ Ձեզ չի՞ կարելի սիրով և առանց պատժի բան հասկացնել, ասաց մայրը։

Այս անգամ ների՛ր նրան, ասացին մանուկները։

Ո՛չ, սիրելիներս, նա պէտք է սովորէ զգոյշ վարուել, պատասխանեց մայրը։

Եթէ այդպէս է, աբասիներն այժմ մի ցոյց տայ մեզ, այլ վաղը, որ նա էլ մեզ հետ տեսնէ, ասաց Էննէն։

Մայր։ Շա՞տ լաւ, Էննէ, այո՛, նա էլ պէտք է ձեզ հետ միասին տեսնէ։—Յետոյ նա մանուկներին տուեց իրենց ընթրիքը և տարաւ նրանց ննջարանը, ուր Նիկլասը դեռ լաց էր լինում։ Միւս անգամ զգուշացիր, սիրելի Նիկլաս, ասաց նրան մայրը։

Նիկլաս։ Ների՛ր ինձ, սի՛րելի մայր, ների՛ր և համբուրի՛ր ինձ. ես սիրով չեմ ընթրի։ Գերտրուդը համբուրեց իր Նիկլասին և ջերմ արցունք թափելով ասաց. ո՞վ Նիկլաս, Նիկլաս, զգոյշ եղի՛ր։—Նիկլասն երկու ձեռքով մոր պարանոցը շրջապատեց և ասաց. ո՞հ, մայր, ների՛ր ինձ։ Գերտրուդն օրհնեց իր զաւակներին և գնաց կրկին իր սենեակը։ Այժմ նա բոլորովին մենակ էր։ Սենեակն աղօտ կերպով լուսաւորում էր մի փոքրիկ լապտեր. նրա սիրտը հանգիստ էր. այդ խաղաղ լռութիւնը մի աղօթք էր, որ առանց խօսքերի և արտասանութեան շարժեց նրա հոգեկան աշխարհը։ Գերտրուդի զգայուն սիրտը գթաշարժուեց. նա ծունկ չոքեց և արտասուալի աչքերով սկսեց աղօթել։

Գեղեցի՛կ է մանկան արտօսրը, երբ գթաշարժուած իր հօր բարի գործերից, հեկեկալով յետ է նայում, այտերը ցամաքեցնում և հանգստանում՝ իր սրտի շնորհակալութիւնն արտայայտելուց առաջ։ Գեղեցի՛կ են Նիկլասի արտօսրները, որ թափում է այս ժամին, որովհետև իր բարի մօրը բարկացրեց, որին նա ա՜յնչափ սիրում է։ Գեղեցի՛կ են մարդուս այն բոլոր արտօսրները, որ թափւում են մանկական բարեսրտութեամբ։ Երկնքի Տէրը վերևից տեսնում է նրա շնորհակալութեան հեկեկանքը և աչքերի արցունքը, եթէ նա սիրելի է նրան։

Երկնաւոր Աստուածը տեսաւ Գերտրուդի արցունքը և լսեց նրա սրտի հեկեկանքը. նրա շնորհակալութեան զոհը մի հաճելի բուրմունք էր նրա համար։

Գերտրուդը լաց էր լինում երկար ժամանակ. նրա աչքերը դեռ թաց էին, երբ Լինհարդը տուն եկաւ։

Ինչո՞ւ ես լալիս, Գերտրուդ, աչքերդ կարմրել են և թաց. ինչո՞ւ ես լալիս այսօր, ասաց Լինհարդը։

Գերտրուդը պատասխանեց. սիրելիս, մի՛ վախենար, սրանք տխրութեան արտասուներ չեն։ Ես կամենում էի Աստծուց շնորհակալ լինել այս շաբաթուայ համար և սիրտս լցուեց. ծունկ չոքեցի, բայց չկարողացայ խօսել և լաց եղայ, սակայն ինձ այնպէս թուաց թէ կեանքումս այսպէս շնորհակալ չէի եղել Աստծուց։

Սիրելիս, պատասխանեց Լինհարդը, երանի՜ թէ ես էլ քեզ պէս կարողանայի այդպէս շուտով արտասուել. հէնց այժմ կկամենայի Աստծուց ու մարդկանցից շնորհակալ լինել, բայց երբէք չե՞մ կարող ծունկ չոքել և արտասուել։

Գերտրուդ։ Եթէ լուրջ կերպով մտադիր ես արդար ու ճշմարտութեամբ գործել, այն ժամանակ մնացեալ բոլորը համարեա՛ թէ նոյնն է։ Մէկն ունի թոյլ ձայն, միւսը զօրեղ, այդ նշանակութիւն չունի. գլխաւորն այն է՝ թէ ինչի՞ համար է գործածում այդ ձայնը։ Սիրելիս, լացն ու չոքելը նշանակութիւն չունեն, Աստծուց և մարդկանցից անկեղծութեամբ շնորհակալ լինելն է գլխաւորը։ Որ մի մարդ աւելի զգայուն է, իսկ միւսն աւելի պակաս, այդ նոյնչափ նշանակութիւն ունի, որչափ որ մի որթ ծանր, իսկ միւսը թեթև կերպով է փոշու մէջ առաջ սողում։ Եթէ դու լուրջ ես խօսում, կարժանանաս մեր ամենիս Հօր ներողամտութեանը։

Լինհարդն արտասուալի աչքով գլուխը խոնարհեցրեց նրա կրծքին. թախծութեամբ լի նրանք մի վայրկեան լուռ մնացին այդ դրութեան մէջ։ Վերջապէս Գերտրուդն ասաց. չե՞ս ուզում ընթրել։ Չեմ կարող, պատասխանեց նա, սիրտս լիքն է. այժմ ոչինչ չեմ կարող ճաշակել։ Ես էլ չե՞մ կարող, սիրելիս, պատասխանեց Գերտրուդը, բայց գիտե՞ս ինչ անենք. մեր ընթրիքը կտանեմ խեղճ Բուդիի համար, որի մայրն այսօր մեռաւ։

37.

ՄԻ ԱՄԱՆ ՈՍՊ ԱՂՔԱՏ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

Լինհարդ։ Վերջապէս ազատուեց նա իր թշուառութիւնից։

Գերտրուդ։ Այո՛, գոհութիւն Աստծոյ. երանի՜ թէ ներկայ լինէիր նրա վերջին բոպէներին. երևակայի՛ր՝ իր մահուան օրը նկատելով, որ Ռուդելին մեզնից գետնախնձոր է գողացել, հօրը և որդուն ուղարկեց ինձ մօտ ներողութիւն խնդրելու. նա առանձնապէս ներողութիւն էր խնդրում, որ չի կարող մեր գետնախնձորը վերադարձնել և բարի Ռուդին խոստացաւ, որ գողացուած գետնախնձորի փոխարէն քեզ անվարձ կծառայէ։ Կարող ես երևակայե՛լ, սի՛րելիս, թէ ինչ դրութեան մէջ կլինէի այդ բոպէին։ Իսկոյն վազեցի մեռնողի մօտ, սակայն չե՜մ կարող պատմել, անկարելի է արտասանել՝ թէ նա ի՜նչպիսի ցաւով և սրտագին տխրութեամբ մի անգամ էլ հարցրեց՝ թէ սրդեօք ներո՞ւ եմ իրեն և տեսնելով որ գթաշարժուեցայ, իր զաւակներին իմ հոգացողութեանը յանձնեց։ Անկարելի է պատմել և արտայայտել թէ ի՜նչպէս նա չէր համարձակւում ասել այդ բանը մինչև վերջին վայրկեանը և մահուան մերձենալը զգալուց յետոյ միայն համարձակուեց ասել. ի՜նչպէս խոնարհ ու սիրով էր վարւում իր որդու և թոռների հետ և հէնց այդ միջոցին յաւիտենական քնով ննջեց։

Լինհարդ։ Արի՛, միասին գնանք նրանց մօտ։

Գերտրուդ։ Այո՛, գնանք։

Մի բաժին ոսպ վերցնելով նրանք գնացին Ռուդիի մօտ։

Այդ միջոցին Ռուդին նստած էր ննջեցեալի անկողնի վրայ, լաց էր լինում ու հառաչում. իսկ փոքրիկն իր սենեակից կանչում էր հօրը և հաց խնդրում—ի՜նչ եմ ասում, ո՞չ թէ հաց, այլ միայն խակ արմտիք, կամ մի որև է բան։ Ա՜խ, ոչի՜նչ չունեմ, բոլորովին ոչինչ, ի սէր Աստծո՛յ, գոնէ մինչև վաղը լուիր. ոչի՜նչ չունեմ, ասում էր հայրը. բայց երեխան շարունակում էր՝ քաղցած եմ, հա՛յր, չե՜մ կարողանում քնել։

Հէնց վերջին խօսքերն արտասանելիս ներս մտան Լինհարդն ու Գերտրուդը և կերակուրը դնելով քաղցած երեխայի առաջը, ասացին. շուտ կեր, քանի չէ՛ սառել։

Ռուդի։ Աստուած իմ, Ռուդելի, սրանց գետնախնձորն էր, որ գողացար և ինձ էլ ուտեցրիր։

Գերտրուդ։ Լռի՛ր այդ մասին, Ռուդի։

Ռուդի։ Ես չե՜մ համարձակւում ձեր երեսին նայել,

պիրտս ցաւում է, որ այդ բանն արինք։

Լինհարդ։ Կե՛ր այժմ, Բո՛ւդի։

Բուդելի։ Կե՛ր այժմ, հայր, դեռ ուտե՛նք, հայր։

Բուդի։ Ուրեմն աղօթի՛ր։

Բուդելի։ Աստուած, կերակրիր և սփոփի՛ր երկրիս բոլոր աղքատ մանուկներին. ամէն։

Այդպէս աղօթելուց յետոյ՝ երեխան վերցնում է գըդալը և դողալով ու լալով ուտում։

Փոխարէնն Աստուած վարձատրէ ձեզ, ասաց հայրը, և սկսեց նոյնպէս ուտել։ Խեղճ Բուդիի արցունքներն այտերից ցած գլորուելով՝ ընկնում էին կերակրի մէջ։

Նրանք բոլոր կերակուրը չկերան, այլ մի մասն էլ պահեցին քնած երեխաների համար. յետոյ Բուդելին աղօթեց. ով կերաւ, պէտք է շնորհակալ լինի Աստծուց, ով մեզ կերակրեց՝ նա նոյնպէս։ Շնորհակալութիւն, գոհութիւն և փառք նրան՝ այժմ, միշտ և յաւիտեանս. ամէն։

Երբ Բուդին կրկին շնորհակալութիւն էր յայտնում, ծանր հառաչանք դուրս թռաւ նրա սրտի խորքից։

38.

ԲԱՐԵԳՈՐԾ ՍՐՏԻ ԽԱՂԱՂ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՎԵՀՈՒԹԻՒՆԸ

Եթէ մի որև է կարիք ունես, Բո՛ւդի և կարծում ես թէ կարող ենք օգնել քեզ, ասա՛, դիմեցին նրան Լինհարդն ու Գերտրուդը միասին։

Ո՛չ, այժմ ո՛չ մի կարիք չունեմ, շնորհակալ եմ ձեզնից, պատասխանեց Բուդին։ Բայց ուժով զսպեց իր սրտի խորին հառաչանքը, որ կրկին պէտք է դուրս թռչէր նրա կրծքից։

Տխուր և ցաւակցութեամբ նայեցին նրան Լինհարդն ու Գերտրուդը և ասացին. դու հառաչում ես և երևում է, որ մի բան ճնշում է սիրտդ։

Ասա՛, հայր, դրանք այնպէս բարի՞ են, որ կօգնեն մեզ, խնդրում է փոքրիկը։

Ասա՛, եթէ կարող ենք օգնել՝ կանենք, խնդրում են Լինհարդն ու Գերտրուդը։

Ա՜խ, ի՞նչպէս համարձակուեմ, պատասխանում է խեղճը, վաղը պէտք է մօրս դագաղի յետևից գերեզմանատուն գնամ, միւս օրը դղեակ, բայց գուլպայ և կօշիկ չունեմ։

Լինհարդ։ Այդ բանի համար էլ ինչո՞ւ ես այդպես նեղանում, ինչո՞ւ ուղղակի չես ասում։ Ես կարող եմ քեզ մի զույգ գուլպայ և կոշիկ տալ։

Ռուդի։ Կտաս, ա՜խ, Աստուած իմ, մի՞թէ դարձեալ հաւատում ես, որ ես շնորհակալութեամբ և անվնաս կըրկին յետ կդարձնեմ։

Լինհարդ։ Լռի՛ր այդ մասին, Ռուդի. ես քեզ հաւատում եմ. թշուառութիւնից ու կարիքից նեղուած՝ երկչոտ ես դարձել։

Գերտրուդ։ Այո՛, Ռուդի, հաւատա՛ Աստծուն և մարդկանց. այդպիսով սիրտդ կթեթևանայ և աւելի ծանր հանգամանքներում ինքդ կարող ես քեզ օգնել։

Ռուդի։ Այո՛, Գերտրուդ, ես պէտք է աւելի մեծ հաւատ ունենայի դէպ Աստուած. իսկ ձեզ շնորհակալութիւն յայտնելու համար խօսքեր չեմ գտնում։

Լինհարդ։ Այդ մասին մի՛ խօսի, Ռուդի։

Գերտրուդ։ Ես ուզում եմ մէկ էլ տեսնել հանգուցեալ մօրդ դէմքը։

Գերտրուդը, Լինհարդը, Ռուդին և փոքրիկը, մի աղօտ լապտեր վերցնելով՝ գնում են դէպի ննջեցեալի անկողինը։ Ամենքն արտասուալի աչքերով, խորին ու խաղաղ լռութեամբ մի վայրկեան նայում են դիակին և ապա կրկին ծածկում և համարեա՝ առանց մի խօսք ասելու՝ հրաժեշտ են տալիս միմեանց։ Տուն գնալիս Լինհարդն ասում է Գերտրուդին. ի՜նչ թշուառ դրութիւն. սիրտս ցաւում է։ Խեղճը մինչև անգամ եկեղեցի չէ կարող գնալ, չէ՛ կարող աշխատանք խնդրել և դրա համար շնորհակալութիւն յայտնել, որովհետև ոչ զգեստ և ոչ էլ կոշիկ ու գուլպայ ունի։

Գերտրուդ։ Եթէ այդ մարդն իր թշուառութեան պատճառն ինքը լինէր, անկասկած կյուսահատուէր։

Լինհարդ։ Այո՛, Գերտրուդ, հարկաւ պէտք է յուսահատուէր. եթէ ես լսէի զաւակներիս «հա՜ց եմ ուզում», «քաղցած եմ» աղաղակը, ոչինչ չունենայի նրանցը տալու և միևնոյն ժամանակ յանցաւոր լինէի՝ անպատճառ կյուսահատուէի. մի՞թէ ես էլ այդ թշուառութեան ճանապարհի վրայ չէի՞։

Գերտրուդ։ Այո՛, մենք մե՜ծ վտանգից ազատուեցանք։

Այսպէս խօսակցելով՝ երբ նրանք անցան գինետան մոտից, հարբածների անորոշ աղաղակներ հնչեցին նրանց ականջներում։ Լինհարդի սիրտն արդէն հեռուից սկսեց բաբախել, բայց երբ մոտեցան՝ նա մի սոսկումն և զզուանք զգաց։ Գերտրուդը ցաւելով ու մեղմութեամբ նայեց Լինհարդին. իսկ Լինհարդն ամօթով մտիկ տուեց Գերտրուդին և ասաց. Ո՜հ, ի՜նչքան սիրուն է անցնում երեկոն, երբ քեզ մոտ եմ լինում. եթէ այժմ ես էլ այստեղ լինէ՞ի.....։

Գերտրուդի տխրութիւնը փոխուեց արտասուքի և նա իր աչքերը դէպ երկինք բարձրացրեց. Լինհարդի աչքերն էլ լցուեցան արցունքով և դէմքը տխրութեամբ ծածկուեց, երբ նայեց իր սիրելի Գերտրուդին։ Նա նոյնպէս բարձրացրեց իր աչքերը դէպ երկինք և այդպէս մի վայրկեան երկուսն էլ միասին վերև էին նայում. նրանք բերկրալի արցունքներով տեսան վերևում պայծառ փայլող լուսինը և իրենց հոգեկան հանգստութիւնն ապահովացրեց նրանց, որ երկնաւոր Աստուածը սիրով է ընդունում նրանց սրտի անկեղծ և անմեղ զգացմունքները։

Երբ նրանք տուն հասան, Գերտրուդն անմիջապէս կոշիկ և գուլպայ որոնեց Ռուդիի համար և նոյն իսկ գիշերը Լինհարդը տարաւ և տուեց նրան։ Երբ Լինհարդը վերադարձաւ, երկու ամուսիններն էլ սրտանց աղօթեցին և քնեցին Աստուածահաճոյ մտածմունքներով։

Առաւօտը նրանք վաղ զարթեցին, կարդացին Փրկչի չարչարանաց պատմութիւնը և սուրբ հաղորդութեան հաստատութիւնը. փառաբանեցին Աստծուն արևի ծագումից առաջ։ Յետոյ արթնացրին մանուկներին, սպասեցին մինչև նրանց առաւօտեան աղօթքի վերջանալն ու գնացին եկեղեցի։

Զանգահարելուց մի քառորդ ժամ առաջ, տանուտէրը նոյնպէս վերկացաւ։ Նա չէր կարողանում զգեստների պահարանի բանալին գտնել, սկսեց անիծել ու հայհոյել, կոշկով կոտրեց պահարանը, հագնուեց, գնաց եկեղեցի և նստեց առաջին աթոռի վրայ, գլխարկը դրեց բերնին, աչքերով դիտեց եկեղեցու բոլոր անկիւնները և աղօթեց գլխարկի տակ։ Շուտով եկաւ և քահանան. համայնքը միաձայն երգեց չարչարանաց երգի երկու տունը։ Յետոյ քահանան բեմ բարձրացաւ և քարոզեց իր համայնքին հետևեալը.

39.

ՔԱՐՈԶ

Սիրելի՛ ժողովուրդ.

Ով Տիրոջից երկիւղ ունի և ապրում է երկիւղած ու ճշմարտասէր մտքով, նա ապրում է լուսոյ մէջ. իսկ նա՝ ով իր արարքների ժամանակ մոռանում է Տէր Աստծուն, ապրում է խաւարի մէջ. մի՛ թոյլ տաք, որ ձեզ մոլորեցնեն. միմիայն ձեր երկնաւոր Հայրն է ամենաբարին։ Ինչո՞ւ էք պտտում մոլորութեան մէջ և խարխափում խաւարում։ Միայն Աստուած է ձեր Հայրը։ Զգուշացէ՛ք այն մարդկանցից, որոնք ձեզ այնպիսի բաներ են ուսուցանում, որ անախորժ են ձեր Հօրը։ Երանի՜ այն մարդուն, որի Հայրն Աստուած է։ Երանի՜ այն մարդուն, որ երկիւղ է կրում չարից և ատում է վատը, որովհետև չարիք անողը բաղդաւոր չէ և վատութիւն անողը խճճւում է իր վատ գործի մէջ։ Բաղդաւոր չեն նրանք, որոնք ճնշում և նեղացնում են իրենց մերձաւորներին. ո՛չ, բաղդաւոր չէ այն մարդը, որի դէմ աղքատն առ Աստուած է բողոքում։ Վա՜յ այն թշուառականին, որ ձմեռը կերակրում է աղքատներին, իսկ հնձի ժամանակ կրկնակի է առնում նրանից։ Վա՜յ այն անաստուած մարդուն, որ ամառն ուժով աղքատին գինի է տալիս, իսկ աշնանը երկու անգամ աւելի է պահանջում նրանից։ Վա՜յ այն մարդուն, որ աղքատից խլելով դարմանն ու խոտը, զրկում է նրան իր արտը մշակելու կարողութիւնից։ Վա՜յ նրան, ում խստասրտութեան պատճառով աղքատի զաւակները հացի պակասութիւն ունեն։ Վա՜յ այն անաստուած մարդուն, որ աղքատներին դրամ է փոխ տալիս միայն այն մտքով, որ իր ստրուկները դառնան, իր հրամանները կատարեն, առանց վարձատրութեան աշխատեն և միևնոյն ժամանակ կրկնակի տոկոս վճարեն։ Վա՜յ նրանց, որոնք դատաստանի առաջ այդպիսի մարդու կողմը կբռնեն, սուտ վկայութիւն կտան, սուտ կերդուեն՝ նրան արդարացնելու համար։ Վա՜յ նրան, ով նենգաւորներին իր տուն է ժողովում և դրանց հետ միասին անմեղին լըտեսում, որ նրան էլ մոլորեցնեն, որ նա էլ իրենց նմանը դառնայ, իր Աստծուն, ամուսնուն, զաւակներին մոռանայ և իրենց հետ փը-

չացնէ իր աշխատանքի վաստակը, որի յուսով են ապրում մայրն ու զաւակները։ Վա՜յ նոյնպէս այն թշուառականին, որ խաբւում և մոլորւում է անաստուածների խօսքերից և անմտութեամբ ծախսում է այն փողը, որ անհրաժեշտ է իր ընտանիքի համար։ Վա՜յ նրան, ում ամուսինը հառաչանքով բողոքում է առ Աստուած և ծծկեր մանկանը կերակրելու կաթ չունի։ Վա՜յ նրան, ում արբեցողութեան պատճառով ծծկեր մանուկը կանխահաս մահ է գտնում։ Վա՜յ նրան, ում կինը լալիս է՝ իր զաւակների համար հաց չգտնելով։ Վա՜յ այն թշուառականին, որ իր որդոց ուսման վարձը խաղի մէջ է տանուլ տալիս. երբ նա ծերանայ, որդիքը կասեն նրան. դու մեր հայրը չէիր, դու մեզ աշխատել չսովորեցրիր. ինչո՞վ կարող ենք քեզ օգնել։ Վա՜յ նրանց, որոնք սըտերով են պարապում և ծուռն՝ ուղիղ, ուղիղը ծուռ դարձնում։ Վա՜յ ձեզ, եթէ արժէքից պակաս գնով էք առել որբևայրու վարելահողերն ու որբի տունը—վա՜յ ձեզ, որովհետև որբևայրու և որբի Հայրը ձեր Տէրն է, իսկ աղքատները, որբևայրիներն ու որբերը Նրա սիրելիներն են,—դուք զզուելի էք, եթէ չար և խիստ էք աղքատների հետ։ Վա՜յ ձեզ, եթէ ձեր տունը լիքն է ուրիշին պատկանած իրերով։ Վա՜յ ձեզ, եթէ աղաղակէք այն գինին խմելիս, որի խաղողը հասունացել է աղքատի վազի վրայ, եթէ ծիծաղէք, երբ թշուառ, քաղցած մարդիկ իրենց ցորենը հառաչանքով ձեր պարկերն են լցնում, եթէ ծաղրէք և կատակ անէք, երբ ձեզնից ճնշուածը սողունի նման սողում է ձեր առաջը և ձեր յափշտակածի տասերորդ մասը կրկին ձեզնից երբևէ պարտք է ուզում. եթէ դուք այս ամենի դէմ խստասիրտ և անգութ կերպով կվերաբերուէք, մի ժամ էլ բաղդաւոր չէք լինի։ Ո՛չ, այն մարդն երջանիկ չէ՛ կարող լինել Աստծոյ ստեղծած աշխարհում, որ տղրուկի նման ծծում է աղքատի վաստակը։ Այդպիսի մարդն ո՞վ կուզէ լինի, միևնոյն է. եթէ նա նոյն իսկ երկրիս վրայ եղած բոլոր վտանգներից, պատասխանատուութիւնից և պատժից ազատ լինի, եթէ մինչև անգամ երկրի դատաւորը լինի և թշուառներին իր ձեռքով բանտարկէ և իր բերանով մեղադրէ. եթէ կարող լինի նոյն իսկ նրա կեանքի և մահուան վճիռը տալ ու գլխատման դատապարտել— նա դատապարտուածնե-

րից աւելի վատը կլինի։ Ով աղքատին ճնշում է մեծամբ-
ութեամբ, թշուառ մարդկանց համար որոգայթ է լարում
և որբևայրիների տները քանդում, նա աւելի վատ է քան
գողն ու մարդասպանը, որոնց վարձատրութիւնը մահն է։
Այդպիսի մարդու սիրտը մի ժամ անգամ երջանիկ չէ։ Նա
շրջում է Աստծոյ ստեղծած աշխարհում եղբայրասպանու-
թեան անէծքով ծանրաբեռնուած, որ նրա սրտին հանգստու-
թիւն չէ տալիս. նա թափառում և միշտ ցանկանում է իր
ներքին երկիւղը նոյն իսկ իրենից թագցնելու։ Նա կամենում
է իրեն համար բեռը դարձած ժամանակն անցկացնել
հարբելով, չարութեամբ, շռայլութեամբ, վէճով ու կռուով,
ստութեամբ և խաբէութեամբ, կեղտոտութեամբ և կատա-
կով, հայհոյեանքով, բամբասելով և ուրիշներին գրգռելով։
Բայց նա չէ կարող միշտ իր խղճի ձայնը խեղդել, նա չէ
կարող Տիրոջ սարսափից միշտ խուսափել, խղճի ձայնը զի-
նուած մարդու նման կյարձակուի դրա վրայ և դուք կը
տեսնէք, որ նա դողում է, կուչ է գալիս մահուան պատժի
սպասող բանտարկեալի նման։

Սակայն երանի՜ այն մարդուն, որ մասնակից չէ դրա
գործերին. երանի՜ այն մարդուն, որ պատճառ չէ եղել իր
նման մարդկանցից մէկի աղքատութեան։ Երանի՜ այն մար-
դուն, որ աղքատի աշխատանքը չէ կորզել նրա ձեռքից։
Երանի՜ ձեզ, եթէ ձեր բերանն անարատ է և ձեր աչքերն
աղատ՝ չար հայեացքից։ Երանի՜ ձեզ, եթէ աղքատն օրհնում է
ձեզ և եթէ որբևայրիներն ու որբերը ձեզ համար շնորհա-
կալութեան արցունք են թափում Աստծոյ առաջ։ Երանի՜
այն մարդուն, որ սիրում է իր Տէր Աստծուն և իր աղգը։
Երանի՜ ձեզ, բարեպաշտնե՛ր, եկէք, ուրախացէ՛ք և ճաշա-
կեցէք Տիրոջ սէրը՝ հաղորդութեամբ։ Տէրը, ձեր Աստուա-
ծը, ձեր Հայրն է։ Նրա սիրոյ գրաւականները կզօրացնեն
ձեզ և ձեր սէրը դէպի Աստուած, դէպի մարդիկ և դէպի
ձեր եղբայրները՝ կաճէ և կուժեղանայ։

Իսկ դո՛ւք, որ սէր չունէք և գործի ժամանակ աչքի
առաջ չունէք, որ Աստուած ձեր Հայրն է, որ ձեր եղբայ-
րակից մարդիկն Աստծոյ զաւակներն են և որ աղքատն էլ
ձեր եղբայրն է—դո՛ւք, անաստուածնե՛ր, ի՞նչ գործ ունէք
այստեղ։ Գո՛ւք, որ երէկուայ պէս վաղն էլ կրկին պէտք է

ճնշէք աղքատին, ինչ գործ ունէք այստեղ։ Դուք էլ կամենում էք Աստծոյ մարմինը ճաշակել, արիւնն ըմպել և ասել, որ ձեր եղբայրների հետ մի մարմին, մի սիրտ ու մի հոգի էք. հեռացէք այստեղից և մի՛ ճաշակէք սիրոյ հաղորդութիւնը։ Ցե՛տ կանգնեցէք, որ աղքատը հաղորդութիւն առնելիս՝ ձեր երեսին չնայէ և չգունատուի. թողէք, գոնէ այդ ժամին չմտածէ, որ վաղը դուք նրան պիտի խեղտէք։ Թողէք. մի՛ խնայէք նրան այդ խաղաղութեան ժամը. թող նա հանգստութիւն ունենայ ձեզնից և ձեզ չտեսնէ, որովհետև աղքատը դողում և որբի սիրտը բաբախում է ձեր առաջ։ Բայց ինչո՞ւ եմ խօսում ձեզ հետ, զուր խօսքեր շռայլում։ Դուք չէ՛ք կարող հեռանալ այնտեղից, ուր կարող էք մարդկանցը ցաւ պատճառել։ Ուր որ նրանցը դողալով և երկիւղով լի էք տեսնում, այնտեղ դուք լա՛ւ էք զգում ձեզ և կարծում էք, որ ոչ ոք ձեզ պէս հանգիստ սի՛րտ չունի։ Սակայն սխալւում էք. տեսէ՛ք, ես երեսս դարձնում եմ ձեզնից և ենթադրում, որ դուք այստեղ չէք։ Դուք էլ, համայնքիս աղքատնե՛ր և ճնշուածնե՛ր, դարձրէ՛ք երեսներդ դրանցից, որպէս թէ չէ՛ք տեսնում դրանցը, որպէս թէ այստեղ չեն։ Տէ՛ր է այստեղ, որի վրայ էք դրել դուք ձեր յոյսը. Տէ՛ր այստեղ է։ Հաւատացէ՛ք նրան և յոյսներդ նրա վրայ դրէ՛ք. ձեր չարչարանքի ու նեղութեան պտուղը ձեզ համար օրհնութիւն կդառնայ։ Հաւատացէ՛ք Տիրոջը, ձեր Աստծուն և մի՛ վախենաք անաստուածներից, բայց զգուշացէ՛ք նրանցից. համբերեցէ՛ք, սիրելիներս, աւելի լաւ է կարիք զգաք, վնասուէ՛ք՝ քան թէ օգնութիւն խնդրէք անսիրտներից. որովհետև կոշտ մարդու խօսքերը ստախօսութիւն են և նրա օգնութիւնը մի գրաւիչ միջոց, որով բռնում է աղքատին՝ նրան սպանելու համար։ Փախէ՛ք այն անաստուած մարդուց, երբ ծիծաղելով ողջունում է ձեզ, երբ իր ձեռքը դէպի ձեզ է մեկնում և ձեր ձեռքը սեղմում։ Երբ նա առաջարկում է ձեզ իր օգնութիւնը, փախէ՛ք, որովհետև անաստուածը թակարդի մէջ է ձգում աղքատին։ Փախէ՛ք նրանից ու մի՛ կապուէք նրա հետ, բայց մի՛ վախենաք, երբ կաղնու նման հաստատ կանգնած էք տեսնում նրան. մի՛ վախենաք նրանից։

Գնացէ՛ք, սիրելիներս, ձեր անտառը և տեսէ՛ք՝ ուր մի

անգամ հին կաղնիներն էին բարձր կանգնած, այժմ տեսէք թէ ինչպէս են դրանց ստուերի տակ աճող փոքրիկ ծառերը մեծացել, կանաչել ու ծաղկել։ Արևն այժմ կրկին լուսաւորում է այդ մատաղ ծառերը և երկնքի ցողունն իր փարթամութեամբ ընկնում է դրանց վրայ, իսկ կաղնու մեծ և լայն արմատները, որ ծծում էին երկրի ամբողջ սնունդը, այժմ փթում են և կաղնու ստուերի տակ աճող մատաղ ծառերին սնունդ տալի։ Այդ պատճառով յոյսներդ Տիրոջ վրայ դրէք, որովհետև նրա օգնութիւնից երբէք չեն զրկուում նրանք, որոնք իրենց յոյսը նրա վրայ են դրել։ Տիրոջ դատաստանը վրայ կհասնի անաստուածների համար և այն օրը նրանք տեսնելով ճնշուածներին և թշուառներին, կողբան ու կասեն. երանի՜ ես սրանցից մէկի նմանը լինէի։ Հաւատացէք Տիրոջը, ճնշուածնե՛ր և ուրախացէք, որ ճանաչում էք այն Տիրոջը, որ սահմանեց սիրոյ հաղորդութիւնը, որովհետև դուք միայն այդ սիրոյ շնորհիւ էք տանում երկրիս չարչարանքը. ձեր բեռան տակ են աճում ձեր ուժերը։ Ուրեմն ուրախացէք, որ ճանաչում էք սիրոյ Տիրոջը, որովհետև առանց սիրոյ դուք կյաղթուէք և կնմանուէք այն անաստուածներին, որ ձեզ չարչարում և խաբում են։ Փառաբանեցէք սիրոյ Տիրոջը, որ հաստատեց սուրբ հաղորդութիւնը և միլիոնաւոր մարդկանց թուում ձեզ էլ հրաւերել է այսօր սուրբ խորհուրդը ճաշակելու։ Փառաբանեցէք Աստծուն։ Սիրոյ յայտնագործութիւնը աշխարհիս փրկութիւնն է։ Սէրն այն կապն է, որ կապակցում է աշխարհս, սէրն այն կապն է, որ Աստծուն կապում է մարդկանց հետ։ Առանց սիրոյ՝ մարդ Աստուած չունի, իսկ առանց սիրոյ և Աստծոյ ի՞նչ է մարդս։ Կարո՞ղ էք ասել, կարո՞ղ էք արտայայտել, կարո՞ղ էք մտածել՝ թէ ի՞նչ է մարդս առանց սիրոյ և Աստծոյ։ Ես չեմ կարող այդ ասել. չեմ կարող արտայայտել։ Ուրախացէք, որ ճանաչում էք սիրոյ Աստծուն, որ աշխարհիս մարդկանցը դէպի սէրն է հրաւիրել, խաւարից դէպի լոյս ու մահուանից դէպի յաւիտենական կեանք։ Ուրախացէք, որ ճանաչում էք Տիրոջը և աղօթեցէք նրան չճանաչողների համար, որ նրանք էլ ըմբռնեն ճշմարտութեան ճանաչողութիւնը և զգան ձեր ուրախութիւնը։

Զաւակնե՛րս, յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք. ամէն։

Երբ քահանան այս համարեա մի ժամ տևող քարոզը վերջացրեց, ամբողջ համայնքն աղօթեց և ճաշակուեց։

Սուրբ հաղորդութիւնից յետոյ ժողովուրդը մի երգ էլ նուագեց, քահանան օրհնեց ամենքին և համայնքը ցրուեց։

40.

ԱՊԱՑՈՑՑ ՈՐ ԳԲԱՐՈՉԸ ԼԱՒ ԷՐ. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ՝ ԱՂԲԱՏԻՆ ՃՆՇԵԼ։

Տանուտէր Հումէն իր սրտումը բարկացաւ քահանայի վրայ՝ թէ ինչո՞ւ խօսեց անաստուածների մասին. այդ օրն ամբողջ համայնքը խաղաղ սրտով տօնեց. միայն տանուտէրն էր կատաղում, հայհոյում և սարսափելի բաներ ասում քահանայի մասին։ Հաղորդութեան սուրբ սեղանից հեռանալուց անմիջապէս յետոյ՝նա մարդ ուղարկեց իր անաստուած ընկերների մօտ, որ շտապով գան։ Սրանք շուտով եկան և սկսեցին թեթեւամիտ ու յանցաւոր բաներ խօսել քահանայի և այսօրուայ քարոզի մասին։

Ամենից առաջ սկսեց տանուտէրն ու ասաց. ես չեմ կարող տանել այդ անիծուած հայհոյեանքն և խայթոցը։

Նրա վարմունքն իրաւացի չէ, յանցանք է, նա մանաւանդ այսպիսի մի սուրբ օր, ասաց Էբին։

Տանուտէր։ Զարամիտ քահանան գիտէ, որ այդ անտանելի է ինձ համար, բայց և այնպէս անում է. ինչպէս երևում է՝ նրա համար մի զուարճութիւն է մարդկանց բարկացնելն ու կատաղեցնելը. նա յեղաշրջում է այն ամենը, ինչ որ ինքը չէ հասկանում և իրեն չէ վերաբերում։

Էբի։ Փրկիչը, աւետարանիչները և նոր կտակարանի առաքեալները ոչոքի չեն հայհոյել։

Քրիստէն։ Ի՞նչ ես ասում, նրանք քահանայից աւելի լաւ են հայհոյել։

Էբի։ Ասածդ ճշմարիտ չէ, Քրիստէն։

Քրիստէն։ Գի՛ժ ես, ինչ է, Էբի. չե՞ս յիշում աւետարանի խօսքերը. կո՛յր առաջնորդներ, օձե՛ր, իժի՛ ծնունդներ և այսպիսի հազար բաներ. ի՞նչ լաւ ես հասկանում սուրբ գիրքը, Էբի։

Գիւղացիներ։ Այո՛, Էբի, ճշմարիտ է, նրանք էլ են հայհոյել։

Քրիստէն։ Այո՛, բայց նրանք իրենց չհասկացած գործերի և դրստուած, կարգի բերուած հաշիւների համար չեն պատժել ուրիշներին. բացի դրանից նրանք ուրիշ մարդիկ էին և կարող էին անել։

Գիւղացիներ։ Հասկանալի է, նրանք ուրիշ մարդիկ էին։

Քրիստէն։ Այո՛, նրանք ուրիշ մարդիկ պէտք է լինէին, եթէ ոչ չէին համարձակուի։ Մտածեցէք թէ նրանք ի՞նչ արեցին Աննային — այո՛, Աննա էր կոչւում նա — և ապա նրա կնոջը։ Որովհետև միայն մի սուտ ասացին, գետին ընկան և մեռան։

Գիւղացիներ։ Միթէ՞ այդ ճշմարիտ է. մի ստի համա՞ր։

Քրիստէն։ Այո՛, ինչպէս որ ես կենդանի կանգնած եմ ձեր առաջը, այնպէս էլ ասածս է ճիշտ։

Էբի։ Ի՞նչ լաւ բան է, երբ մարդ հասկանում է սուրբ գիրքը։

Քրիստէն։ Դրա համար ես շնորհակալ եմ հանգուցեալ հօրից։ Նա թէև մի առանձին հմտութիւններ ունեցող մարդ չէր, — նա մեր մայրական կալուածքը վատնեց մինչև վերջին կոպէկը. այդ զրկանքը ես կտանէի, եթէ նա այնպէս սերտ յարաբերութիւն չունենար կախաղանի դատապարտուած Ուլիի հետ. այդպիսի բանն որդուց որդի չէ մոռացուում. — սակայն սուրբ գիրքը քահանայի նման էր կարդում և բոլորիցս էլ նոյնն էր պահանջում։

Էբի։ Ես հազար անգամ զարմացել եմ, թէ նա այդքան բան հասկանալով՝ ինչո՞ւ այնպիսի անպիտան մարդ էր։

Գիւղացիներ։ Այո՛, այդ շա՞տ զարմանալի է։

Ծօստ։ (Գինետանն եղող մի օտարական)։ Ձեմ կարող ծիծաղս պահել, բարեկամներ, որ դուք զարմանում էք այդ բանի վրայ. եթէ շատ բան իմանալը մարդկանց լաւացնէր, այն ժամանակ ձեր փաստաբանները, դատաւորները և տանուտէրներն ամենալաւ մարդիկը պէտք է լինէին։

Գիւղացիներ։ Այո՛, այդպէս է, բարեկամ, այդպէս է։

Ծօստ։ Հաւատացէք միայն, բարեկամներ, որ իմանալու և գործելու մէջ երկնքի ու երկրի հեռաւորութեան չափ զանազանութիւն կայ։ Ով միայն իր իմացածն է արհեստ

շինում, նա ճշմարիտ որ շատ զգոյշ պէտք է լինի, որ գործելը չմոռանայ։

Գիւղացիներ։ Այո՛, բարեկամներ, այդպէս է, մարդ ինչ որ չէ անում, մոռանում է։

Ծօստ։ Բնականապէս. եթէ մէկը միայն անգործութեամբ է պարապում, նա ոչնչի պէտք չէ գալիս և այդպէս է լինում, երբ մարդիկ պարապութիւնից և ձանձրութիւնից աւելորդ հարցերով ու խօսակցութեամբ են զբաղւում։ Զգուշացէք, այն տղաներից շատերը, որ միշտ օրացոյցի և սուրբ գրքի պատմութիւնից են խօսում, հին և նոր պատուիրաններն առաջ բերում, ցերեկուայ գողեր են։ Եթէ դրանց հետ խօսենք տնարարութեան, մանուկների կրթութեան, աշխատանքի և արդիւնքի մասին, եթէ դրանցից խորհուրդ հարցնենք՝ թէ այս կամ այն կարիքին ի՞նչպէս պէտք է օգնել, այն ժամանակ դրանք մնում են յիմարի պէս կանգնած, ոչինչ չգիտեն և ոչինչ չեն կարող անել։ Միայն գինետներում, պարի դահլիճներում, կիրակնօրեայ և տօն օրերի զբուցատրութիւնների ժամանակ են կամենում դրանք իրենց շնորհքը ցոյց տալ։ Նրանք ա՛յնպիսի յիմարութիւններ և պատմութիւններ են առաջ բերում, որոնց ոչ սկիզբն է ճշմարիտ, ոչ վերջը. բայց և այնպէս այդ մի սովորական բան է դարձել և սենեակներում լցուած գիւղացիները ժամերով լսում են այդպիսի մեծախօսի հետզհետէ հնարած ստերը։

Էլի։ Հոգիս վկայ, որ մեր բարեկամը ճիշտ է ասում, Քրիստէն, նա քո հօրը մանրամասն նկարագրեց։ Ճիշտ այդպէս էր նա. փայտին ու դաշտին, տաւարին ու խոտին, կալսելուն և վարելուն վերաբերեալ գործերում նա տաւարի պէս յիմար էր. և ամեն բան ոչխարի նման դանդաղ էր սկսում։ Բայց գինետանը և համայնքի ժողովուելու և զուարճանալու տեղերում նա արևելեան իմաստունի պէս խօսում էր, մէկ դօկտօր Ֆաուստից, մէկ Քրիստոսից, մէկ Էնդօրի կամ Հիրցաու վհուկից, մէկ Մադրիդի ցուլակռուից, մէկ Լօնդօնի ձիարշաւից։ Եւ որչափ չափազանց և յիմար կերպով էր այդ ամենն անում և ակնյայտնի ստում, այնչափ աւելի սիրով էին լսում նրան, մինչև որ վերջը նա համարեա՝ թէ կախուեց։ Այն ժամանակ նրա պատմութիւնների արժէքն ընկաւ։

Ծօստ։ Այդ արդէն ուշ կլինէր։

Էքի։ Այո՛, մենք երկա՛ր ժամանակ յիմար էինք և նրա ստերի փոխարէն՝ վճարում էինք նրա խմած գինու փողը։

Շուստ։ Կարծեմ նրա համար աւելի լաւ կլինէր, եթէ չվճարէիք։

Էքի։ Աստուած է վկայ, ես էլ կարծում եմ, որ եթէ չվճարէինք, նա կախաղան չէր բարձրանայ, որովհետև ստիպուած կլինէր աշխատելու։

Շուստ։ Այդպիսով ձեր բարեսրտութիւնը նրան վնասեց։

Գիւղացիներ։ Այո՛, Աստուած է վկայ, ճիշտ է։

Շուստ։ Անիծուած, մոլորեցնող և մինչև անգամ անբարոյական բան է՝ դատարկ պատմութիւնների մէջ սուրբ գրքի անունը մտցնել։

Լեոյպի։ Հայրս մի անգամ ինձ լա՛ւ ծեծեց, որովհետև զբաղուելով մի պատմութեամբ—կարծեմ այն էլ սուրբ գրքից էր—մոռացել էի տաւարն արօտատեղից տուն բերել։

Շուստ։ Նա իրաւունք ունէր. մեր պարտքն է անել այն, ինչ որ գրած է սուրբ գրքում, իսկ դրանց մասին պատմելը քահանայի գործն է։ Սուրբ գիրքը մի պատուէր ու հրաման է. ի՞նչ կասէ քեզ հրամանատարը, երբ հրաման ուղարկէ գիւղը, թէ պէտք է բեռնած սայլեր տանել ամրոցը, իսկ դու փոխանակ անտառը գնալու և բարձելու, նստես գինետանը, հրամանը ձեռքդ առնես, կարդաս և մի բաժակ գինու մօտ մինչև մութը նստած՝ բացատրես դրացիներիդ թէ ի՞նչ է ապացուցանում և կամենում այդ հրամանը։

Էքի։ Ի՞նչ պէտք է ասէ, կխայտառակէ, կծաղրէ և բանտարկել կտայ ինձ, որ նրան յիմարի տեղ եմ դրել։

Շուստ։ Հէնց այդ բանին էլ արժանի են այն մարդիկը, որ միայն պարապութիւնից են սուրբ գիրքը կարդում և յետոյ գինետանը պատմում։

Քրիստէն։ Այո՛, բայց պէտք է կարդանք, որ ճշմարիտ ճանապարհից չշեղուենք։

Շուստ։ Այդ հասկանալի է. սակայն նրանք, որ հանգիստ կանգնում են բոլոր թփերի, աղբիւրների, սահմանաքարերի մօտ և խաչաձև փողոցների սկզբին ու ըստոյցներ անում, ճշմարիտ ճանապարհով գնացողներից չեն *)։

---

*) Կարելի է ոմանք զարմանան այս խոսակցութիւնների ընթացքեան վրայ, որին մասնակցում են անպիտան և հարբան մար-

Էրի։ Բայց ի՞նչպէս է լինում, դրա՛ցի, որ ասում են թէ՝ մարդ բան իմանալու համար ամեն տեսակ ծանր աշխատանք է կրում. իմ կարծիքով շատ բան իմանալն էլ ծանր է։

Ցօստ։ Այո՛, ի հարկէ, ամե՞ն բան ծանր է թւում, երբ խանգարում է մի աւելի լաւ և կարևոր բան իմանալու։ Ամեն բան պէտք է իմանալ գործելու համար, իսկ եթէ մէկը կամենում է շատ իմանալ միայն զբոյց անելու համար, այդ դէպքում հարկաւ այդպիսի իմանալն ոչնչի պէտք չէ։ Իմանալն ու գործելը կարելի է համեմատել մի արհեստի հետ։ Օրինակի համար, կօշկակարը պէտք է աշխատէ, այդ նրա գլխաւոր պարապմունքն է. բայց նա պէտք է ճանաչէ կաշին և առևտուր հասկանայ. այդպիսով միայն նա իր արհեստը լաւ կտանէ։ Այդպէս է և ամեն բանում։ Գործելն ու կատարելն ամեն մարդկանց համար միշտ գլխաւոր բանն է, իմանալն ու հասկանալն այն միջոցն է, որով նրանք գլխաւոր գործում յաջողութիւն են ունենում։ Այդ պատճառով էլ մարդու բոլոր գիտութիւնն այն ուղղութիւնը պէտք է ունենայ, ինչ որ պահանջում է գործելն ու կատարելը կամ թէ ինչ որ նրա գլխաւոր բանն է։

Էրի։ Այժմ սկսում եմ հասկանալ։ Երբ մարդ իր գլուխը լցնում է շատ և օտարօտի բաներով, գործի և ամենակարևոր եղած ժամանակը չէ կարողանում իր ուշքը կենդրոնացնել։

Ցօստ։ Հէնց այդ է ասածս։ Իւրաքանչիւրի գլուխն ու մտածմունքը պէտք է նրանով զբաղուի, ինչ որ աւելի իրեն է վերաբերում. ես գոնէ այդպէս եմ անում։ Ես ջրելու մարդագետիններ չունեմ, այդ պատճառով էլ գլուխս չեմ ցաւացնում թէ ի՞նչպէս պէտք ջրել. և մինչև որ սեպհական անտառ չունենամ, հարկաւ հոգացողութեամբ չե՞մ

դիկ. բայց կան իրերի և այնպիսի տեսակէտներ, որոնք հետաքրքրում են սրանց, ինչպէս մեզնից ամեն մէկին եւ կան այնպիսի վայրկեաններ, ուր նրանք լրջօրէն եւ իրենց յատուկ անմեղ ու ճշմարիտ կերպով են խօսում ու դատում ամեն բանի մասին։ Սըխալ կլինի, եթէ անկարգ և հարբան գիւղացուն մենք միշտ երեւակայենք իբրեւ անհասկացող եւ լուրջ իրերի մասին բոլորովին չմտածող մարդ։ Նա այդպէս է միայն այն ժամանակ, երբ իսկապէս չափազանց շատ է խմել։ Այժմ նրանք դեռ այդ աստիճանին չէին հասել։

մտածի թէ ինչպէս պէտք է անեմ, որ անտառս շատ լաւ պահպանեմ. սակայն իմ աղբի տակառների մասին միշտ մըտածում եմ, որովհետև դրանք են իմ անմնունդ մարգագետինները պարարտացնում։ Այդպիսով ամեն բան լաւ կլինէր, եթէ իւրաքանչիւրն իր գործի մասին մտածէր։ Կարելի է միշտ բաւականին շուտով շատ բան սովորել, եթէ իմանանք ճիշտ սովորելու կերպն ու ճշմարիտ գիտենալն անկարելի է, եթէ մերոնց ներկայութեամբ և գործից չսկսենք։ Այս եղանակով իմանալը կարգի է ընկնում մեր գլխում և հարկաւ եթէ այդպէս սկսենք՝ կեանքի մէջ աւելի կյառաջադիմենք։ Բայց պարապ զրուցատրութիւնների և օրացոյցի պատմութիւնների միջոցին կամ թէ ամպերի և լուսնի մասին տեսած երազներից խօսելով՝ կարելի չէ անբարոյական դառնալուց աւելի բան սովորել։

Էրի։ Այդ ուսումնարանումն է սկսւում։

Այս ամբողջ խօսակցութեան ժամանակ տանուտէրը կանգնած էր վառարանի մօտ, տաքանում էր, հազիւ էր լսում նրանց ասածները և համարեա թէ չէր մասնակցում նրանց զրուցատրութեանը։ Այդ դրութեան մէջ նա մինչև անգամ մոռացաւ գինին. այդ էր պատճառը, որ Էրիի և օտարականի խօսակցութիւնն այդչափ երկար տևեց։ Գուցէ և չէր կամենում խօսել, մինչև որ օտարականը դատարկեց իր բաժակը և դուրս գնաց։ Տանուտէրն սկսեց վերջապէս և անգիր արածի պէս ասաց, «Քահանան միշտ միևնոյնն է կրկնում՝ իբրև թէ աղքատներին ճնշում են։ Եթէ ոչ ոք չանէ այն, ինչ որ նա հասկանում է աղքատին ճնշել ասելով, այն ժամանակ—սատանան տանէ ինձ, եթէ այդպէս չէ—աշխարհումս ոչ մի աղքատ չէր լինի։ Բայց որ կողմն որ նայում եմ, իշխաններից սկսած մինչև գիշերապահը, պետական առաջին պալատից սկսած մինչև վերջին գիւղի համայնքը, իւրաքանչիւրն իր օգուտն է որոնում և այդ բանին արգելք եղողին ճնշում։ Առաջուայ քահանան հէնց ինքը գինետուն ունէր, իսկ ցորեն, հաճար և խոտն էլ ինձ պէս արժան էր վերցնում։ Աշխարհումս ամեն բան ճնշում է իրենից ստորին. ես էլ ճնշում եմ։ Ով մի բան ունի կամ մի բանի տէր է ուզում դառնալ՝ կամ պէտք է ճնշէ, կամ իր ունեցածն ուրիշներին ընծայէ և ինքը մուրացկա-

Նիւթեր դպրոցական պատմութեան համար . 329
Երկու հատուած մեր հին մատենագրութիւնից . 333
Ս. Նազարեանի նամակներ 336

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մի նոր հոսանք 340
+ Յովհաննէս Խաչումեան 342
Կրթութիւն (գերմաներէնից) 345
Ս. Պատարագի արարողութիւնը ըստ պ. Մ. Եքմալեանի . ԱՐՄՈԳ 361
ՌեՆտգէնի Գիւտը . Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ . . 363
Պեստալոցցու 150 ամեակը 371
Ծանուցումներ 372
Ստացուած գրքեր 373

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Լինարդ եւ Գերտրուդ . Պեստալոցցու . գերմ . թարգմ . ԻՍ . ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ . . . . 1—128

ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

1897-ին կը հրատարակուի տարեկան երկու գիրք։

Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուարի 1-ին, իսկ երկրորդը՝ յուլիսի 1-ին։

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորդագինն է 3 ռ.
Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի։

Հաւաքէն՝ Тифлисъ, свящ. Гюту Аганьянцъ